



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





LLM  
109







1999









Տ Ո Մ Ա Ր

Է Ե Տ Ա Ե Ե Կ Ա Ե





20002

ESTABLISHED




ՏՈՄԱՐ

Կ Ա Մ

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

№ 2311



Տ Ա Ր Ի Ո Յ

Ա Յ Խ Ա Տ Ա Ս Ի Ր Ո Ի Թ Ե Ա Մ Բ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ց

Ե • Տ Ա Ր Բ



Վ Ի Է Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ց Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Թ Յ Է



1913

11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11

11 11

2¢ 1394

4 1392-60



## Գ Ի Ր Բ Ի Ս Ն Ի Ի Թ Ե Ր Ը

Օրացոյց . . . . .	1	Ելեկտրական մարդ . . . . .	61
Տոմար . . . . .	25	Ելեկտրական ձուկ . . . . .	63
Հրէից [Թուական] . . . . .	29	Հով, Թաթառ . . . . .	67
Արաբացւոց " . . . . .	30	Ակուայ . . . . .	71
Քրիստոսի " . . . . .	31	Երեք առաքինութիւնք . . . . .	78
Հայոց " . . . . .	38	Զրոյ . . . . .	79
Իննեւտասներեակ . . . . .	40	Առածք . . . . .	81
Վերադիր . . . . .	41	Վրէժ . . . . .	83
Եօթներեակ . . . . .	42	Առաւօտ . . . . .	86
Գիր տարւոյ . . . . .	43	Մանկութիւն . . . . .	87
Երկիր, Արեւ . . . . .	45	Պողաւ բժիշկը . . . . .	88
Տարւոյս վարիչ աստղը . . . . .	50	Մանրավէպ . . . . .	95
Խաւարումներ . . . . .	50	Գարուն . . . . .	102
Իշխաններ . . . . .	52	Ծովն ու Սիրտ . . . . .	105
Որչափ կ'իշխեն . . . . .	55	Մահուն որսը . . . . .	106
Չափք ու Աշիւք . . . . .	57	Վարդ . . . . .	110
Տոկոսիք . . . . .	60	Քանի մը շոգենաւք . . . . .	112





## Տարեմուտք

Հայոց	[Թուականին	ՌՅԸ	Օգոստ .	19
Տաճկաց	"	1275	Յուլիս	29
Լատին	"	1859	Գեկտեմբ.	20
Հրեից	"	5619	Օգոստ .	28

Եղանակները	տես	երես	47
Խաւարուքները	"	"	50

Իննեւտասներեակ	14 .	տես	երես	40
Վերադիր "	ԻԵ .	"	"	41
Եօթներեակ "	Գ .	"	"	42
Գիր տարւոյ "	Բ .	"	"	43

## Համառոտորժ իռնք

Ա . քառ .	Առաջին քառորդ
զօր .	զօրավար
Ժ .	Ժամ
Լ .	լատինացւոց
Լր . Լ .	Լրումն լուսնի
Ծն . Լ .	Ծնունդ լուսնի
Հ	Հին տոմար
Հայր .	Հայրապետ
Հարս .	Հարսանիք
Հց .	Հայոց
մրգ .	մարգարէ
Ն	Նոր տոմար
Վ .	վայրկեան
Վ . քառ .	Վերջին քառորդ
Պ .	Տաճկաց
Տ	Տաճկաց տոմար
Քհ .	քահանայ







Օ Ր Ա Յ Ո Յ Յ

Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն Բ

	Հ	Տ	Ն	
Կ	19	16	31	Կիր. Հարսանիք:
Բ	20	17	1	Սարգիս զօր. Մարտիրոս, 14 զինուորք. Լ. Փեպրոսար:
Գ	21	18	2	Ատովմանք. Սուքիասանք. Լ. Տեառնընդառաջ:
Դ	22	19	3	Պահ.բ:
Ե	23	20	4	Ոսկեանք:
Ո	24	21	5	Պահ.բ. Լ. Ագաթար:
Շ	25	22	6	Իսահակ պարթ. Լ. Տորոթէա:
Կ	26	23	7	Կիր. Հարս.
Բ	27	24	8	Պիոն քահանայ. Մարկոս Արեթուայ եպիսկոպ. Կիւրեղ սարկ. Աբդաւ, Որմզդան, Սային, Բենիամին:
Գ	28	25	9	Ղեւոնդեանք:
Դ	29	26	10	Պահ.բ:
Ե	30	27	11	Վարդանանք. Օր մեռելոց:
Ո	31	28	12	Պահ.բ:

Ա Մ Ս Ա Ռ Ա Ծ Բ

Բողոք բնութիւն  
 Մտած է ի քուն.  
 Չարթննայ բռնի  
 Ու չելէ ոտքի,  
 Չէ նէ գէշ կ'աճի  
 Բոյս ու կենդանի:  
 Թող անձրեւաբեր  
 Ու թանձր ամպեր  
 Իջնան երկինքէն  
 Երկրը կնքեն:

Ներսի դիզ գուն ալ  
 Կրնաս հեղ մ' մտնալ.  
 Տեսնես ինչ բոյսեր  
 Արմատ են ձգեր:  
 Միշտ հսկող մարդուն  
 Գանձն է հաստատուն:

Առաստաձեռնոնթիռն ու Մեծաւնձնոնթիռն

Պորայի Սանզոյ անուամբ արքեպիսկոպոսը իր առատաձեռնութեամբն ու մեծանձնութեամբը մեծ անուն հանած էր: Օր մը իրեն ծանուցին որ պառաւ մը եկած ողորմութիւն կը խնդրէ: Հարցուց Սանզոյ. Բանի տարւան է, 70 տարւան է, ըսին, ու խեղճը ուտելու հաց չունի: Ուրեմն, ըսաւ Սանզոյ, իրեն օգնելու է, ու հրամայեց որ 25 Փրանք տան: Ասիկա շատ է, ըսաւ, սենեկապետը, մանաւանդ որ հրէայ ալ է: Ինչ, հրէայ, ըսաւ արքեպիսկոպոսը զարմանալով. ան ուրիշ բան է, ուստի 25 Փրանքի տեղ 50 Փրանք տուէք եւ իմ կողմանէս շնորհակալ եղէք ինձի ցուցրցած վստահութեանը համար:



Մարդուն մէկը ընկերութեան մը մէջ հաստատելու կը ջանար որ երկիրը կլոր չէ, ապա թէ ոչ, կ'ըսէր, քաշելու ատեն միօրինակ վեր ելլելու եւ կամ վար իջնալու վրայ պիտի ըլլայինք: Այո, այնպէս է, հայր, ըսաւ պզտի աղջիկը՝ խօսքին մէջ նետուելով. երէկ մօրս հետ հասակի վրայ խօսելու ատեննիդ մեր առջեւը կը տրանջայիք՝ որ դուք միշտ իջնալու վրայ էք ու կ'ըսէիք որ մենք երիտասարդները միշտ ելլելու վրայ ենք:







Օ Ր Ա Յ Ո Յ Ց

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ


	Հ	Տ	Ն	
Կ	23	21	7	Գ. Քառասնորդք պահոց . Տը- րիսին :
Բ	24	22	8	ԻԲ. օր Աղցից :
Գ	25	23	9	ԻԳ. " " Գ. Էլէկէլէ ուեր- դիւն անուշ :
Դ	26	24	10	ԻԴ. " " Միջին+ :
Ե	27	25	11	ԻԵ. " "
Ո	28	26	12	ԻԶ. " "

Գոց է երկինքն աչքերու ,  
Բայց միշտ բաց է սրտերու :  
Աստուած քեզ միշտ կը տեսնէ .  
Մի դարձընէր աչքդ իրմէ :

Ամէն հեղ,  
Ամէն տեղ,  
Սիրտ մ'անմեղ  
Ան մէկտեղ :

Ո՛վ պաշտպանի հարկաւորութիւնն ունի

Քրանքլին իբրեւ խմբագիր իր լրագրին մէջ Ֆիլատել-  
ֆիա քաղքին քանի մը անձանց հրապարակական անկանոն  
ու անիրաւ վարմունքին դէմ խիստ դատաստան ընելու ատեն՝  
իր պաշտպաններէն ու բարեկամներէն շատերը իրեն խրատ  
կու տային որ զգուշանայ, չըլլայ թէ իրեն վնաս մը հաս-  
ցընեն, խոհեմութիւնը պակասութիւնները՝ մանաւանդ մեծե-  
րունը՝ չտեսնել կու տայ : Քրանքլին օր մը ասոնց ամէնը ճաշի  
մը հրաւիրեց ու ճաշէն յառաջ իւրաքանչիւրոց թոյլ տուաւ  
որ իր կարծիքն ըսէ : Հիւրերը աս կամ ան եղանակը իրեն կ'ա-  
ռաջարկէին ու ապագայ թերթերուն մէջ աւելի խոհեմու-  
թիւն կը յանձնէին : Աերջապէս ծառան ծանոյց որ ճաշը  
պատրաստ է, հրամմեն բազմին : Հիւրերուն զարմանքը արտա-  
քոյ կարգի բան մըն էր՝ երբոր տեսան որ սեղանին վրայ ուրիշ  
բան չկայ՝ բայց եթէ խեղճ ողորմելի պուտտինկ (անգղիացւոց  
յատուկ խմորեղէնի պէս բան մըն է) մը ու աման մը ջուր :  
Իւրաքանչիւր կտոր մ'առաւ փորձեց, բայց վար խրկելն ան-  
կարելի կ'ըլլար : Քրանքլին միայն մեծ ախորժակով մը պուտ-  
տինկին կողը մտաւ ու սկսաւ ուրիշներն ալ յորդորել որ  
իրեն նմանին, չքաշուին հրամմեն ուտեն : Բայց անկարելի  
եղաւ պատառ մ'ալ ուտելը : Աերջապէս Քրանքլին երբոր տե-  
սաւ որ ամէն յորդորանք պարապ է՝ ոտք ելաւ ու ըսաւ . Սի-  
րելի բարեկամք, երբոր մարդ մընաեւ ցեխամման պուտտինկով  
ու ջուրով գիտէ նէ ապրիլ, ոչ թշնամիէ վախ կ'ունենայ եւ  
ոչ ալ պաշտպաններու հարկաւորութիւն, ուստի եւ ոչ ալ  
շողորթելու պարտք :



Տուներուն մէջ ամենէն գեղեցիկ հայլին ու աղոց ձեռքն  
ամենէն աղէկ քրիստոնէականը՝ Ծնողաց բարի օրինակն է :













Օ Ր Ա Յ Ո Յ Յ

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

	Հ	Տ	Ն		
Գ Դ Ե Ո Ղ Կ	1	29	13	Ժ. օր Յինանց :	
	2	30	14	ԺԱ. " "	
	3	1	15	ԺԲ. " "	Գ. Բամազան :
	4	2	16	ԺԳ. " "	
	5	3	17	ԺԴ. " "	
	6	4	18	ԺԵ. " "	Աշխարհամա- տրան կիւրակէ . Կանաչ կէ-բախէ :
Բ Գ Դ Ե Ո Ղ Կ	7	5	19	ԺԶ. " "	Հց. Աւետուսն :
	8	6	20	ԺԷ. " "	Գ. Սէնթեի-ե-վեր :
	9	7	21	ԺԸ. " "	
	10	8	22	ԺԹ. " "	
	11	9	23	Ի. " "	
	12	10	24	ԻԱ. " "	
Բ Գ Դ	13	11	25	ԻԲ. " "	Կարօր կէ-բախէ .
	14	12	26	ԻԳ. " "	
	15	13	27	ԻԴ. " "	
	16	14	28	ԻԵ. " "	Գ. Ահուրա-ե-թեի :
Ե Ո Ղ Կ	17	15	29	ԻԶ. " "	
	18	16	30	ԻԷ. " "	
	19	17	1	ԻԸ. " "	Լ. Մայիս :
	20	18	2	ԻԹ. " "	Երեւուսն խա- չին :
Բ Գ Դ Ե Ո Ղ Կ Բ Գ Դ	21	19	3	Լ. " "	
	22	20	4	ԼԱ. " "	
	23	21	5	ԼԲ. " "	Գ. Խարեւել :
	24	22	6	ԼԳ. " "	
	25	23	7	ԼԴ. " "	
	26	24	8	ԼԵ. " "	
	27	25	9	ԼԶ. " "	Գ. Գաթր կէ-թեի :
	28	26	10	ԼԷ. " "	
	29	27	11	ԼԸ. " "	
	30	28	12	ԼԹ. " "	

Արեւը ամսոյս ճին ժամը  
21ը 41 վայրկեան անցած  
Յուլին Յ նշանին մէջ կը  
մտնէ :

ԱՐԵՒՈՒՆ ԵԼԼԵԼԸ	ՅՈՐԵԿՈՒՆ ԵՐԿԱՅՆՈՒ- ԹԻՒՆԸ
-------------------	--------------------------------

1.11ժ.	1.13ժ.
10.10 ,, 36վ.	10.13 ,, 24վ.
19.10 ,, 12 ,,	19.13 ,, 48 ,,
28. 9 ,, 56 ,,	28.14 ,, 4 ,,

—Տես Յունուարին ծա-  
նօթութիւնները :

ԼՈՒՍՆԻՆ ՔԱՌՈՐԴՆԵՐԸ

2. ● Ծն. Լ. 6 ժ. 39 վ.  
Գարնան հովիտ :

8. ) Ա. քառ. 21 ժ, 41 վ.  
Անչրե-ոպ :

16. ② Լր. Լ. 10 ժ. 2 վ.

Մրրիւլից . անչրե-ոպ :

24. Ը վ. քառ. 13 ժ. 36 վ.  
Անչրե-ոպ . հրրիւլից :

ԱՄՍԱՌԱԾԻ

Ա՛Լ գարնան զեփեւոններ  
Մեզ կու տան հրաւեր  
Տուները թող տալու ,  
Ծաղիկներ սիրելու ,  
Դաշտերու գեղերու  
Ելելու այցելու :

Բնութիւն գործունեայ  
Օրինակ քեզ ըլլայ :  
Մարդն էր գործքէն  
Կ'արժեցընեն :




## Նաբոչեոն իբրևո դաստիարակ

Ասկէ քան տարիի չափ յառաջ Պ.ի արքեպիսկոպոսը Սափոյայի Ե-լէ-պէնի բաղնիքներուն գացած ըլլալով, օր մը կանչուեցաւ Նաբոչեոն կայսեր ատենէն երեւելի զօրապետի մը աղջկան համար, որն որ մեռնելու մօտ էր: Արքեպիսկոպոսը աղջկան հետ խօսելու ժամանակ՝ անոր գեղեցիկ կրօնական սկիզբները լսելով զարմացաւ ու խիստ սիրտը շարժած հարցուց. Ո՞վ քեզի սորվեցուց աս սկզբունքները: Տէր իմ, ըսաւ աղջիկը, Աստուծմէ ետքը Նաբոչեոն կայսեր պարտական եմ. ես ծնողացս հետ Ս. Հեղինէ կղզւոյն վրայ էի: Օր մը, դեռ 10 տարուան էի, կայսրը ինձի ըսաւ. Աղջիկս, դուն գեղեցիկ ես ու քանի մը տարի ետքը աւելի պիտի գեղեցկանաս. բայց դուն աս արտաքին հրապոյրովդ աշխարհքիս մէջ շատ վտանգներու պիտի հանդիպիս: Պիտի կարենամ անոնց դէմ կենալ՝ թէ որ հիմակընէ կրօնին ձեռօքը չես զինաւորիր ու պաշտպանուիր: Սակայն ան ալ կայ որ հոս կրօնի մէջ քեզ ո՞վ պիտի կրթէ. հայրդ կրօն չունի, մայրդ ալ նոյնպէս: Ես քեզ կը հոգամ, դուն վաղը ինձի եկուր եւ առջի դասը կ'ընդունիս: Այսպէսով, պատմեց աղջիկը, երկու տարի շաբաթը շատ անգամ կայսեր կ'երթայի, քրիստոնէականս ալ թեւիս տակ: Ամէն բան ինձի սորվեցուց, եւ երբոր 12—13 տարուան եղայ նէ՛ կայսրը ինձի ըսաւ. Հիմա ալ պէտք ես քրիստոնէական գործնական կենաց սկիզբն ընել ու Ս. Հաղորդութեան մօտենալ. Գաղղիայէն քահանայ մը բերել կու տամ, որն որ քեզ նոյնին ու զիս ալ մահուան պատրաստէ: Եւ իրօք ալ կատարեց:

## Աղեկ պատարախան

Մէկու մը հարցուցին թէ՛ Ինչո՞ւ համար մարդ իր ընկերին պակասութեանցը աւելի միտ կը դնէ քան թէ կատարելութեանցը: Որովհետեւ, պտտասխանեց, աւելի հետաքրքրութեամբ ու մտադրութեամբ կը նայինք արեւուն խաւարմանը քան թէ իր շլացուցիչ պայծառութեանը:



Ամէն մեծ բաները մեծ մարդերէն գործուած են. հարիւր հազար մարդ մէկտեղ չեն կրնար մեծ մարդ մը կազմել:







Օ Ր Ա Յ Ո Յ Ց

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Չ	Տ	Ն	
Պ	27	26	8 Նուէ, Մանէ :
Դ	28	27	9 Պահք :
Ե	29	28	10 Սարգիս, Բազոս :
Ո	30	29	11 Պահք. Լ. Սիրտ Յիսուսի :
Շ	31	1	12 Մովկիմոս, Կուարդրատիոս. Կ. Ջիւլիան :


Մայիս, ծաղեկ, սէր,  
 Պսակ են հիւսեր :  
 —————  
 Շուշան ես՝ կ'անցնիս,  
 Վարդ ես՝ կը թռումիս .  
 Առաքինի՞ ես,  
 Անթառամ մըն ես :

Հանդարտեցրել

Գաղղիայի առաջին յեղափոխութեան ատեն, ուր յեղափոխականներուն ատելութիւնը մասնաւոր եղանակաւ եկեղեցականաց վրայ դարձած էր, Մօրի քահանան իր խաղաղ բնակութեանը ծառատունկներուն շուքին տակ ժուռ գալով ժամանակ՝ մէկէն բազմութիւն մը զինքը պաշարեց. Ահա ազնուապետական (արիսդոքրատ) մը՝ կանչելով նախատելու ատեննին յանկարծ զարհուրելի եղանակաւ նոյն ժամանակները յաճախ գործածուող մահաբեր բառ մը լսուեցաւ. «Կանթեղին, կանթեղին», (նոյն ատենուան կախաղանները փողոցներու կանթեղներն էին) : Մօրի աս լաւ լինէ՞ս՝ առանց այլայլելու՝ հանդարտութեամբ ու արիութեամբ մը, Աեցէք, միտ դրէք, ըսաւ. Թէ որ ես կանթեղէն կախուելու ըլլամ՝ դուք աւելի լուսաւոր կը տեսնէք : Աս քաջասրտական խօսքին վրայ բոլոր բազմութիւնը պաղեցաւ մնաց ու կամաց կամաց ցրուեցաւ դնաց :

Ժամացոյցն ու Մարդ

Կրատեղանիս վրայ երեսուն ժամացոյց ունիմ, կ'ըսէր Կարոլոս Ե., եւ ասոնցմէ մէկն ալ իրարու համաձայն չեն : Ի՞նչպէս կրնամ ընել որ մարդիկ մի եւ նոյն եղանակաւ միաբան մտածել սորվին : Աս ըսելու ատեն՝ ծառաներէն մէկը անզգուշութեամբ սեղանին զարնուեցաւ ու բոլոր ժամացոյցները գետինն ինկան կտարեցան : Կարոլոս խնտալով ըսաւ ծառային. Գուն իզմէ աւելի երջանիկ ես. դուն զանոնք իրարու համաձայն ընելու միջոցը գտար :



Գուն ըրէ քու ձեռքէդ եկածն,  
 Ընելէքն իր գիտէ Աստուած :





# ՅՈՒՆԻՍ

Հագիրսն

## Օ Ր Ա Յ Ո Յ Ց

	Հ	Տ	Ն	
Կ	1	2	13	Գ. յետ Հոգեգալստեան. Բարեկենդան Լուսաւորչին. Ը Անտան պատուացի:
Բ	2	3	14	Եպիփան կիպրացի. ՊաՏք Լուսաւորչին:
Գ	3	4	15	Կոստանդիանոս, Հեղինէ:
Դ	4	5	16	ՊաՏք:
Ե	5	6	17	Թէոդիտոն, Թալիլէոս, 7 Կոստանք Անկիւր.
Ո	6	7	18	ՊաՏք:
Շ	7	8	19	† Գիւտ նշխարաց Գրիգորի Լուսաւորչին:
Կ	8	9	20	Գ. յետ Հոգեգալստ. Հարս.
Բ	9	10	21	Ներսէս, Խաղ. Լ. Ալոյիզիոս:
Գ	10	11	22	Դանիէլ մրգ. 3 Մանկուհք:
Դ	11	12	23	ՊաՏք:
Ե	12	13	24	ՍաՏակ, Մեսրոպ:
Ո	13	14	25	ՊաՏք:
Շ	14	15	26	Չաքարիա մրգ. Ոնոփրիոս:
Կ	15	16	27	Ե. յետ Հոգեգալստ. Հարս.
Բ	16	17	28	Տրդատ, Աշխէն, Խոսրովիդուխտ:
Գ	17	18	29	Արիստակէս, Արթանէս, Յուսիկ, Գրիգորիս, Դանիէլ:
Դ	18	19	30	ՊաՏք:
Ե	19	20	1	Եղիսէ մրգ. Լ. Յուլիս:
Ո	20	21	2	ՊաՏք. Լ. Այցելութիւն:
Շ	21	22	3	12 Առաքեալք, Պետրոս, Պողոս:
Կ	22	23	4	Զ. յետ Հոգեգալստեան. Բարեկենդան Աարգավառի:
Բ	23	24	5	Ա. օր պաՏոց Աարդ.
Գ	24	25	6	† Բ. " " " Ծնունդ Յովհաննու կարապետին:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Արեւը ամսոյս 10ին՝ 40 վայրկեան անցած խեցգեանին 69 նշանին մէջ կը մտնէ:

ԱՐԵՒՈՒՆ ԵԼԼԵԼԸ	ՅՈՐԵԿՈՒԱՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ
1. 9ժ. 6վ.	1. 14ժ. 54վ.
10. 9,, 2,,	10. 14,, 58,,
19. 9,, 7,,	19. 14,, 53,,
28. 9,, 12,,	28. 14,, 48,,

—Տես Յունուարին ծանօթութիւնները:

ԼՈՒՍՆԻՆ ՔԱՌՈՐԳՆԵԼԸ

6. ) Ա. քառ. 14ժ. 41վ.	Անձրե-ախառն հովեր:
14. ③ Լ. Լ. 15ժ. 40վ.	Մէյ հը Բոյ մէյ Տ'անձրե-:
22. ④ Ա. քառ. 13ժ. 10վ.	Ա-էլ Բոյ:
29. ⑤ Ծն. Լ. 3ժ. 55վ.	Զ.վ:

## ԱՄՍԱՌԱԾՔ

Երկինքը յստակ, երկրը խիստ տաք. Արեւը դուրսէն, Տաքութիւններսէն, Մարդու մարմինէն Բրաինք կը քամեն, Ուսէն նոյն մարդուն Բաճկոնք կ'առնուն, Խեղճ մարդուն բերնէն Ուժեք կը թափեն:



				Օ Ր Ա Յ Ո Յ Յ	Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ
Գ	25	26	7	Գ. օր պահոց վարդ.	Մտիր ջուր շուտով.
Ե	26	27	8	Գ. " " "	Ապրի՛ն գետն ու ծով:
Ո	27	28	9	Ե. " " "	
Շ	28	29	10	Տօն Տապանակին. Նախապիտոյ:	Շատ բան կայ անուշ:
Կ	29	30	11	Է. յետ Հոգեդալտեան. վարդավառ:	Քիչերն են անփուշ:
Բ	30	1	12	Ի. օր վարդ. Օր մեռելոց. Գ. Ձի-հի՛նք:	Ունի ամէն բան Իր յատուկ դարման: Ինչ որ խորհրդով՝ Է միշտ սպահով:

Հաշտեցունել

Անգղիայի լրագիրներուն մէկուն մէջ կը կարդանք. որ երկու իրարու նախանձորդ անգղիացիք իրար մեռցնել ուզելով մենամարտութիւն ընելու կ'որոշեն: Բայց նոյն ատենը ատաղձագործ մը վրայ հասնելով կը մօտենայ ու կ'աղաչէ իրենց որ իրեն շնորհք մը ընեն որ կարենայ անոնցմէ ինկող մեռնողին մարմինը թաղելով վերջին հանգիստը տալ: Ա՛ չսպասուած առաջարկութիւնը երկուքին վրայ ալ անանկ սարսափ մը բերաւ որ իրարու հետ հաշտուեցան ու խաղաղութեամբ իրարմէ բաժնուեցան գացին:

Երկիրն ու Մարդ

Արկիրը, ինչպէս յայտնի է, երկու տեսակ շարժում ունի, մէյմը իր առանցքին վրայ, մէյ մ'ալ արեւուն շորս դին: — Մարդկային ընկերութեան անդամ եղող անձ մ'ալ երկու կեանք ունի. Հրապարակական կեանք ու Առանձնական կեանք: Ետքինը իր ու ընտանեացը եւ տան շորս դին պիտի դառնայ իսկ առջինը աէրութեան կամ հասարակութեան բարւոյն պիտի դիմէ՝ ինչպէս երկիրը արեւուն կը դիմէ եւ առանց արեւի մութ մարմին մըն է եւ ոչ ալ իր առանցքին վրայ կրնայ շարժիլ: Անձնասէրը Պտղոմեան համադրութեան կը հետեւի, որուն մէջ երկիրը կը կենայ ու արեւը եւ բովանդակ աստղները իր շորս դին կը դառնան, ինչպէս որ անձնասէր մը կը բաղձայ որ բոլոր աշխարհք իրեն համար շարժի իրեն ծառայէ:



Ինչ է որթոյն կտրելը, նոյն է մարդուն կրելը:





**Օ Ր Ա Յ Ո Յ Յ**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ**

	Հ	Ց	Ն	
Գ	1	2	13	Գ. օր Աարդ.
Դ	2	3	14	Պահ.բ:
Ե	3	4	15	Եսայի մարդ.
Ո	4	5	16	Պահ.բ. Լ. Տօն Հանդերձից Ս. Աստուածածնի:
Շ	5	6	17	Թաղէոս առ. Սանգուխա:
Կ	6	7	18	Բ. յետ Աարդ. Հարս.
Բ	7	8	19	Շուշան:
Գ	8	9	20	Կիպրիանոս, Յուստիանէ. Լ. Մարգարիտա. Գ. Արեֆէ:
Դ	9	10	21	Պահ.բ. Գ. Գորգուան պայրաճը:
Ե	10	11	22	45 վկայք, Եւփիսէ, Քրիստինէ:
Ո	11	12	23	Պահ.բ:
Շ	12	13	24	Ադամ, Աբէլ, Սէթ, Ենոք, Ենոք, Նոյ, Մեղքիսեդեկ, Աբրահամ, Սահակ, Յակոբ, Յովսէփ, Մովսէս, Ահարոն, Եղիազար, Յեսու, Սամուէլ եւ այլ նախահարք:
Կ	13	14	25	Գ. յետ Աարդ. Հարս.
Բ	14	15	26	Սահակ, Յովսէփ որ ի Կարին:
Գ	15	16	27	Ովսէէ, Ամովս, Միքիաս, Յովէլ, Աբդիու, Նաուու, Ամբակում, Յովնան, Սոփոնիա, Անդէոս, Զաքարիա, Մաղաքիաս:
Դ	16	17	28	Պահ.բ:
Ե	17	18	29	Աթանազինէս, 10 աշակերտք նորա եւ 5 վկայք. Գ. Էլէէէ էյեաֆ պահար:
Ո	18	19	30	Պահ.բ:
Շ	19	20	31	Անտոնինոս, Թէոփիլոս, Անիկատոս, Փոտինոս:
Կ	20	21	1	Գ. յ. Աարդ. Հարս. Լ. Օֆոսարս:

Արեւը ամսոյս 11ին ժամը 11ը 34 վայրկեան անցած Առիւծին Ջ նշանին մէջ կը մտնէ:

ԱՐԵՒՈՒՆ ԵԼԵԼԸ	ՅՈՐԵԿՈՒԱՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ
1. 9ժ.15վ.	1.14ժ.45վ.
10. 9,, 26,,	10.14,, 34,,
19. 9,, 43,,	19.14,, 17,,
28.10,, 2,,	28.13,, 58,,

—Տես Յուլիուարին ծաւօթութիւնները:

- ԼՈՒՍՆԻՆ ՔԱՌՈՐԴՆԵՐԸ
- 6. Ս. քառ. 3 ժ. 15 վ. Խառնակ:
  - 14. Չ. Լ. 6 ժ. 46 վ. Տառ:
  - 21. Շ. քառ. 21 ժ. 10 վ. Տօթափին պարզ:
  - 28. ● Ծն. Լ. 11 ժ. 51 վ. Տառ. Անչրե-ոք:

**ԱՄՍԱՌԱԾՔ**

Նետերէն արեւու Փախչելու ես հեռու: Ծառերու զով շուքին կը արուի պատիւն հին: Տաքն ու պաղ իրարու Խառնելն է գիտնալու:



Օ Ր Ա Յ Ո Յ Ց

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

	Հ	Տ	Ն		
Բ	21	22	2	Մակարայեցիք՝ Եղիազար, Շամունէ, 7 օրդիք նորա:	Տաք մարմնոյն պաղ բաղնիք, Տաք գլխոյն պաղ քամիք, Տաք կուրծքին պաղ պտուղ Կը նստին քիչ մը սուղ:
Գ	22	23	3	Սոփիա, Պիատիա, Ելպիա, Ագապի:	
Դ	23	24	4	Պահ.բ. Լ. Գոմինիկոս:	
Ե	24	25	5	Քրիստափոր, Կալինիկէ, Ակիւլինէ. Գ. Աիւրի էյեաֆ պահար:	Բնութիւնը չեցատկեր, Աստիճանաւ կ'ելլայ վեր: Վայ անոր որ կ'ուզէ Կանոն օրէնք զատ ասկէ:
Ո	25	26	6	Պահ.բ. Լ. Վարդավառ:	
Շ	26	27	7	Պեարոս Տայր. Աբիսողոմ սրկ.	
Կ	27	28	8	Ե. յետ Վարդ. Հարս.	
Բ	28	29	9	Թէոդոս, Մանկունք Եփեսոսի:	
Գ	29	1	10	Կիրակոս, Յուղիտա. Լ. Լաւրենտիոս. Գ. Մահարէ՛՛ 1275:	Թէ արեւն ունի Իր թոյնը գաղտնի, Չկարծած լոյսէդ Գեղեցկութենէդ Հուր կ'ելլէ կ'այրէ. Դեղ դարման ուշ է:
Դ	30	2	11	Պահ.բ.:	
Ե	31	3	12	Վահան գողթն. Տրիփոն. Գորդիոս, Պողիկտոս, Գրիգորիս:	

Մէք

Պաղղիայի արեւմտեան կողմերը Լըֆոր անուամբ խաթուն մը մեծ վախ ունենալով իր էրկանը կենացը վրայ, որն որ յեղափոխութեան ատեն դաւակցութեան ամբաստանութեամբ բանտ դրուած էր, ստակի զօրութեամբ Տրաման առաւ որ իրեն հետ հեղ մը տեսնուի: Իրիկուան դէմ բանտ մտաւ. վրան ալ կրկին հագուստ հագած էր, մէկը հանեց իր էրկանը տուաւ ու կնկան հագուստով զինքը բանտէն փախուց եւ ինքը անոր տեղ նստեցաւ: Երկրորդ օրը մէյմ'ալ իմացուեցաւ որ կնիկը էրկանը տեղ բանտը մնացեր է. քաղաքապետը կնիկը առջեւը կանչեց ու սպառնալից ձայնով մը պռուաց. Չար զքեզ. ի՞նչ ըրիր: Ես իմ պարտքս ըրի, դուն ալ քու կինդ ըրէ, պատասխանեց քաջասիրտ կնիկը:

Յաղթել

Ալվիանոյ Վենետացւոց զօրապետը Անետէլլայի պատերազմին մէջ Լուդովիկոս ԺԲ.էն յաղթուելով ու գերի բռնուելով՝ արտաքոյ կարգի սրամտութեանը ատեն՝ սկսաւ թագաւորին դէմ անարգական խօսքեր զրուցել: Լուդովիկոս ԺԲ.ին պալատականները զինքը յորդորեցին որ վրէժ առնու: Թագաւորը հանդարտութեամբ մը պատասխանեց. Ալվիանոյին յաղթեցի. հիմա կ'ուզեմ իմ անձիս ալ յաղթել:





**Օ Ր Ա Յ Ո Յ Ց**

**Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ**

	Հ	Տ	Ն	
Ո	1	4	13	Պահք:
Ղ	2	5	14	Աթանաս, Կիւրեղ. Գրիգոր աստուած. վլաս, Ռնեսիմոս:
Կ	3	6	15	Զ. յետ վարդ. Հարս. Լ. վերափոխումն:
Բ	4	7	16	Սեղբեստրոս, Կոստանդիանոս. Մարուսթա. Լ. Ռոքոս:
Գ	5	8	17	Եւգինէ, Փիլիպպոս, Կղոզիէ, Սերգիոս, Ապիտոն, 2 ներքինիք. Եւգինէոս, Մակարիոս, Վաղերիոս, Կանդիտոս, Ակիւղաս:
Դ	6	9	18	Պահք:
Ե	7	10	19	Կուռնելիոս, Շմաւոն ազգական քրիստոսի, Պողիկարպոս, Արեւելեան վկայք. Գ. Ալուրէի-նի-:
Ո	8	11	20	Պահք:
Ղ	9	12	21	Եփեսոսի ժող. 200 Հայրապետք:
Կ	10	13	22	Է. յետ վարդ. Բարեկենդան Աստուածածնի:
Բ	11	14	23	Ա. օր պահոց Աստ.
Գ	12	15	24	Բ. " " "
Դ	13	16	25	Գ. " " "
Ե	14	17	26	Դ. " " "
Ո	15	18	27	Ե. " " "
Ղ	16	19	28	Շողակաթ. Նասախարիտ. Լ. Օգոստինոս:
Կ	17	20	29	Վերափոխումն:
Բ	18	21	30	Ի. օր վեր. Օր մեռել. Լ. Ռոզա:
Գ	19	22	31	Գ. " " Թուական Հայոց ՌՅԸ:
Դ	20	23	1	Դ. " " Պահք. Լ. Սեպտեմբեր:
Ե	21	24	2	Ե. " " "
Ո	22	25	3	Զ. " " Պահք:

Արեւը ամսոյս 11ին ժամը 18ը 50 վայրկեան անցած Կոյսին արնշանին մէջ կը մտնէ:

ԱՐԵՒՈՒՆ  
ԵԼԼԵԼԸ

ՑՈՐԵԿՈՒԱՆ  
ԵՐԿԱՅՆՈՒ-  
ԹԻՒՆԸ

1.10ժ.12վ.	1.13ժ.48վ.
10.10,, 29,,	10.13,, 31,,
19.10,, 52,,	19.13,, 8,,
28.11,, 23,,	28.12,, 37,,

— Տես Յունուարին ծանօթութիւնները:

ԼՈՒՍՆԻՆ ԲԱՌՈՐԴՆԵՐԸ

4. ) Ա. քառ. 18ժ. 50 վ.	Պարզ. Տառ:
12. ☉ Լր. Լ. 21ժ. 28 վ.	Անչրե-ոք:
20. ☾ վ. քառ. 3ժ. 41 վ.	Մբբե-բեր:
26. ☽ Ծն. Լ. 21ժ. 49 վ.	Անչրե-ային:

**ԱՄՍԱՌԱԾՔ**

Պատուհներն հասուն.  
Բոյսերն կանկ կ'առնուն.  
Արեւն իր գործքն է  
Կը ըննցընէ:

Արեւն այրած,  
Երկիրն կրած,  
Տնկերն ինկած,  
Մարդիկ մրկած.



Օ Ր Ա Յ Ո Յ Յ

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ի Ն Բ

	Հ	Տ	Ն	
Շ	23	26	4	Է. օր վեր.
Կ	24	27	5	Ը. " "
Բ	25	28	6	Թ. " "
Գ	26	29	7	* Յովակիմ, Աննա, Կանայք իւղարերք:
Դ	27	1	8	Պահք. Լ. Ծնունդ Ս. Կուսին. Գ. Սփէր.
Ե	28	2	9	Բարեչաս, Յ աշակերտք նորա, Գրիգոր ակր, Պիոն, Ստեփանոս ուլն. Արդմսէհ:
Ո	29	3	10	Պահք:
Շ	30	4	11	Թոմաս առաք.
Կ	31	5	12	Գ. յետ վերափ. Հարս. Լ. Անուն Ս. Կուսին:

Աւ ամենուն  
 Հանգստութիւնն  
 Աչքէ սրտէ  
 Կը ծխծխէ:

---

Վայելու ատենն  
 Մի հաներ ձեռքէն:

---


Մի մտնար զԱստուած.  
 Փառք տուր իր շնորհաց:  
 Օրհնութեամբ լեցուն  
 Օրերդ զարթնուն.  
 Գործքերով բարի  
 Օրերդ պսակի:

Ներք

Յովհաննէս Բ. Պուրպոնի դուքսը Անգղիայի մէջ Յովհաննէս Թագաւորին տեղ պատանդ կեցած ատենը՝ իր աւատառու մեծամեծներէն շատերը՝ հեռաւորութեան ժամանակ իր ստացուածները իրենց սեփհականած էին: Երբոր Գաղղիա դառնալու եղաւ՝ իր պաշտօնատէրներէն մէկը՝ որ տիրոջ փնաս հասցրնողներուն ճիշդ ցանկը առած էր, նոյնը իշխանին առջին դրաւ՝ որ յանցաւորները արդար պատիժնին գանան: Բայց, ըսաւ դուքսը, ունիս նաեւ ան ամէն ծառայութեանց ցանկը՝ զորոնք նոյն աւատառուները ինծի ըրած են ատենօք: Չէ, պատասխանեց պաշտօնատէրը: Ուրեմն աս Թուղթը օգուտ մը չունի, ըսաւ դուքսը ու առաւ կրակ նետեց:

Բարեկամութիւն

Մարդուն մէկը իր բարեկամներէն մէկուն մեծ գումար մը փոխ տուած էր: Ասիկա երկայն ատեն իր պարտքը չհատուցանելով՝ կը նայէր որ որչափ կարելի է նէ իրմէ փախչի: Բայց օր մը դէպքը անանկ բերաւ որ երկուքը դիմացէ դիմաց եկան: Փոխատուն մէկէն՝ կեցիր ըսաւ ու ձեռքէն բռնեց ըսելով. Շուտ՝ դարձուր ինծի ստակս եւ կամ չէ նէ բարեկամս:



Անոնց հետ աւելի տեսնուէ՝ որոնցմէ կրնաս բան սորվել, կամ անոնց հետ՝ որոնց կրնաս բան սորվեցրնել:







				Օ Ր Ա Յ Ո Յ Յ	Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք
	Հ	Տ	Ն		
				սիւնակ. Պահք Արագայ խա- չին. Լ. Ֆրանչիսկոս ասի.	Ելեր երգէ, Պարէ ցատկէ,
Գ	23	28	5	Փերրոնիա, Մարիանէ:	Ունի Սեպտեմբեր Նաեւ գէշ օրեր, Մեծ մրրիկներ.
Դ	24	29	6	Պահք:	Դուն կարկտաբեր Օգերէն վախցիր, Եղեր մտադիր:
Ե	25	30	7	Անթիմոս, Երանոս:	Կեանք, ուրախութիւն Ու կարօտութիւն, Երեք ամենէն Անստոյգներն են.
Ո	26	1	8	Պահք. Լ. Պրիճիթա. Գ. Բե- դի-Լ Էլիէ:	Բայց մահ, բաժանում, Յաւիտեանք անհուն, Են ամենստոյգ:
Շ	27	2	9	Գէորգ զօր. Ադոկտոս, Ռո- մանոս:	Մի ըլլար սարուկ:
Կ	28	3	10	Գ. յ. խ. Արագայ խաչ. Հարո.	
Բ	29	4	11	Դաւիթ դունեցի, Ղամբէոս, Ղամբէուհի:	
Գ	30	5	12	Եւստաքէոս, Թէոպիստէ եւ 2 որդիք նոցա. Երմոնէ, Նէքտա- ռինէ:	

Չարիստորոնթիւն

Էտմոնտ Բ. անգղիացի իշխանը ու Գանուլթ Բ. դա-  
նիացի իշխանը Անգղիայի գահին համար կը կռուէին: Հինգ  
մեծ պատերազմ բացած էին եւ հետեւութիւն մը չէր եղած.  
վերջապէս որոշեցին որ մենամարտութեամբ բանը լմրնցրնեն:  
Օրը որոշուեցաւ, հաւասար զօրութեամբ երկու իշխան իրարու  
զարնուելու սկսան: Բայց երկու կողմն ալ անյաղթ մնաց եւ  
ամենայն ջանք ու ճիգ որոշում մը յառաջ չբերաւ. վերջապէս  
Գանուլթ սուրին ճոթը գետին կռթնցրնելով բարձր ձայնիւ  
ըսաւ Էտմոնտին. Քաջ իշխան, բաւական զարնուեցանք. հա-  
ւասարապէս մեր քաջասրտութիւնը ցուցրցինք. հիմա ալ մեր  
չափաւորութիւնը ցուցրնենք. այսօրուան փառքը մէջերնիս  
բաժնելու ատեն՝ բաժնենք նաեւ թագաւորութիւնը՝ մեր  
կռուոյն աղբիւրը: Աս խօսքին Էտմոնտ հաւնելով՝ երկու հա-  
կառակորդ իրարու փաթթուեցան իրար պագան եւ երկու  
կողման զօրքն ալ Գանուլթը հիւսիսային ու Էտմոնտը հարա-  
ւային Անգղիայի թագաւոր հրատարակեցին:

Ժողովն ու Պարծանք

Գաղղիացւոյն մէկը երկաթուղւոյն վայրաշարժը կամ  
չողեշարժ մեքենան տեսնելով՝ Ատենօք, ըսաւ, փառքն ու պար-  
ծանքը ծուխ մըն էր, հիմա ծուխը փառք ու պարծանք է եղեր:





Օ Ր Ա Յ Ո Յ Ց

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

	Հ	Տ	Ն	
Դ	1	6	13	Պահ.բ. Լ. Եղուարդ:
Ե	2	7	14	Սահակ, Համազասպ:
Ո	3	8	15	Պահ.բ. Լ. Թերեզիա:
Շ	4	9	16	72 աշակերտք:
Կ	5	10	17	Դ. յեա խաչի. Հարս.
Բ	6	11	18	Փոկաս, Երանոս:
Գ	7	12	19	Թեկղ, Վառվառ.իա. Գ. Մեվլա-պ:
Դ	8	13	20	Պահ.բ.:
Ե	9	14	21	Պանդալէոն, Երմոզայոս, Եւ-պրաքսէ. Լ. Ուրսուլա:
Ո	10	15	22	Պահ.բ.:
Շ	11	16	23	Կալիստրատոս, 49 վկայ.բ, Ղուկ-կիանոս քհ.
Կ	12	17	24	Ե. յեա խաչի. Հարս.
Բ	13	18	25	Գիւլունչև. Գրիգորիսի Աղուա-նից կաթ. Թաթուլ, Վարոս, Թոմաս, Անտոն, Կրոնիդէս, 7 խոտածարակք:
Գ	14	19	26	Անանիա առաք. 12 վարդա-պետք, Մատաթիա, Բառնա-բաս, Փիլիպպոս, Յովհաննէս, Շիղա, Սիդուանոս:
Դ	15	20	27	Պահ.բ.:
Ե	16	21	28	Գիոնեսիոս արիսպ. Տիմոթէոս, Տիտոս, այլ աշակերտք Պօղոսի:
Ո	17	22	29	Պահ.բ.:
Շ	18	23	30	Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս. Ղուկիանոս քհ. Տարագոս, Պրոքոս, Անդրոնի-կոս, Պեղազիա:
Կ	19	24	31	Զ. յեա խաչի. Հարս.
Բ	20	25	1	Ղուկիանոս հարիւր. Յովսէփ Աստուածահայր, Յովսէփ ա-րիմ. Ղազարոս, Մարթա, Մա-

Արեւը ամսոյս 12ին ժա-մը 1ը 18 վայրկեան անցած կարիճին Ռ նշանին մէջ կը մտնէ:

ԱՐԵՒՈՒՆ ԵԼԼԵԼԸ	ՑՈՐԵԿՈՒՆ ԵՐԿԱՅՆՈՒ-ԹԻՒՆԸ
1.12ժ.55վ.	1.11ժ. 5վ.
10.13,, 27,,	10.10,, 33,,
19.13,, 42,,	19.10,, 18,,
28.14,, 4,,	28. 9,, 56,,

— Տես Յունուարին ծա-նօթութիւնները:

- ԼՈՒՍՆԻՆ ՔԱՌՈՐԴՆԵՐԸ
- 3. Ս. քառ. 9 ժ. 9 վ. Փոփոխական:
  - 10. Ս. Լ. 22 ժ. 54 վ. Պարզ:
  - 17. Ս. քառ. 16 ժ. 17 վ. Մէյճը պարզ Մէյճը խառնակ:
  - 25. Ս. Լ. 2 ժ. 2 վ. Անյրեւոյ. Հովոյ:

ԱՄՍԱՌԱԾԻ

Օրն է կիսաբաց, Բնութիւն մարած, Եւ կամաց կամաց Մեր ներքին կենաց Օրերն կը հասնին. Տուր բարեւ վերջին



Օ Ր Ա Յ Ո Յ Յ

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

	Հ	Տ	Ն	
				րիամ. Լ. Նոյեմբեր. Տօն ամե- նայն սրբոց :
Գ	21	26	2	Թեոդոսիոն, Ջենոն, Մակար, Եղորսիոս, Ռոմելոս :
Դ	22	27	3	Պահք :
Ե	23	28	4	Խարիթեանք, Արաեմիս :
Ո	24	29	5	Պահք :
Շ	25	30	6	Դեմետրիոս, Բասիլիսկոս. Օր նահատ. Տ. Կոմիտասայ :
Կ	26	1	7	Է. յետ խաչի. Գիւտ խաչ. Հարս. Գ. Գառլժ. Ռեպի-Լ Խիբր :
Բ	27	2	8	Անաստաս, Վարոս, Թեոդո- րիոն եւ որդիք նորա եւ որ ընդ նմա :
Գ	28	3	9	Հիպերիքեանք :
Դ	29	4	10	Պահք :
Ե	30	5	11	Սեւերիանոս, Բարեւլաս, 84 ա- շակերտք նորա :
Ո	31	6	12	Պահք :

Բլուրին գաշտին,  
Գեղերու յարկին,  
Տես ինչպէս մէկէն  
Արեւն աս երկրէն,  
Երկիրը տունկէն,  
Տունկը կանանչէն,  
Կանանչն տերեւէն,  
Տերեւը ծառէն,  
Ծառն ալ իր շուքէն,  
Շուքն ալ իր հիւրէն,  
Հիւրն ալ ամենէն  
Հրատեշտ կ'առնեն :

Խելօք պանդուխտներ  
Ջիրենք չեն կապեր  
Աս կամ ան երկրին,  
Ճամբուն աս ծաղկին,  
Ան շուքին հեշտին,  
Որ պիտի անցնին :  
Քիչ կապ ունեցիր,  
Յոյժդ երկինք դիր :

Խորատ

Իշխանի մը բարեկամներէն մէկը իրեն գալով աղաչեց  
մէկու մը համար որ պաշտօն մը ընդունի : Իշխանը ուրիշ կող-  
մանէ տեղեկանալով իմացաւ որ նոյն անձը ան պաշտօնին  
բոլորովին անյարմար է եւ իր բարեկամը ստակի համար միջա-  
մտութիւն ըրած է : Առաւ քսակ մը ստակ ու բարեկամին  
ըսաւ. Առ աս ստակը, որն որ զիս չիկրնար աղքատացընել.  
բայց մի խնդրեր իզմէ այնպիսի շնորհք մը՝ որն որ կրնայ զիս  
անիրաւութեան տանիլ :

Հանդարտ միտք

Անգղիայի Թոմաս Մորոս խորհրդականը՝ Հենրիկոս Ը. ը  
Անգղիայի թագաւոր ճանչնալ չուզելուն համար՝ զարհուրելի  
տանջանքներով մեռնելու դատապարտուեցաւ : Ատենը արդէն  
մօտեցած էր, մէյմ' ալ իրեն ծանուցին որ թագաւորին  
գթութիւնը իր տանջանքները վերցուց ու պարզ գլխատմամբ  
մը պիտի մեռնի : Պատասխանեց Թոմաս հանդարտութեամբ  
մը. Աստուած տար որ նոյն գթութիւնը իզմէ վերցուցածը  
իմ բարեկամներու վրայ չաւելցընէր :





**Օ Ր Ա Յ Ո Յ Յ**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ**

	Հ	Տ	Ն	
Շ	1	7	13	Բարաղամ, 7 Մանկուհի Եփե- սոսի:
Կ	2	8	14	Ը. յեա խաչի. Հարս.
Բ	3	9	15	Ստեփանոս Հո. հայր. քահա- նայք, սարկաւազք, եւ ժողո- վուրդք որ ընդ նմա:
Գ	4	10	16	Ակիփսիմոս, Յովսէփ քահ. Այիթալաս, Պղատոն:
Դ	5	11	17	Պահք:
Ե	6	12	18	Մեարոփանոս, Աղէքսանդրոս, Պօղոս, Մարկիանոս, Մար- տիրոն:
Ո	7	13	19	Պահք:
Շ	8	14	20	* Գաբրիէլ, Միքայէլ, ամենայն երկնային զօրք:
Կ	9	15	21	Թ. յ. խ. Հարս. Լ. Ընծայումն:
Բ	10	16	22	Մելիտոս, Մինաս, Մելիտոս, Բուրա, Շինու Լ. Չիչիլիա:
Գ	11	17	23	Յովհաննէս ոսկերերան:
Դ	12	18	24	Պահք:
Ե	13	19	25	Գուրիաս, Սամոնաս, Աբիբաս, Ռոմանոս, Մանուկն խոստո- վանող, Հիւսիքոս. Լ. Կատարի- նէ:
Ո	14	20	26	Պահք:
Շ	15	21	27	Փիլիպպոս առաք.
Կ	16	22	28	Ա. Յիսնակաց բարեկենդան:
Բ	17	23	29	Ա. օր Յիսն. պահոց.
Գ	18	24	30	Բ. " " " "
Դ	19	25	1	Գ. " " " " Լ. Գիւ- րիսի:
Ե	20	26	2	Գ. " " " " " "
Ո	21	27	3	ԻԵ. " " " " " "
Շ	22	28	4	Գրիգոր սքանչ. Նիկողայոս,

Արեւը ամսոյս 10ին ժա-  
մը 22ը 34 վայրկեան ան-  
ցած Աղեղնաւորին → նշա-  
նին մէջ կը մտնէ:

ԱՐԵՒՈՒՆ  
ԵԼԼԵԼԼ

ՅՈՐԵԿՈՒՆ  
ԵՐԿԱՅՆՈՒ-  
ԹԻՒՆԸ

1.14ժ.12վ.	1. 9ժ.48վ.
10.14,, 30,,	10. 9,, 30,,
19.14,, 44,,	19. 9,, 16,,
28.14,, 52,,	28. 9,, 8,,

— Տես Յունուարին ծա-  
նօթութիւնները:

ԱՌԻՍԵՆ ՔԱՌՈՐԴՆԵՐԸ

- 2. ) Ա. քառ. 5 ժ. 45 վ.
- Անյրի-սո. Տիւր:
- 9. ☉ Լ. Լ. 11 ժ. 35 վ.
- Ց-րոս-բաց:
- 16. ☾ վ. քառ. 2 ժ. 49 վ.
- Խառնակ:
- 23. ● Ծն. Լ. 19 ժ. 29 վ.
- Անյրի- . 2ի-ն:

**ԱՄՍԱՌԱԾՔ**

Նոյեմբերին  
Որսի ամիս:  
Մէգ ու մշուշ  
Մահուան են գոյժ,  
Են շունչ վերջին  
Մօր մը կեանքին.  
Մօր բնութեան,  
Պատւի նման:



Օ Ր Ա Յ Ո Յ Ց

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Գ

	Հ	Տ	Ն		
				Միւռոն . կղեմէս , Բաղարատ , Գրիգոր աղբ .	ԱՏա կարճ արեւ , Բայց երկայն անձրեւ .
Կ	23	29	5	Բ . Յիսնակաց . Հարս .	Ցուրուր մէկ դիէն , Խոնաւն անդիէն
Բ	24	1	6	Յուլիանէ , Աասիլուհի . Գ . Ճե- ժաւիւլ էլէլէլ :	Մարդը կը նեղէ . Դուն աղէկ հագուէ :
Գ	25	2	7	Յակոբ եւ Շմաւոն առաք . Լ . Ամբրոսիոս :	Այնպէս մը ապրէ որ Մեռնելու ես այսօր .
Դ	26	3	8	Պահ . Լ . Անարատ յղութիւն :	Բայց գործէ դուն այնպէս , Իբրեւ թէ անմահ ես :
Ե	27	4	9	Գեղարիոս , Մերկեռիոս , Յա- կովիկ , Իրաւափառ :	
Ո	28	5	10	Պահ . Լ :	Անձրեւն արմատ , Մուրճը զերկաթ
Շ	29	6	11	Անդրէաս առաք .	Աիշտն ալ զմարդ Կ'ընէ հաստատ :
Կ	30	7	12	Գ . Յիսնակաց . Հարս .	

Ազնոռակիան զգածոռով

Պր . տը լա Ռիվիէր , որն որ կարողոս իմաստնոյն սենեկապետն ու սիրելին էր , թագաւորաց երջանկութեան վրայ խօսք բացաւ ու կարողորդ երջանիկ կը կոչէր : Այն ըսաւ թագաւորը , երջանիկ եմ , որովհետեւ կարողութիւն ունիմ ուրիշին բարիք ընելու :

Հաստատոռն նկարագիր

Քրիստոսի շուքով թագուհին երբոր գահէն հրաժարեցաւ , կարողոս կուսթաւ իր յաջորդը՝ որն որ յառաջագոյն թագուհւոյն տիրապետութեանը ատեն շատ անգամ խնդրած էր որ իրեն հետ ամուսնանայ եւ միշտ պարապի ելած էր , կը յուսար որ հիմա ուզածը կրնայ ընդունիլ եւ անոր համար նորէն առաջարկեց անոր ձեռքը՝ որն որ թագուհւոյն ուղեկից եղած էր մինչեւ շուքով սահմանները : Քրիստոսիան պատասխան տուաւ . Եթէ , ըսաւ ազնուական հաստատութեամբ մը , ամուսնանալու միտք ունենալու ըլլայի նէ՝ չէի սպասեր որ իմ ամուսինս զիս թագուհի ընէ , հապա ես զինքը թագաւոր ըրած կ'ըլլայի :



Մէկուն հարցուցին թէ ինչու համար դրախտին մէջ ամուսնութիւն չկայ . Արովհետեւ , պատասխանեց , ամուսնութեան մէջ դրախտ չկայ :





**Օ Ր Ա Յ Ո Յ Յ**

**Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք**

	Հ	Տ	Ն	
Բ	1	8	13	Պօղոս, Պօղ, Մակար, Եւազր, Յովհաննէս գբ. Յովհաննէս կարճ. Նեղոս, Արսէն, Սիսիանոս, Գանիէլ, Սրապիոն, Մակարիոս, Պիմէն, Եւ պլբ Ի Հարց Եզիպտացոց. Լ. Լուչիա:
Գ	2	9	14	Մինաս, Երմոզինէս, Գրարոս, Յովհաննէս, Ալեքսիանոս:
Դ	3	10	15	Պահք:
Ե	4	11	16	Բարթոլոմէոս, Յուդա:
Ո	5	12	17	Պահք:
Շ	6	13	18	Նիկողայոս զմիւռն.
Կ	7	14	19	Դ. Յիսնակաց. Բարեկենդան Ս. Յակոբայ:
Բ	8	15	20	Եւստրատիոս, Օքսենտիոս, Եւզինէոս, Ովրեսաէս, Մարդարիոս. Ս. Յակոբայ պահք:
Գ	9	16	21	†Անարատ յղութիւն:
Դ	10	17	22	Պահք. Գ. Էվէլէ Էրպաթն:
Ե	11	18	23	Իզնատիոս աստ. Թէոպոմպոս, Թէոփնաս, Բասոս, Եւսեբիոս, Եւսիբիոս, Բասիլիդէս:
Ո	12	19	24	Պահք:
Շ	13	20	25	* Յակովբ Մծբ. Մարուգէ, Մեղիտոս. Լ. Ծնունդ Տեառն:
Կ	14	21	26	Ե. Յիսնակաց. Հարս.
Բ	15	22	27	Ադգէ, Արգար:
Գ	16	23	28	Ինդոս, Դոմնա, Գղերիկոս, 2 բիւրք. Բարեկենդան ծննդեան:
Դ	17	24	29	Պահք:
Ե	18	25	30	Ա. օր պահոց Ծնն.
Ո	19	26	31	Բ. " " "
Շ	20	27	1	Գ. " " " Արրահամ, Խորէն, Կոզմաս, Դամիանոս.

Արեւը ամսոյս 10ին ժամը 11ը 37 վայրկեան անցած Այծեղջիւրին Շ նշանին մէջ կը մտնէ:

ԱՐԵԻՈՒՆ ԵԼԻԵԼԸ	ՅՈՐԵԿՈՒՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ
1.14ժ.54վ.	1. 9ժ. 6վ.
10.14,, 58,,	10. 9,, 2,,
19.14,, 54,,	19. 9,, 6,,
28.14,, 47,,	28. 9,, 13,,

—Տես Յունուարին ծանօթութիւնները:

- ԼՈՒՍԵՆ ՔԱՌՈՐԳՆԵՐԸ
- 2. յ Ա. քառ. 51 վ.
  - Մշււ. Յարս:
  - 8. շ Լ. Լ. 22 ժ. 32 վ.
  - Տիւր:
  - 15. լ վ. քառ. 13 ժ. 3 վ.
  - 2իւնար. Յարս:
  - 23. ● Ծն. Լ. 14 ժ. 18 վ.
  - Սարսոյց. 2իւն:
  - 31. յ Ա. քառ. 14 ժ. 53 վ.
  - Գոյ. Անյրէ-:

**Ա Մ Ս Ա Ռ Ա Ծ Ք**

Ահա բուն ձմեռ  
 Բերաւ Դեկտեմբեր:  
 Յուրտ, սառոյց ու ձիւն  
 Կու տան թմրութիւն  
 Երկրին ու մարդուն.  
 Քաշուելու է տուն:









**ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ**

ՉԻԿՐՆԱՐ տարակուսուիլ՝ որ մարդիկ երկրի վրայ ապրելու ու տարածուելու սկսած ատենէն իբր հարկաւոր բան մը համարուած է՝ անդադար անցնող դացող ժամանակը չափել ու բաժնել, ու աշխարհքիս վրայ շիգտնուիլ այնչափ անկիրթ հին կամ նոր ժողովուրդ կամ ազգ մը որուն մէջ ժամանակական տեղեկութիւններու, ժամանակագրութեան հետքերու սկիզբներն անձանօթ ըլլան :

Ա՛չ բարակ ու ո՛չ շատ ճիշդ մտադրութիւն հարկաւոր է՝ ցորեկուան ու դիշերուան իրարու յաջորդելը ճանչնալու, արեգական ուր ու երբ ելլելն ու մտնելը, լուսնին փոփոխութիւնները՝ կէս ու կատարեալ կլոր ձեւը, ու աստղերուն այլ եւ այլ դիրքով՝ կամ ա՛ս ու ա՛ն տեղ երեւալը տեսնելու համար : Անձրեւներու ժամանակին մասնաւոր յատկութիւնները քանի մը տաք կամ հասարակածին մօտ երկիրներու մէջ, ցրտային դօտիներու տակ՝ կամ երկու արեւադարձներու եւ բեւեռային շրջանակներու մէջի երկիրներուն տարւոյն չորս եղանակներուն հանդամանքը, ծովուն մակընթացութիւնն ու տեղատութիւնը, տարւոյն մէկ ատենը երկրին մէկ դին՝ ուրիշ ատենն ուրիշ դի դացող եկող թռչունները, այս ամէն երեւոյթներուն իրարու կանոնաւոր յաջորդութիւնը, կամ որոշ ատենի մէջ կատարուիլը նոյն իսկ վայրենի ժողովուրդներն առանց զգուշաւոր մտադրութեան կրնան դիտել, ու անոնց երեւալու կամ հանդիպելու ժամանակը որոշել : Ահա ասանկով սկիզբ մը կ'ըլլայ ժամանակը չափելու, ըստ պէսպէս փոփոխութեան օդային երեւոյթներուն, անձրեւին, ձիւնին, ցուրտին, տաքին, եւ այլն, տարւոյն եղանակներն որոշելու եւ ասոնց համեմատ ժամանակը բաժնելու :

Ասկից յառաջ կու գայ աս բաժանումները կարգի կանոնի մը կապել, տարւոյն որոշ ժամանակ մը սահմանել՝ երկրի արեգական բոլորտիքն ըրած շարժումին ու ընթաց-



քին ժամանակին համեմատ: Թէպէտ եւ առ երկնային մեծ լուսաւորին այսինքն արեգական կամ ճշգրտոյն խօսելով երկրի ընթացքին ցուցրցած ժամանակը պէտք էր յատկապէս ու ըստ ուղիղ տեսութեան տարւոյն երկայնութեան չափ դնել ու ըստ այնմ անիկա չափել ու բաժնել, բայց պինդ հին ազգերուն շատերը ժամանակն ու տարին լուսնոյ ընթացքին կամ շրջանին համեմատ չափեցին ու հաշուեցին ու անիկակ իրենց ժամանակական հաշիւներուն հիմ դրին, սակայն շատերը անոր շրջանը արեգական (երկրի) ընթացքին հետ համեմատելով ու կապակցելով՝ տարիներուն կարգը սահմանեցին:

Արդ հարկ էր՝ որ այսպիսի հաշիւներն ու ժամանակին սրպիսի եւ իցէ կարգաւորութիւնը պինդ առաջ գրով կամ նշաններով նշանակուէին, որ ետեւէ ետեւ եկած հաշիւներն անոնց յաջորդելով սր եւ իցէ ազգի մէջ հաստատուն կարգ մը դրուէր առ բանիս մէջ, եւ առ հասարակ ամենուն ծանուցուէր: Թէպէտ եւ ասանկ հաշիւները ու տարեկան կարգերը Տոմարներու մէջ կը գրուէին. բայց յայտ է թէ ի սկզբան անդ կարգաւորեալ Տոմարի գործածութիւն չկար: Ի վերայ այսր ամենայնի առ հմտութիւնները տոմարական տեղեկութիւններու կամ Տոմարագիտութեան հիմ ու սկիզբ են. անոր համար մենք սկսինք Տոմարի վրայ առ հասարակ խօսիլ:

Տոմար կամ Տոմար<sup>1</sup> ըսելով կ'իմանանք զիրք կամ մատենիկ մը՝ ուր մէկ տարւոյ մէջ երկրի արեգական բոլորտիքն ըրած շարժումին կամ ընթացքին ու լուսնին շրջանին հանդամանքները, ժամանակին այսինքն բոլոր տարւոյն օրերուն քաղաքական կարգաւորութեամբ եղած այլ

<sup>1</sup> Տոմարին Գալիէնոսարիոս (Վաղանդարան) անունը Եւրոպացւոց մէջ հին Հռոմայեցիներէն մնացած է, որ Գալի բայէն կ'ելլէ, ու Բարձր Յայնի-Կանչել կամ ըսել կը նշանակէ, եւ Հռոմայեցւոց տոմարին առ անունը տալը անկից յառաջ եկած է՝ որ հին ատենները քուրմերը սովորաբար ամէն ամիս լուսնոյ ծննդեան կամ նոր լուսնին առջի օրը կը դիտէին ու տեսածնուն պէս բարձր ձայնով ժողովուրդը կը կանչէին՝ որ ան ամսուն մէջ հանդիպելու տօներն ու նշանաւոր օրերն իրենց ծանուցանեն: Իրենց մէջ ամէն ամսուն առջի օրը Գալիէնոս (Կաղանդոս) կ'ըսուէր. որ ետքէն Եւրոպացւոց մէջ տարւոյն առջի օրուան համար միայն կը գործածուէր. ինչպէս մեր տոմարին մէջ ալ կը գրուի: Ալմանախ կամ Ալմանայ անունը, որ Համար կամ Հաշիւ կը նշանակէ, Արաբացւոց բառ է, ու Եւրոպացւոց մէջ ընդարձակ եւ այլ եւ այլ տեղեկութիւններով գրուած տոմարներու համար կը գործածուի:



եւ այլ բաժանմունքը, ամիսներուն սկիզբը, ու ըստ եկեղեցական կարգաւորութեանց տարւոյն ամէն մէկ օրուան համար սահմանուած՝ Բրիտանոսի, Ս. Աստուածածնայ, Հրեշտակացու Սրբոց տօները կը նշանակուին: Աստուծարն ամէն մէկ ազգ՝ նշանաւոր դէպքի կամ պատճառի մը համար իրեն տուանձին Թուական այսինքն տարիներուն թիւին սկիզբ մը դնելով՝ անոր համաձայն կը կարգաւորէ:

Արդ քաղաքական կարգաւորութիւններն ըստ զանազան ազգաց ու զանազան ժամանակներու մէջ այլ եւ այլ ըլլալուն՝ ամէն մէկ ազգի Թուականն ու Տոմարն ալ այլ եւ այլ է: Ասիկա՝ քաղաքական կարգաց ու տօներուն կարգաւորութեան նայելով՝ այսպէս այլ եւ այլ կրնայ ըլլալ. սակայն տարիներուն, ամիսներուն ու օրերուն կարգաւորութիւնը կամ ընթացքն ու կարգը՝ արեգական (երկրի) ընթացքէն կախում ունենալուն, ու միայն անոր համեմատ ուղիղ ընթանալուն պատճառաւ պէտք է որ ուղիղ տուածարը կամ ժամանակին ուղիղ կարգաւորութիւնն ամէն ատեն ու ամէն ազգի մէջ մի եւ նոյն ըլլայ: Ի վերայ այսր ամենայնի ի սկզբանէ հետէ տոմարներն ըստ այսմ նկատման շատ տարբերութիւններ ունեցեր ու շատ փոփոխութիւններ կրած են, մինչեւ որ ըստ կարի հաստատուն ու անախալ համաձայնութիւն ու աստեղագիտական հաշիւներու համեմատ կարգ մը սահմանուած է:

Տոմար կարգելը՝ գրելն ու գործածելն երբ սկսած ըլլալը յայտնի ու որոշ չի կրնար պատմութիւններէն իմացուիլ: Արեգական կամ լուսնին ընթացքին համեմատ տարիները հաշուելը, ու ըստ այնմ Թուականն ու ետքը Տոմար կարգելը պէտք է որ շատ հին ատեններէն սկսած ըլլայ: Ամէն հին ազգաց մէջ Թուականի գործածութիւնը կը դանուի՝ ամէն մէկուն մէջ ըստ մասին ինչ իրարմէ շատ կամ քիչ տարբերութեամբ: Եգիպտացիք, Բաբելացիք, Մարք ու Պարսիկք շատ կանուխ սկսած են տարեաց կարգաւորութիւնը կամ հաշիւը. բայց որունը պինդ առջինն է՝ որոշ չգիտցուիր: Նաեւ Հրէից մէջ ալ տոմարի գործածութիւնը շատ հին է, ինչպէս Ս. Գիրքին խօսքերէն կ'իմացուի: Սոյնպէս Հայոց մէջ շատ հին է ասոր գործածութիւնը, գրեթէ Բաբելացոց հետ՝ Բրիտանոսէ իբր 747 տարի առաջ: Հռոմայեցոցը սկսած է իրենց քաղքին ու տէրութեան սկզբնաւորութեան ատենը՝ Բրիտանոսէ 753 տարի առաջ: Իսկ Յունաց առջի գրեթէ ասոր Թուականն ու տոմարը սկսած է Բրիտանոսէ 776 տա-



րի առաջ, ու երկրորդը մեծին Աղեքսանդրի մահուրնէ 11—12 տարի ետքը՝ իր յաջորդին Սելեւկոս թագաւորին ատենը քրիստոսէ 312 տարի առաջ: Սոյնպէս ուրիշ հին ազգաց ալ թուականը, այսինքն տարիներու հաշիւը՝ այլ եւ այլ ժամանակ սկսաւ:

Արդ՝ հոս ամենէն առաջ դիտաւոր գիտնալու կտորն աս է՝ որ աս այլ եւ այլ ազգաց մէջէն ոմանք քաջի բսելով արեգական (երկրին) շրջանին սկիզբէն մինչեւ անոր կատարուելուն վերջը, ոմանք ալ լուսնոյ տարեկան շրջանին մէջ եղած ժամանակը կ'իմանային. ասինքն՝ բաժանումը, որն որ ամէն ազգաց մէջ կայ, լուսնոյ մէկ ծնունդէն մինչեւ մէկալ ծնունդը կ'առնուէր, իսկ փոքր բաժանումներէն՝ շաբաթը՝ լուսնոյ մէկ քառորդէն մէկալ քառորդը, օրը՝ արեւուն ելլելէն ու մտնելէն, ժամերը՝ օրը գիշերուան ու ցորեկուան մէջ որոշ մասունքներու բաժնելու դիւրութենէն, եւ քաջաները կամ վայրկեանները ամէն մէկ ժամին որոշ բաժանում մը տալու պատճառաւ սահմանուած են:

Արկրորդ գիտնալու հարկաւոր կտորն աս է՝ որ տարին երկու կը բաժնուի, կամ աւելի աղէկ բսելք՝ երկու կերպով կ'իմացուի, մէյ մը՝ արեգակնային՝ կամ բնական քաջի, մէյ մ'ալ՝ աստղական քաջի: Արեգակնային կամ բնական տարին այնչափ ժամանակ կը տեւէ՝ որչափ ժամանակի մէջ որ երկիրն իր ընթացքը արեգական բոլորափքը կը կատարէ, այսինքն հեղ մը շարժելու սկսած կետէն մինչեւ որ նոյն կէտը գայ հասնի: Եւ ասիկա՝ կարճ խօսքով բսել ուղելով՝ Առաքելնիկոսին եւ անկից ետքն աստեղագիտաց ըրած ճիշդ հաշիւներուն համեմատ՝ կը կատարուի 365 օրուան, 5 ժամու եւ գրեթէ 49 ամբողջ վայրկենի մէջ: Իսկ քաղաքական տարին՝ կոտորակները կամ ժամերն ու րոպէները մէկ դի թող տալով՝ կը հաշուէ միայն 365 օր. որ եւ է հասարակ քաջի. բայց որովհետեւ այն աւելցած ժամերն ու վայրկեանները մէկ տեղ ժողվելով չորս տարին մէյ մը ամբողջ օր մը կը կազմեն, անոր համար աս քաղաքական տարին չորս տարի մէյ մը 366 օր կ'առնենայ ու արեգակնային տարւոյն հետ կը հաւասարի՝ եւ աս տարին կ'ըսուի Նահանջ տարի: Ասիկակալ ասանկ հաստատուած է՝ որ տարիներ անցնելով արեգակնային ու քաղաքական տարիներուն մէջ շփոթութիւն չմտնէ,

Արրորդ գիտնալու հարկաւոր բանն է՝ որ արեգակնային տարիէն զատ լուսնական քաջի ալ կայ: Լուսնական տա-



րին՝ լուսնոյ տասուերկու հեղ իր ընթացքը կամ շրջանը  
կատարելէն կ'առնուի: Ասիկա հին ատենները Լատինա-  
ցւոց, Յունաց, Հրէից եւ ուրիշ քանի մը ազգաց մէջ կը  
գործածուէր: Հրէաները մինչեւ հիմայ նոյնը կը գործա-  
ծեն: Նաեւ Օսմանեանք առ լուսնական տարին ունին:  
Լուսնական տարին ալ երեք է. Ա. աստղադիտական, որ  
ունի 354 օր, Տ ժամ ու 48 եւ կէս րոպէ. Բ. աստղադիտական  
կամ հասարակ, որ ունի 354 օր. եւ Գ. երկայն կամ նա-  
հանջ, որ ունի 384 օր, այսինքն տասուերեք ամիս:

### Հրէից թուական

Հրէայները կը վարեն քաղաքական լուսնական տա-  
րին ու իրենց թուականը կը սկսին աշխարհքին սկիզբէն,  
ըստ որոյ թէպէտ եւ բոլոր տարիներն տասուերկու ամիսի  
բաժնած է, բայց միշտ մէկ ամիսը 30 օր ունի ու մէկալը 29.  
անանկ որ տարւոյն վերջը կ'ըլլան 354 օր, այսինքն ուրիշ  
ազգաց արեգակնային տարիէն տասնումէկ օր պակաս. ուս-  
տի իրենց տարին արեգակնային տարւոյն հետ միաբանելու  
համար երկու երեք տարին մէյ մը 13 ամիս կը հաշուեն, եւ  
ան տարին նահանջ կ'անուանեն, որ եւ կ'ունենայ 384 օր:  
Աս բանս աւելի անոր համար կ'ընեն՝ որ գարնանային հա-  
սարակածէն կամ գիշերահաւասարէն իրենց Նիսան ամիսը  
շատ չհեռանայ, որուն մէջի լուսնին լրման կամ տասնու-  
չորսերորդ օրը իրենց Պասեքին (զատկին) տօնը կատարելու  
պարտական են.

Իրենց ամիսներուն անուններն ու կարգն առ է.

1. Թշրի	30 օր.	7. Նիսան	30 օր.
2. Խէսուան	29 "	8. Եառ	29 "
3. Քասդեւ	30 "	9. Սիվան	30 "
4. Թէբէթ	29 "	10. Թամուզ	29 "
5. Սէբաթ	30 "	11. Աբ	30 "
6. Ադար	29 "	12. Իլուլ	29 "

Նահանջ տարւոյն տասուերեքերորդ ամիսը Ադար ա-  
միսէն ետքը կը գնեն ու կ'անուանեն Վեպար՝ 29 օրով:  
Ըստ իրենց տոմարին՝ Քրիստոսի ներկայ (1858) տարին է  
աշխարհքիս ստեղծմանէ սկսելով՝ իրենց 5619 տարին, որ  
կը սկսի մեր (նախընթաց տարւոյն) Սեպտեմբեր ամսոյն մէջ:

Մակաբայեցւոց ատենէն սկսած՝ Հրէաները Յունաց  
Սելեւկեան թուականը գործածել սկսան մինչեւ մետա-



սաներորդ դարը (1200), բայց ետքէն անիկայ թողուցին ու իրենց հին թուականը՝ որ է աշխարհքի ստեղծմանէ համրուածը՝ սկսան առաջ տանիլ :

Արաքսացոց թռուսկան

Արաքացիք ու Օսմանցիք ալ՝ ինչպէս ըսինք՝ քաղաքական լուսնական տարին ունին, ու իրենց ամիսներուն ալ մէկը 30 օր ունի մէկալը 29 օր, որոնք տարւոյն վերջը կ'ընեն 354 օր. ուստի եւ ասոնց ալ տարին արեգակնային տարիէն 11 օր պակաս է : Եւ որովհետեւ իրենք ուրիշ լուսնական տարի գործածող ազգաց պէս՝ չորս տարին մէյ մը հասարակ տարւոյն վրայ օր մը աւելցրնելով՝ Նահանջ տարի չունին, անոր համար իրենց տարւոյն սկիզբն ալ՝ ամիսներն ալ արեգակնային կամ ուրիշ ազգաց տարւոյն նայելով փոփոխական են ու ետեւէ ետեւ տարւոյն ամէն մէկ ատենին՝ գարնան, ամառուան, աշնան ու ձմեռուան, կրնան հանդիպիլ : Ըստ այսմ իրենց տարին ուրիշ ազգաց արեգակնային տարիէն միշտ 11 օր յառաջ երթալով՝ երեք տարին մէյ մը ամբողջ ամիս մը յառաջ գացած կ'ըլլայ, որոնք 33 տարիէն ետքը ամբողջ տարի մը կը կացուցանեն. ուստի եւ՝ օրինակի համար ըսենք՝ 1824ին ծնած մարդ մը ըստ Օսմանցոց աս (1858=1274) տարի՝ 35 տարեկան կը սեպուի, ուր ըստ արեգակնային տարւոյ պէտք էր 34 տարեկան սեպուիլ :

Իրենց թուականը կը սկսի Քրիստոսի թուականին 622 տարին (յուլիս ամսոյն 16ին). որն որ կ'առնուի Մէհմեմէտին Մէքքէյէն փախչելէն, ու կ'ըսուի՝ Հիճրէ կամ Հիճրա (պանդխտութիւն, գաղթականութիւն) :

Իրենց ամիսներուն անուններն ու կարգն աս է .

1. Մուհարրէմ	30 օր .	7. Բէճէպ	30 օր .
2. Սաֆէր	30 " "	8. Շապան	29 " "
3. Բէպիւլ էվլէլ	30 " "	9. Բամազան	29 " "
4. Բէպիւլ ախրը	29 " "	10. Շէվվալ	30 " "
5. Ճէմազիւլ էվլէլ	30 " "	11. Չիւլգատէ	29 " "
6. Ճէմազիւլ ախրը	29 " "	12. Չիւլհիճճէ	29 " "

Յոռնաց թռուսկան

Հին Յոյները կարծելով՝ որ արեւուն ու լուսնին տարեկան ընթացքը նոյնչափ ժամանակ կը տեւէ եւ թէ լուս-



նոյ ամսական շրջանը միշտ 30 օրուան մէջ կը կատարի՝ բո-  
լոր տարին տասուերկու լուսնական ամիսներու բաժնեցին  
երեսնական օրերով, ուստի եւ տարւոյն տուին 360 օր :  
Բայց ետքէն իմանալով որ տարին այսչափ օր չիբովանդա-  
կեր, 6 օր հանեցին անկից ու դրին 354 լուսնական օր : Եւ  
որովհետեւ ասանկով լուսնական տարին արեգակնային տա-  
րիէն տասնումէկ օրով կարճ կ'ըլլայ, անոր համար երկու  
տարին մէյ մը նահանջ կամ յաւելեալ ամիս մը սահմանե-  
ցին 22 օրով : Բայց դարձեալ տեսնելով՝ որ աս յաւելուա-  
ծով ալ չորս տարին մէյ մը օր մ'ալ կը պակսէր արեգակ-  
նային տարւոյն հաւասարելու համար, սկսան երեք տարին  
354 լուսնական օրով թողուլ, ու հասարակ տարի անուա-  
նել, իսկ չորրորդ տարւոյն վրայ ամիս ու կէս ալ աւելցրնել  
45 օրով, որով բոլոր ան տարին 399 օր կ'ունենար ու արե-  
գակնային տարւոյն կը հաւասարէր. այսինքն չորս տարւոյն  
տասնումէկ օրերը, ու աս տարիներուն ամէն մէկուն վեց  
ժամը (որոնցմով լուսնական տարին արեգակնայինէն ետք  
կը մնար) մէկ տեղ բերելով՝ կը կարծէին՝ որ աս երկու լու-  
սաւորաց ընթացքին կատարեալ հաւասարութիւնը կը  
գտնեն : Աս տարին անուանեցին Նահանջ, ու անոր յիշա-  
տակը բոլոր Յունաց մէջ նաեւ ամէն տեղ երեւելի ընելու  
համար սահմանեցին Ալիմպիական խաղերը, ուսկից եւ սկիզբն  
եղաւ իրենց Ալիմպիական թուականին, որ կը սկսէր 776  
տարի Քրիստոսէ առաջ, ու ամէն չորս տարին մէյ մը մեծ  
հանդէսներով կը կատարուէր :

Յունաց մէկալ թուականը՝ որ առջինէն շատ ետքը  
սկսաւ՝ ու քրիստոնէութենէ ետեւ ալ շատ ատեն գոր-  
ծածուեցաւ ու մինչեւ հիմակ Ասորոց մէջ եկեղեցական  
գործքերու համար կը գործածուի՝ Քրիստոսէ 312 տարի ա-  
ռաջ սկսաւ, մեծին Աղեքսանդրի յաջորդին Սելիւկիոս Ա-  
ւորոց թագաւորին ատենը, ուստի եւ կ'ըսուի Սելւկեան  
թուական :

Թոռակասն Քրիստոսի,  
Հոռմայեցոց Յոռեւսն տոռմարիև հուռեւսառ,  
որ եռ է Քրիգորեւսն (Աոր) տոռմար :

Ա. Թէպէտ եւ հիմակուան քրիստոնեայ ազգաց շա-  
տերուն տարւոյն կարգաւորութիւնը կամ Տուժարն իր սկիզբը  
հին Հռոմայեցոց տուժարէն կամ ժամանակին ու տարւոյն



կարգաւորութենէ կ'առնու, բայց աս Հռոմայեցւոց սահմանած կարգաւորութեան մէջ ալ ի սկզբանէ հետէ շատ փոփոխութիւններ եղան: Հռոմայեցիք իրենց տարւոյն կարգաւորութիւնը կամ թէ ըսենք տոմարը պինդ առաջ իրենց հետ մէկտեղ իրենց հայրենիքէն Ալպա Լոնկայէն բերին: Աս Ալպայեան տարին տասը անհաւասար ամիս ունէր, որոնց մէջ ամենէն երկայնն 36 օր ունէր, իսկ ամենէն կարճը՝ 16 օր: Նուժա Պոմպիլիոսին ատենէն, (որ մեռաւ Քրիստոսէ 673 տարի առաջ,) կամ ըստ ուղղագոյն կարծեաց Տարկուինիոս Պրիսկոսին ատենէն (որ թագաւորեց 617էն մինչեւ 579 Քրիստոսէ առաջ,) մտաւ Հռոմ Ետրուրացւոց բանեցուցած լուսնական տարին, որ ունէր 355 օր, ու երկու տարին մէյ մը անոնց վրայ կը դրուէր երկու ամիս ալ, ամէն մէկը 22 օրով. իսկ չորս տարին մէյ մը կ'աւելցուէր ամիս մը՝ քսանուհինգ օրով՝ քաղաքական տարին արեգակնային տարւոյն հետ հաւասարեցնելու համար: Ան ատեններն իրենց ամիսներուն յանուններն ու կարգն աս էր.

1. Յունուար	29 օր.	7. Սեքստիլիս	29 օր.
2. Մարտ	31 "	8. Սեպտեմբեր	29 "
3. Ապրիլ	29 "	9. Հոկտեմբեր	31 "
4. Մայիս	31 "	10. Նոյեմբեր	29 "
5. Յունիս	29 "	11. Դեկտեմբեր	29 "
6. Կուինտիլիս	31 "	12. Փետրուար	28 "

Հռոմայեցիք մինչեւ 490 տարի Քրիստոսէ առաջ չէին իմացած՝ որ լուսնոյ տարիին 355 ամբողջ օր տալը սխալ է, հապա 354 օր պէտք է տալ, բայց աս սխալնին նոյն տարին Աթենացիներէն սորվելով շիտկեցին, ու անկից ետքը տարիներուն հաշիւը ուղիղ պահելու համար քսան տարին մէյ մը աս 354 օրուան վրայ ամենեւին օր չէին աւելցրներ, որպէս զի լուսնական տարին արեգակնային տարւոյն հետ հաւասարի: Գրեթէ նոյն ատեններն ամիսներուն կարգն ալ փոխեցին, Փետրուարն երկրորդ ամիս ըրին ու Դեկտեմբերը վերջին ամիս: Հռոմայեցիք տարին այսպէս ըստ իրաց ինչ կարգաւորելէն ետքը՝ քուրմերուն յանձնեցին ամէն մէկ նոր տարւոյ համար տոմարը կարգի դնել ու յօրինել: Բայց որովհետեւ աս քուրմերն աստեղագիտական տեղեկութիւններ չունէին, ու միանգամայն իրենց առանձնական նպատակն ու շահը դիտելով՝ ուզածներնուն պէս տոմարը կը կարգաւորէին, տարին կ'երկրնցունէին կը կարճեցրնէին. անանկ որ ասոնց տոմարին համաձայն շատ տարի



չորենին կամ արմատեաց հունձքին ատենը աշնան ու այդե-  
կութքը ձմեռ ատեն կը հանդիպէր: Ասանկով տարուէ տա-  
րի ժամանակներն ու եղանակները շփոթելով՝ քաղաքական  
տարին Յուլիոս կայսեր ատենը (Քրիստոսէ իբր 50 տարի  
առաջ,) վաթսուներօթն օր արեգակնային տարիէն հե-  
ռացած կամ տարբեր էր:

Յուլիոս կայսր իր իմաստութեամբն աս շփոթու-  
թեան ու անկարգութեան ճար մ'ընել ու հաստատուն  
կարգ մը դնել ուղեւով՝ Սոսիկենէս աղէքսանդրացի փիլի-  
սոփային ա Մարկոս Փղաւիոս դպրին յանձնեց Հռոմայեց-  
ւոց տոմարը շիտկել ու կարգի դնել: Ասոնք մինչեւ ան ա-  
տեն գործածուած լուսնական տարին մէկդի թող տուին ու  
Եգիպտացւոց բանեցուցած արեգակնային տարին առին,  
որ ունէր 365 օր ու 6 ամբողջ ժամ, ու որովհետեւ աս վեց  
ժամերը չորս տարիէն ետքը մէկ ամբողջ օր կը կազմէին,  
անոր համար չորս տարին մէյ մը Նահանջ տարի մը կարգե-  
ցին 366 օրով: Բոլոր տարին տասուերկու քաղաքային տ-  
միսի բաժնեցին, ու հին Հռոմայեցիներէն դրուած անուն-  
ները պահեցին: Աս ամիսներուն մէջէն եօթը հատին (Յու-  
նուարին, Մարտին, Մայիսին, Աուինտիլիսին, Սեքստիլիսին,  
Հոկտեմբերին ու Դեկտեմբերին) երեսուներեկական օր  
տուին, չորս հատին (Ապրիլին, Յունիսին, Սեպտեմբերին  
ու Նոյեմբերին) երեսնական օր տուին, իսկ Փետրուարին  
հասարակ տարիներու մէջ 28 օր՝ ու նահանջ տարւոյն մէջ  
29 օր տուին: Արնային ասոնք իրենց հմտութեամբը տարւոյն  
սկիզբը կամ յունուար ամիսը՝ ինչպէս որ պէտք էր՝ ութ օր  
առաջ ձմեռնային արեւադարձին՝ իբրեւ ձմեռուան ամենէն  
կարճ օրը՝ դնել, բայց որովհետեւ լուսնական տարին արե-  
գակնային տարւոյ պիտ'որ փոխէին, ու նոյն տարին լուսնոյ  
ճնունդը յունուար ամսին մէկին կ'իյնար՝ (ուսկից մինչեւ ան  
ատենը Հռոմայեցիք իրենց նոր տարին կը սկսէին,) անոր  
համար աս նոր տումարը մէկէն ի մէկ ժողովրդեան գէշ չցու-  
ցրնելու համար՝ նոյն օրը նոր տարւոյն սկիզբը դրին, որ օր  
որ իրենց լուսնական տարին ալ պիտ'որ սկսէին: Արդ աս  
նոր տարեկան կամ տոմարական կարգաւորութիւնն անուա-  
նեցաւ Յուլիան, կամ Յուլիական Տոմար: Եւ աս նոր տու-  
մարը կամ տարւոյ կարգը սկսաւ գործածուիլ Հռոմայու  
շինութենէ 709 ետքը՝ ու Քրիստոսէ 45 տարի առաջ՝ յու-  
նուար ամսոյն մէկին: Յուլիոս կայսր աս կարգաւորութիւնն  
ընելէն ետքը՝ քուրմերուն անհոգութեամբը կամ չարու-



Թեամբը նահանջ տարւոյն աւելցուելու օրուան մէջ անկարգութիւն մը մտնելով, այսինքն ամէն մէկ չորրորդ տարւոյն ետքն ու հինգերորդ տարւոյն սկիզբն օր մը աւելցրնելու տեղ չորրորդ տարւոյն սկիզբն աւելցրնելով՝ Օգոստոս կայսեր տէրութեան քսաներորդ տարին արդէն յուլեան տոմարին մէջ ալ շփոթութիւն մտած էր, որն որ Օգոստոս կայսեր հրամանաւ շիտկուեցաւ ու անկից ետքն աս կտորին նկատմամբ ուղիղ կ'երթար: Աս ատեն ի պատիւ անուան Յուլիոս կայսեր Առօնօրէի ամիսին անունը փոխուեցաւ ու Յուլիոս կամ Յուլի անուանեցաւ, իսկ Սեփօրէի ամիսն ալ ի պատիւ Օգոստոս կայսեր Օգոստոս անուանեցաւ: —

Բ. Թուական մը կամ տարիները համբելու սկիզբ մը երեւելի ու նշանաւոր դէպքէ մը կը սկսի, քրիստոնէից ու քրիստոնէութեան համար Յիսուսի քրիստոսի ծնունդը ամենէն մեծ ու նշանաւոր եւ ուրախալի ժամանակ ու դէպք մը ըլլալուն՝ ամէն քրիստոնեայ ազգեր անիկայ գլխաւոր ժամանակի հիմ ու գլուխ ըրին: Ասիայ Յուլեան տոմարին կամ Թուականին համեմատ կը սկսի Յունուարի մէկին՝ Յունաց 194երորդ Ալեմպիական Թուականին, Հռոմայի շինութեան 753 տարին, ու աշխարհքի ստեղծման իբր 4000 տարին: Բայց հոս կը ծանուցանենք՝ որ ըստ ճիշդ գիտնական հաշուի՝ քրիստոսի Տեառն մերոյ ծնունդը հիմակուան գործածուած քրիստոնէական Թուականին սկիզբէն գրեթէ եօթը տարի առաջ եղած է: Աս Թուականը քրիստոնէութեան սկիզբէն չսկսաւ գործածուելու, որովհետեւ շատ ատեն քրիստոնեայ կայսրները եւ առ հասարակ ամէն մարդ Հռոմայի բղեչիներուն կամ հիւպատոսներուն տարին կը գործածէին, այսինքն վճռոց եւ ուրիշինչ եւ իցէ գրուածոց Թուականը կը դնէին թէ «աս կամ ան բղեչիսին օրը գրուեցաւ կամ տրուեցաւ», եւ այլն: Աս հիւպատոսական տարիներուն գործածութիւնը մինչեւ վեցերորդ դարուն մէջերը տեւեց: Ասկից ի զատ երրորդ դարուն ետքերը Եգիպտոսի մէջ Գիոկլեափանոս կայսեր տէրութեան առջի տարիէն (յամի տեառն 284.) սկսուեցաւ մասնաւոր Թուական մը Թուական Գիոկլեափանոսեան ըսուած: Աս Թուականը քանի մը քրիստոնեայ ազգեր ալ սկսան գործածել, բայց անոր անուն դրին Թուական Տարփոսաց, որովհետեւ Գիոկլեափանոսի օրերը անթիւ քրիստոնեայք մարտիրոս եղած էին: Աս Թուականը մինչեւ հիմայ քրիստոնեայ Խփափներու եւ Հապեչիներու մէջ սօ-



ներուն կարգին համար կը գործածուի: Աս թուականէն քիչ մը ետքը Մեծին Կոստանդիանոսի ատենը սկսուեցաւ տարիները ըստ Ինդիկոնիոնից հաշուել ու համրել: Արդ՝ Ինդիկոնիոն կ'ըսուի տասնուհինգ տարւան շրջանի մը ամէն մէկ տարին. որն որ յառաջ եկած է Հռոմայեցւոց ետքի ատենները երկիրներու վրայ բաժնուած հարկին (խարածին) կարգաորութենէ, որ ամէն 15 տարին մէյ մը կը նորոգուէր, ուստի եւ Ինդիկոնիոնը նորէն կը սկսէր 1. 2. մինչեւ 15: Ինդիկոնիոնը կրնայ թարգմանուիլ Շրջան քարեաց հարկի, կամ Հնգեքսասաներեակ հարկաց: Կոստանդիանոսեան Ինդիկոնիոնը սկսաւ յամի տեառն 313. սեպտեմբերի 1ին:

Վրիստոսի թուականին գործածութիւնը Գիոնեսիոս Ե. քսիկոսոս հռոմայեցի վարդապետի մը ձեռք պինդ առաջ վեցերորդ դարուն մէջ Իտալիա սկսաւ. եօթներորդ դարուն մէջ Գաղղիա ալ մտած էր. ետեւէ ետեւ ուրիշ ամէն քրիստոնեաց ազգաց մէջ մտաւ ու տարածեցաւ: Առաջին անգամ հասարակաց գործքերու մէջ աս թուականը գործածելու սկսողը Մեծն Կարոլոս եղաւ: Իսկ Հռոմայ քահանայապետներէն Ղեւոն Թ. մետասաներորդ դարուն մէջ անոր գործածութիւնը սկսաւ ու անկից ետքն ալ ընդհանուր տարածուեցաւ:

Վրիստոնէութեան ժամանակը կարգաւորեալ ու ըստ կարի հիմակուան հանգամանաց համաձայն տոմար գրելը որ ազգի մէջ եւ երբ պինդ առաջ սկսած ըլլալը որոշ չենք գիտեր: Գալէնոսարիոսմ անունը եւրոպացւոց մէջ շատ հին չէ, ուսկից աւելի հին կը կարծուի Արաբացւոց Ալմանսի կամ Ալմանայ անունը, որ ինչպէս յառաջ ըսինք՝ համար կամ հաշիւ կը նշանակէ: Արաբացիք աս անունով տեսրակի կամ գրքոյի մը մէջ երկնային լուսաւորաց՝ արեգական, լուսնին ու մարտակներուն ընթացքին հաշիւները կը գրէին, ու ասիկա կամ իբրեւ մշտնջենաւոր տոմար, եւ կամ գոնէ շատ տարիներու համար գործածելու կը յարմարցընէին: Արդեօք աս Ալմանաքներուն մէջ օգային երեւոյթներէն ու երկնային մարմնոց ընթացքին հաշիւներէն ի զատ օգային գուշակութիւններ ալ ի սկզբանէ հետէ կը գտնուէին թէ չէ՝ յայտնի չի գիտցուիր:

Վերոպայի մէջ տոմար գործածելը յառաջանալէն ետքը՝ օգային երեւոյթներու համաձայն եղած գուշակութիւններ, գեղացւոց ու երկրագործաց գիտողութիւնները զանազան կարճ ու առակաւոր խօսքերով իբր գուշակու-



Թիւններ կը գրուէին : Բայց դէպ ի վեշտասաներորդ դարուն մէջ տոմարներու կամ արժանաքներու մէջ օդային երեւոյթներու վրայ գուշակութիւններ ընելն ու գրելը անաստիճանի չափն անցուց՝ որ քանի մը օդային երեւոյթներուն հանդիպելու օրն՝ նաեւ ժամն ու տեղը իբր որոշ ու հաստատուն կը գրուէր . թող ուրիշ արտառոց գուշակութիւնները :

Բայց ետքէն՝ մանաւանդ աս ետքի դարուն մէջ այսպիսի աւելորդ եւ անտոյգ գուշակութիւններն ու ծանօթութիւնները մէկ դի թող տալով՝ սկսուեցաւ տոմարներու եւ արժանաքներու մէջ գիտնական , պիտանի ու զուարճալի տեղեկութիւններ , նկարներ ու պատմութիւններ գրուելու , անանկ որ հիմակ ազգ չկայ , որուն մէջ քանի մը տեսակ ընդարձակ տոմարներ ու արժանաքներ այլ եւ այլ կարգ մարդկան համար չգտնուին : —

Գ. Յուլեան տոմարը թէպէտ եւ ըստ երեւելի մասանցը շիտակ էր , բայց աս սխալն ունէր՝ որ ըստ ուղիղ ու ճիշդ աստղաբաշխական հաշուի՝ իր տարին 11 ամբողջ վայրկեան , 14 երկրորդական վայրկեան ու 30 երրորդական վայրկեան արեգական (երկրին) ընթացքին ցուցրցածէն աւելի կը բովանդակէր . որն որ դարեր անցնելով ամբողջ օրեր կը կազմէին : Ինչպէս 16երորդ դարուն աստղաբաշխական զննութիւնները ցուցուցին որ տարւոյն բուն երկայնութիւնը կամ երկրիս՝ արեւուն բոլորաիբր միանգամ դառնալուն շրջանն է 365 օր , 5 ժամ , 48 ամբողջ րոպէ , ու 50 երկրորդական րոպէ կամ մանրերկրորդ (սանիչե) . ասկից իմացուեցաւ թէ Յուլեան տարին բուն տարւոյն երկայնութենէն 11 րոպէ եւ 10 մանրերկրորդ աւելի է : Աս փոքր յաւելուածը 400 տարւան մէջ 3 օրէն աւելի կ'ընէր , եւ աս կերպով Յուլեան տարին միշտ ետ կը մնար , այս ինքն ներկայ տարին ապագայ տարւոյն մէկ մասն ալ իրեն առնելով՝ տոմարական բաժանումները չէին կրնար արեւուն կամ երկրիս բնական ընթացքին հետ միատեղ յառաջ երթալ , եւ երկրիս շրջանը միշտ աւելի շուտով կը լմրննար ու կը յառաջանար քան թէ Յուլեան տարին , որով ժամանակներուն երկնային մարմնաց հետ ունեցած համեմատութիւնը կամաց կամաց կը շփոթէր ու կը կորսուէր : Եւ ասաւասիկ ասկից եղած էր որ Յուլիոս կայսեր ատենէն մինչեւ Գրիգոր ԺԳ . Քահանայապետին ժամանակը (1582) Յուլեան տոմարը 10 օր ետ մնացած էր կամ երկրիս ընթացքը 10 օր աւելի յառաջացած



էր, այնպէս որ տոմարի մէջ դարնանամուտքին կամ աշնանամուտքին դիշերահաւասար ըլլալու 10 օր մնացած՝ արդէն դիշերահաւասար կ'ըլլար. — Կաղանդը կամ Յունուարին մէկը՝ որ այժեղներ արեւադարձէն կամ ձմեռնամուտքէն 9 օր ետքը պիտ'որ ըլլար, 19 օր վերջը կու գար. — Զատիկն՝ որ Նիկիայ ժողովոյն (յամի 325) հաստատածին պէս՝ դարնան դիշերահաւասարէն ետքը պատահած լուսնոյ լրման ետեւի կիրակին պիտի տօնուէր, 10 օր անդին կը մնար. նոյնպէս իմացիր մէկալ շփոթութիւններն ալ:

Աս պատճառաւ Գրիգոր ԺԳ. Քահանայապետ՝ Աւղիսիոս Լիւիոյ աստղաբաշխին յանձնեց որ տարւոյն բնական երկայնութիւնը ճիշդ որոշէ: Ասիկա, քննելով դասաւ որ տարւոյն բուն երկայնութիւնն է 365 օր, 5 ժամ, 48 րոպէ եւ 50 մանրերկրորդ: Արդ Քահանայապետը նոյն տոմարական շփոթութիւնն ու սխալմունքը վերցրնելու համար կարգադրեց որ 1582ին տոմարներուն մէջ Հոկտեմբերի 4էն ետքը Հոկտեմբերի 5 դնելու տեղ՝ 10 օր չհամրելով՝ դնեն Հոկտեմբերի 15. ասով սխալը շիտկուեցաւ, եւ ետ մնացած տոմարը երկրիս բնական ընթացքին հասաւ: Բայց որպէս զի մէյ մ'ալ աս սխալը չկրկնուի, որոշեց որ չորս տարի մէյ մը նահանջ տարի ընելէն ետքը՝ ամէն մէկ դարուն վերջը նահանջ չսեպուի, ինչպէս որ Յուլեան տոմարը կը սեպէր, հապա չորս դարերէն միայն մէկուն վերջը նահանջ համարուի, այսինքն 1600երորդ տարին նահանջ ըլլայ, իսկ 1700, 1800 եւ 1900երորդ տարիները հասարակ (365 օր). 2000երորդ տարին դարձեալ նահանջ, եւ այսպէս յառաջ երթայ. ասով ան կ'ըլլայ որ 400 տարւան վրայ 100 նահանջ օր աւելցրնելու տեղ՝ միայն 97 օր կ'աւելցուի, եւ տոմարին ընթացքը 400 տարւան մէջ երկրիս ընթացքէն 3 օր ետ չիմնար, ինչպէս որ Յուլեան տոմարին մէջ կը պատահէր: Աս շիտկուած տոմարը կոչուեցաւ Գրիգորեան փոփոք, Յարգարեալ փոփոք, Նոր փոփոք, զորն որ բոլոր Եւրոպայի մէջ ամէն Հռոմէական եկեղեցւոյ հետ միացեալ տէրութիւններն ալ անմիջապէս ընդունեցան:

Իսկ Բողոքականք (Բրոքէտոնիքները) առջի բերան չընդունեցան, սակայն ասոր անպատշաճ հետեւութիւնները շուտով զգացին, վասն զի աս կերպով երկու՝ հին եւ նոր փոփոք երեւան ելաւ, որն որ նամակներու թուականին, առեւտրական գործքերու եւ պատմական գրուածքներու շատ գծուարութիւններ ու շփոթութիւններ կու տար.



դարձեալ՝ տէրունական տօները Հռոմէականաց եւ Բողոքականաց մէջ զատ զատ օրերու իյնալով՝ երկու կողման ալ տհաճութիւններ եւ արգելքներ կը պատճառէր: Նորադանդներն ասոնք կրելով, բայց ամէն բանէն աւելի քննելով ու տեսնելով թէ հին տոմարին մէջ ստուգիւ սխալ կայ եւ թէ ետ մնացած 10 օրերը դար դարի վրայ պիտ'որ աւելնան, առանց ժամանակ կորսնցընելու եւ ուշացընելուն վրայ արհաճելով՝ ընդհանուր որոշեցին որ նոր տոմարն ընդունին, եւ 1700ին Անգղիա, Գերմանիային բողոքական տերութիւնները, Շուէտ, Նորուեգիա, Տանիմարգա, Հելուեաիայի բողոքական նահանգներն ու շատ ուրիշ տեղուանք միաբան նոր տոմար գործածելու սկսան. սա վախճանաւ նաեւ նոյն տարւան փետրուարն՝ որ 29 օր էր՝ 18 օր սեպտեցին: Հիմա միայն Ռուսերը, Յոյները, Հայերն ու մէկ քանի սակաւաթիւ արեւելեան ազգերը դեռ հին տոմարը կը գործածեն:

### Հայոց Թոռակասն

Ինչպէս յառաջ ըսինք՝ մեր ազգին թուականը ըստ հաւանական կարծեաց Մարաց ու Բաբելոնաց հետ շատ հին ատեններէ՝ Բրիտտոսէ իբր 747 տարի առաջ սկսած է, ու ի սկզբանէ հետէ արեգակնային տարին ունէր. բայց անոր ընթացքը արեգական (երկրի) ընթացքին հետ հաւասար պահելու համար հարկաւոր եղած կարգն ու զգուշութիւնը չէր սահմանուած. ու միայն երկրի ընթացքին 365 ամբողջ օրը կը բռնուէր, իսկ վեց ժամերը՝ որ ամէն տարի կ'աւելնային՝ չէր դիտուեր: Հնուցմէ ի վեր տարին բաժնուած էր տասուերկու հաւասար ամիսներու, որոնց ամէն մէկն 30 օր ունէր, ու ամէնը մէկանց կ'ընէին 360 օր. ուստի սա թիւը 365ի հաւասարցընելու համար երեքտասաներորդ ամիս մ'ալ դրուած էր՝ Ա-ելեաց անունով, որ ունէր 5 օր միայն: Ասանկով ամէն տարի միօրինակ ու հասարակ էր, նահանջ տարի չկար: Տարին կը սկսէր Նասասարդ ամիսէն, որ եւ էր առաջին ամիս: Հոս կը դնենք մեր ամիսները իրենց անունովն ու կարգովը.

1. Նաւասարդ .

2. Հոռի .

3. Սահմի .

4. Տրէ .

5. Բաղոց .

6. Արաց .

7. Մեհեկան .

8. Արեգ .

9. Ահեկան .

10. Մարերի .

11. Մարգաց .

12. Հրոտից .

13. Աւելեաց .



Արդ՝ ասանկ Հայոց տարին ամենեւին նահանջ չու-  
նենալով՝ Հռոմայեցւոց ու Յունաց տարին նահանջ եղած  
ատենը՝ ասոնցմէ օր մը յառաջ կ'երթայ ու կը տարբերի .  
ուստի թէ որ Հայոց տարին՝ կամ Նաւասարդին՝ որ է ա-  
ռաջին ամիսին՝ մէկը Հռոմայեցւոց հասարակ տարւոյն մէկ  
ամսոյն՝ զոր օրինակ յուլիսի 31ին իյնայ, չորս տարի անց-  
նելէն ետքը՝ երբ որ ասոնք Նահանջ տարի ունեցած կ'ըլ-  
լան, որն որ հասարակ տարիէն օր մը աւելի կը բովանդակէ՝  
Հայոց Նաւասարդի մէկը կամ տարւոյն առջի օրը յուլիսի  
31ին չիգար հապա 30ին կու գայ, դարձեալ չորս տարի  
ետքը նոյն ամսոյն 29ին կու գայ, ու ասանկ 4 տարիէ 4 տարի  
օրով մը յառաջ երթալով՝ 120 տարիէն ետքն ամբողջ ա-  
միս մը յառաջ կու գայ Հայոց տարւոյն սկիզբը կամ նաւա-  
սարդի մէկը՝ այսինքն յունիսի 30ին . ու 1460 տարւան մէջ  
ամբողջ տարի մը Հռոմայեցւոց ու Յունաց տարիէն աւելի  
կ'ըլլայ :

Քրիստոնէութիւնէ առաջ Հայոց թուականին գոր-  
ծածութեան ու տոմարին վրայ հեղինակաց մէջ մասնաւոր  
տեղեկութիւն մը չենք գտներ, եւ ո՛չ թէ երբ սկսած  
է քրիստոսի թուականը գործածուելու : Բայց ինչպէս մեր  
ազգային պատմիչները (Յովհ. Կաթողիկոս, Սամուէլ Ե-  
րէց, Վարդան, եւ ուրիշները) կը պատմեն՝ քրիստոսի  
թուականին 551 տարին Մովսէս Բ. կաթողիկոս Հայոց,  
որ շատոնցուրնէ կը փափագէր Հայոց թուականն ու  
տոմարը կարգի դնել ու նորոգել, կաթողիկոս ըլլալէն  
ետքը Դուին քաղքին մէջ եպիսկոպոսաց ու իմաստուն  
ազգայնոց ժողով մը ըրաւ, եւ ժամանակին ներելուն ու ան  
ատենուան տեղեկութեանց չափ քննութիւններ ընելով՝  
ազդերնուս նոր թուական ու տոմար մը հաստատեց, ու ան-  
կից ետքը սկսան Հայք ան տոմարն ու թուականը գործա-  
ծել : Արդ աս տոմարը կը սկսի, ինչպէս հին տոմարագրե-  
րուն մէջ կայ, քրիստոսի 552 տարւոյն յուլիս ամսոյն՝ 11ին,  
որ օր որ Հայոց առաջին ամսոյն՝ այսինքն Նաւասարդին ա-  
ռաջին օրը դրուեցաւ : Աւ թէ որ ուրիշ ազգաց պէս նահանջ  
տարի ալ սահմանուած ըլլար՝ Նաւասարդի մէկը՝ կամ Հայոց  
տարւոյն սկիզբն ամէն տարի յուլիսի 11ին կու գար, բայց  
աս չըլլալուն՝ ինտոր որ վերն ըսինք՝ ամէն տարի զատ օր կը  
հանդիպի, ինչպէս տոմար գործածողները կը տեսնեն :

Հայոց թուականը գտնելու համար քրիստոսի թուա-  
կանէն 551 հանելու է՝ մնացածը Հայոց թուականն է. ինչ-



պէս առ տարի Քրիստոսի թուականն է 1858. ասկից 551  
հանելու ըլլանք՝ կը մնայ 1307, եւ առ է առ տարուան  
Հայոց թուականը, որ կը լմննայ օգոստոս ամսոյն 18ին.  
եւ ասկից կ'երեւայ թէ իր հաստատուած կամ սկսած ժա-  
մանակէն՝ որ յամի տեառն 552 յուլիսի 11ին եղաւ, մինչեւ  
առ տարի իբր 10 ամիս ու 23 օր յառաջ գացեր է նահանջ  
տարի չունենալուն:

Տոմարներու մէջ նշանակուող քանի մը հաշիւներու  
կամ շրջաններու վրայ, որ են Իննե-դասներեակ կամ Ոսկե-  
գիր, Աերադեր, Եօթներեակ ու Գիր քարոյ, հաս քանի մը  
խօսք գրենք:

### Իննեդասներեակ

Թեպէտ եւ հին Յոյները իրենց լուսնական տարին  
արեգականային տարւոյն հետ հաւասարցրնելու համար նա-  
հանջ տարի հաստատեցին, սակայն ատեններ անցնելէն  
ետքն այն նահանջ տարւոյն մէջ աւելցուած օրերով ալ առ  
հաւասարութիւնը կատարեալ եւ շիտակ չէր մնար: Ասոր  
ալ ճար մը գտնելու համար Մեթոն ամթենացի աստեղա-  
գէտը (Քրիստոսէ 430 տարի առաջ) իր հմուտ քննու-  
թեամբը ցրցուց՝ որ արեգական (երկրի) ու լուսնոյ շրջան-  
ները հեղ մը մի եւ նոյն վայրկեանի մէջ մի եւ նոյն կետէն  
սկսելու ըլլան՝ տասնուինը տարւան մէջ մի եւ նոյն ժամա-  
նակ նոյն կէտը կու գան կը հասնին: Արովհետեւ ինչպէս  
յայտնի է երկրի արեգական բոլորաիքն ըրած տարեկան  
շրջանին ժամանակը կը տեւէ 365 օր ու 6 ժամ. ասիկա 19  
(տարիներուն) թուով բազմապատկելով՝ կ'ելլէ 6939 օր ու  
18 ժամ: Ասանկ նաեւ լուսնոյ մէկ ամսուան միջական ըն-  
թացքը՝ որ կը տեւէ 29 օր, 12 ժամ, 44 երկրորդական ու  
3 երրորդական վայրկեան, 235 թուով (որ է լուսնին 19  
տարւան մէջ ըրած ամսական շրջաններուն թիւը,) բազմա-  
պատկելով՝ կ'ելլէ 6939 օր, 16 ժամ, 31 ամբողջ վայրկեան  
ու 45 երկրորդական վայրկեան. ուսկից յայտնի կը տեսնուի  
որ 19 տարւան մէջ արեգական ու լուսնոյ շրջանին տարբե-  
րութիւնը միայն 1 ժամ, 28 ամբողջ վայրկեան ու 15 եր-  
կրորդական վայրկեան է: Աս վախճանիս համար գրուեցաւ  
տասնուինը տարւան շրջան մը:

Մեթոնին առ գիւտը, որ կ'անուանի Շրջան Իննե-



փաստնց կամ Իննե-փաստերեակ, Աթենացոց ու բոլոր Յու-  
նաց մէջ անանկ մեծ ընդունելութիւն գտաւ՝ որ սահմա-  
նեցին անիկակ ամէն տարի ոսկի գրերով տախտակի մը վրայ  
գրել ու քաղքին հրապարակին մէջ կախել. ասոր համար  
ալ աս Իննե-փաստերեակը նաեւ Ռաիեգի անուանեցաւ, ինչ-  
պէս առ հասարակ ամէն ազգաց տոմարներուն մէջ կը տես-  
նուի: Աս հաշուին կամ իննեւտասներեակին գործածու-  
թիւնը չէ թէ միայն հին Հռոմայեցոց հապանաեւ Հրէից,  
ինչպէս նաեւ ուրիշ ազգաց մէջ ալ մտաւ:

Աս (1858) տարւան մեր Իննեւտասներեակն է  
14. այսինքն 19 տարեկան շրջանին տասնուչորսերորդ տարին:

Աս 19 տարւոյ հաշիւը կամ իննեւտասներեակին շր-  
ջանը թէպէտ եւ ըստ կարի շիտակ կ'առաջնորդէր ամէն  
մէկ լուսնոյ ծնունդն ու լրումը գտնելու, բայց ինչպէս ըսինք՝  
նոյնչափ տարւան մէջ արեգական (երկրիս) ու լուսնոյ շր-  
ջաններուն մէջ մէկ ու կէս ժամու չափ տարբերութիւն կը մնար  
եւ շատ տարիներ անցնելէն ետքն այն ժամերը ամիս  
կ'ըլլային, որով դարձեալ հաշիւներու մէջ շփոթութիւն  
կը մտնէր: Ասոր համար յուլեան տոմարը տասնուվեցերորդ  
դարուն մէջ կարգի դրուած ու գրիգորեան նոր տոմարը յօ-  
րինուած ատենը՝ աս իննեւտասներեակին սխալն ալ շիտ-  
կելու համար նոր շրջան մը հնարուեցաւ, որ եւ կ'ըսուի  
Շրջան Աերադրաց կամ Աերադի, որով եւ լուսնոյ շրջանը  
ճիշդ գտնելու դիւրութիւն եղաւ:

### Վերադիր

Վերադիր ըսելով կ'իմանանք արեգակնային տարւոյն  
լուսնական տարիէն աւելի ունեցած օրերուն թիւը. կամ  
արեգակնային տարւոյն տասուերկու ամիսներուն լուսնական  
տարիին տասուերկու ամիսներէն ետքն աւելցած օրերը:  
Արդ որովհետեւ արեգակնային հասարակ տարին 365 օր,  
իսկ լուսնական տարին 354 օր ունի, անոր համար երկուքին  
մէջ եղած տարբերութիւնը կ'ըլլայ 11 օր. աս 11 օրը տարիէ  
տարի կ'աւելնայ. անանկ որ մէկ տարւոյն յաւելուածը կամ  
վերադիրը 11, երկրորդ տարւոյն՝ 22, երրորդին՝ 33 կ'ըլլայ,  
ու ասանկ յառաջ կ'երթայ: Ասով երեք տարին մէյ մը  
լուսնական տարին ամիս մը ու երեք օր յառաջ գացած կամ  
աւելի ունեցած կ'ըլլայ, եւ աս ամիսը մէկդի աւնելով՝ վե-  
րադիրը կ'ըլլայ Գ (3): Ասանկով երեք տարին մէյ մը լուս-



նական տարին արեգակնային տարիէն ամիս մը աւելի՛ կամ տասուիրէք ամիս ունենալով՝ ան տարին կ'ըսուի լուսնոյ նահանջ տարի, որ եւ կ'ունենայ 384 օր: Չորրորդ տարին՝ Գ (3) վերադիրին վրայ նոյն տարւոյն աւելցած 11 օրն ալ աւելցրնելով՝ վերադիրը կ'ըլլայ ԺԴ (14): Այսպէս տարւէ տարի առջի վերադիրին վրայ 11 օր աւելցրնելով՝ (ու երէք տարին մէյ մը լուսնոյ նահանջ տարի կամ 13 ամիս գնելով,) լուսնոյ 19 տարեկան շրջաններուն վերջը վերադիրը պինդ առջի վերադիրին հետ նոյն կ'ըլլայ: Ասկից կ'իմացուի՝ որ վերադիրներուն շրջանը՝ կամ վերադիրներուն թիւը՝ իննեւտասներեկաց թիւին համեմատ 19 է. որ իրարու ետեւէ աս կարգով կու գայ. ԺԱ. ԻԲ. Գ. ԺԴ. ԻԵ. Զ. ԺԷ. ԻԸ. Թ. ԻԱ. Բ. ԺԳ. ԻԴ. Ե. ԺԶ. ԻԷ. Ը. ԺԹ. Լ.

Պէտք է միայն գիտնալ՝ որ երբ որ վերադիրը շրջանին տասնուութերորդ տարւոյն մէջ Թ կ'ըլլայ նէ՛ ետեւէն եկած տարին կամ տասնուիններորդ տարին 12 պէտք է աւելցրնել ու վերադիրը ԻԱ ընել. որպէս զի 19 տարւոյն շրջանը լմնցած ատենը նոր վերադիրը լուսնոյ շրջանին համեմատ դարձեալ Բ կարենայ գրուիլ. որովհետեւ վերադիրները մեր ազգին մէջ գործածուելու սկսած ատենը՝ առաջին վերադիրը Բ գրուած է: Ինչպէս աս (1858) տարի մեր վերադիրն է ԻԵ. որ (ինչպէս վերը գրուած գրերէն կը տեսնուի,) առաջին վերադիրը Բ էն սկսելով՝ իննեւտասներեկակին տասնուչորսերորդ տարւոյն (ինչպէս է աս տարի) այդ ԻԵ վերադիրը կ'իյնայ:

### Եօթներեակ

Վրանի մը ազգաց մէջ կիրակին օր արեգակն կ'ըսուի, ու բոլոր տարւոյն մէջ կիրակի օրը դանելու համար՝ նոյն տարւոյն առջի կիրակիին համար մասնաւոր գիր մը կը գրուի, որ եւ կ'ըսուի Արեգակի. եւ ասիկա շրջանով մը որոշելու համար արեգակն շրջան մը սահմանուած է 28 տարիով, որն որ կամաւոր բան մըն է ու արեգակն ընթացքին հետ կապակցութիւն չունի: Ա'ըսուինաեւ Շաբաթի, որ բոլոր տարւոյն մէջ շաբթուն ամէն մէկ օրը կը ցուցրնէ: Աս վախճանի համար որոշուած են շաբթուն եօթը օրերուն համեմատ այբուբենին եօթը գրերը. Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. որոնք տարւէ տարի՛ մինչեւ 28 տարեաց շրջանին վերջն՝ իրարու ետեւէ կը յաջորդեն, բայց մի եւ նոյն շրջա-







Երբ որ աս գրերէն մէկը տարւոյ մը համար կը սահմանուի ու կը դրուի՝ իր թուոյն համեմատ կը ցուցնէ. թէ ան տարի զատիկը մարտի 21էն քանի օր ետքն է: Ուստի ամէն տարի զատիկը մարտի թէ ապրիլի մէջ՝ կամ թէ աս ամիսներուն որ օրը հանդիպիլը գտնելու ու գիտնալու համար մարտի 21ին վրայ պէտք է աւելցնել ան տարւոյն գրին թիւը ու ան երկու ամիսներուն որ օրն որնոյն թիւն ունեցող օրուանը կը հաւասարի՝ ան օրն է զատիկը: Ինչպէս աս (1858) տարի Գիր տարւոյն է Բ. այսինքն 2. արդ մարտի 21ին վրայ 2 ալ դնենք՝ կ'ըլլայ 23. եւ աս աս տարի մարտի 23ին է զատիկ: Անցած տարի Գիր տարւոյն էր 2. այսինքն 17. մարտի 21ին վրայ 17 օր ալ աւելցնենք՝ կ'ըլլայ ապրիլի 7. որ օր որ անցած տարի զատիկ էր:

Ասանկ ամէն մէկ գիրը հասարակ տարւոյ մէջ զատիկն օրը կը ցուցնէ. բայց նահանջ տարի եղած ատենը գիր տարւոյն մէկ չըլլար հապա երկու կ'ըլլայ, որոնց մէկը կը գործածուի տարւոյն սկիզբէն մինչեւ փետրուարի վերջը, իսկ մէկալը մարտի մէկէն մինչեւ դեկտեմբերի վերջը. եւ աս մինչեւ տարւոյն վերջը գացող գիրը միշտ առջի թիւէն մէկ պակաս՝ ու այբուբենի մէջ անկից առաջ ըլլող գիրն է. ինչպէս թէ որ նահանջ տարւոյն գիրը Լ է՝ երկրորդ գիրը կ'ըլլայ Ի. ու ան ատեն Լ գիրը կը բանի մինչեւ փետրուարի վերջը, իսկ Ի գիրը մարտին առջի օրէն կը սկսի ու կ'երթայ մինչեւ տարւոյն կամ դեկտեմբերին վերջը: Աս պատճառով որովհետեւ Ք գիրը միշտ նահանջ տարիի կը հանդիպի, ուստի եւ միշտ Փ գրէն առաջ կը դրուի, անոր համար ոչ երբեք բոլոր տարին կը գործածուի, հապա տարւոյն առջի օրէն մինչեւ փետրուարի ետքի (29) օրը:

Աս աս ալ կը ծանուցանենք՝ որ Գիր տարւոյն Ա երադիրներուն ու Եօթներեակներուն կը հետեւի. եւ ինչպէս որ ասոնք մէկ շրջանին մէջ այլ եւ այլ կարգով իրարու ետեւէ կու գան, ասանկ ալ Գիր տարւոյն այբուբենին դրերուն կարգովը չերթար, հապա զանազան կարգով մէկը մէկալին կը յաջորդէ մինչեւ շրջանին վերջը. ու ետքը նորէն կը սկսի ան կարգով՝ որով առաջին շրջանին մէջ սկսած էր:

Աս տեղս ասոնց վրայ միայն քանի մը կարեւոր տեղեկութիւն տալու համար այսչափ բան գրեցինք, կատարեալ տեղեկութիւն ունենալ ուզողները Տոմարագիտութեան գիրքեր պէտք է որ կարդան:



# ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Արեւնի ու Երկիրը


ԵՍՏՄԱՆԱԿՆԻՍ կամ տարինիս՝ ինչպէս ամէն մարդ գիտէ, երկրիս շարժումէն կը չափենք, եւ աս երկիրս երբոր արեւուն չորս դին մէկ անգամ մը դառնալով նորէն առջի տեղը գալու ըլլայ, ընդարձակ ժամանակի միջոց մը կ'անցնի եւ աս միջոցը Տարի կոչուած է, որն որ 12 Ամիսներու բաժնուած է եւ աս ամիսներուն ամէն մէկը անհաւասար թուով (երբեմն 31, երբեմն 30, երբեմն 28) Օրերու բաժնուած է, որոնց ամէն մէկը դարձեալ 24 ժամ կը բաժնուի եւ ամէն մէկ ժամ իրեն 60 վայրկեանը ունի, որոնց ամէն մէկը դարձեալ իր 60 Մանրերկրորդն ունի եւ այլն: Ուստի երկիրս արեւուն չորս դին, 365 օրուան, 5 ժամու, 48 վայրկենի ու 51 մանրերկրորդի մէջ իր հակաթաձեւ ճամբան կ'ընէ: Բայց որպէս զի խօսելիքնիս յայտնի ըլլայ՝ երկիրը շարժող դնելու տեղ՝ արեւը շարժող դնենք, ինչպէս որ աչքերնուս ալ առանկ կ'երեւայ՝ (թէպէտ միտքերնուս չէ, բայց կը գտնուին անանկ ուամիկներ՝ որ զդայարանքներնէն վեր չկրնալով ելլել՝ կը պնդեն թէ բուն արեւն է շարժողը): Թէ որ արեւուն շարժմանը մտադրութեամբ նայելու ըլլանք՝ կը տեսնենք որ միշտ իր դիրքը կը փոխէ եւ մէկ տարուան միջոցին մէջ երկնից կամարին վրայ ծուռ ճամբայ կը կազմէ. (հոս երկրիս օրական շարժումը չեղածի պէս կը սեպենք, որն որ իր առանցքին վրայ դառնալէն կը պատճառի, որով գիշեր ցորեկը յառաջ կու գայ). աս ծուռ ճամբան՝ աստղաբաշխները Ծիր խաւարման կը կոչեն, որն որ 12 մաս ունի: Աստղաբաշխները դարձեալ աս ծիրին երկու կողմը իննական աստիճան լայնքնելով՝ երկնից վրայ գօտի մը կը մտածեն, որուն Զողիակոս կամ Աենդանակամար անուն կու տան եւ



աս գօտին 12 մաս կամ աստեղատուն ունի, որոնք զատ զատ անուններ ու նշաններ ունին, ինչպէս

- |             |               |               |                |
|-------------|---------------|---------------|----------------|
| 1 Խոյ Մ     | 4 Խեցգետին 69 | 7 Աշու Ը      | 10 Այծեղջիւր Ծ |
| 2 Յուլ Ծ    | 5 Առիւծ Զ     | 8 Կարիճ Թ     | 11 Զրհոս Ծ     |
| 3 Երկաւոր Թ | 6 Կոյս Թ      | 9 Աղեղնաւոր → | 12 Չուկն Ս     |

Արովհետեւ արեւը ասոնց վրայէն կ'անցնի՝ անոր համար իր ճամբան ալ ասոնց անուններն ու նշանները կ'առնու. ուստի եւ ծիր խաւարման ըսուածը 12 մաս կը բաժնուի, որոնց անուններն ու նշանները վերիններուն հետ նոյն են: Ըսածնիս աւելի զգալի ընելու համար՝ պատկեր մը դնենք, որն որ երկրիս երկու կիսագունդները կամ երեսները կը ցուցնէ.



ասոր վրայ արեւուն ըրած ծուռ ճամբան կամ ծիր խաւարմանը ու տարւան մէջ անցած տեղերը երկիրները կը տեսնուին. ինչպէս զողիակոսի նշաններէն յայտնի է, որոնց վրայէն արեւը կը քայլէ (Պատկերին մէջի կողմ կամ ծուռ գիծը բուն երկնից վրայ մտածելու է): Հոս կը տեսնուի նաեւ թէ արեւը իր ճամբան երբեմն վեր դէպ ի հիւսիս եւ ետքէն նորէն վար դէպ ի հարաւ կը ծռէ. ան բարձր կէտը՝ ուսկից որ նորէն վար իջնալու կը սկսի (Պատկերին մէջ աս 69 նշանով է) Արեւադարձ խեցգետնի կը կոչուի. իսկ ան ցած կէտը՝ ուսկից որ նորին վեր ելլելու կը սկսի (Պատկերին մէջ աս Ծ նշանով է) Արեւադարձ այծեղջեր կը կոչուի: Աս երկու կէտերուն մէջ տեղը գտնուած կամ երկրիս Հասարակածին վրայ գտնուած երկու կէտերը կամ Խոյն Մ ու Աշուր Ը, այնպիսի կէտեր են՝ ուր արեւը հասած ատեն երկրիս վրայ գիշեր ցորեկ հաւասար կ'ըլլայ. առջի նշանին վրայ



եղած ատեն Գարնան գիշերահաւասար կ'ըլլայ, իսկ երկրորդ նշանին վրայ եղած ատեն Աշնան գիշերահաւասար կ'ըլլայ: Արեւը աս յիշուած չորս կէտերուն վրայ հասած ատեն՝ մեզի նկատմամբ՝ որ երկրիս հիւսիսային կողմը կը բնակինք, մեր օդին ու երկրին վրայ շատ մեծ ազդեցութիւն ունի, որովհետեւ մեզի մօտենալով ու հեռանալով՝ զատ զատ եղանակներ կը կազմէ. ուստի մենք ալ ստիպուած ենք չորս եղանակ զանազանելու, որ է Գարուն, Ամառ, Աշուն, Չմեռ: Աղէկ մտածողը կ'իմանայ որ աս եղանակներուն բնականապէս երբ սկսիլը ու երբ վերջանալը չիկրնար ճիշդ որոշուիլ, մանաւանդ զանազան տեղերու նկատմամբ. բայց որոշ ատեն մ'ըլլալու համար՝ մերձաւոր եղանակաւ աստղաբաշխները՝ արեւուն վերը յիշուած չորս կէտերուն հասած ատենը որոշած են:

**Չորս աստղաբաշխական եղանակները**

Գարունը կը սկսի Մարտի 9ին անցած գիշերը՝ երբ արեւը խոյին նշանը կը մտնէ:
Ամառը " " Յունիսի 10ին " " " " " " " " " " " " " " " "
Աշունը " " Սեպտեմբ. 11ին առտուն՝ " " " " " " " " " " " " " " " "
Չմեռը " " Դեկտեմբ. 10ին " " " " " " " " " " " " " " " "

— Արկրիս արեգական չորս դին ըրած ճամբան, դիրքը ու անկէ պատճառած տաքութեան տարբերութիւնները կամ եղանակները եւ դարձեալ ճամբուն վրայ հասած աստղատունները որոշ տեսներու համար ետեւի պատկերին միտ դնել:



ԳԻՇԵՐԱՀԱՒԱՍԵՐ ԱՇՆԱՆ  
Խոյ  $\gamma =$  Սեպտեմբեր

Յուլ  $\delta =$  Հոկտ.

Չուին  $\chi =$  Օգոստ.

Նոյեմբեր  $\pi =$  Նոյեմբ.

Զրհու  $\approx =$  Յուլիս

Խեցդեկտ.  
69 =  
Դեկտեմբ.

Այժեղ  
 $\lambda =$   
Յունիս


Անիւծ  $\delta =$  Յունուլ.

Աշեղնաւոր  $\leftrightarrow =$  Մայիս

Ապրիլ  $\pi =$  Փետր.

Ապրիլ  $\pi =$  Ապրիլ

Աշիւ  $\frac{\delta}{\pi} =$  Մարտ  
ԳԻՇԵՐԱՀԱՒԱՍԵՐ ՓԱՐՆԱՆ





լու է : Բայց հոս գիտնալու է որ՝ մինչեւ հիմա արեւը շարժող  
մտածեցինք . բայց հոս երկիրն է շարժողը . ուստի աս պատ-  
ճառաւ երբոր արեւը օրինակի համար Այծեղջեր վրայ է նէ՝  
երկիրը ըստ ամենայնի Այծեղջեր հակառակ աստեղատան  
վրան է՝ որ է խեցգետնի . այսպէս իմանալու է ամէն աստե-  
ղատանց համար ալ : Գարձեալ պատկերին մէջ արեւուն  
դարձած երեւները լուսաւոր ու մէկալները մութ նկարուած  
են . բայց որովհետեւ երկիրը նաեւ իր առանցքին (Բ՝ ու Բ  
գիծին) վրայ ալ կը դառնայ Չ՛Ա ժամու մէջ , անոր հա-  
մար օրուան մը մէջ բոլոր երկրիս երեսը կը լուսաւորի ու միշտ  
մէկ երեսը լուսաւորելու ատեն մէկալը կը մթըննայ , որով եւ  
ցորեկ ու գիշեր իրարու անդադար կը յաջորդեն : Բայց աս ալ  
գիտնալու է որ երկրիս առանցքը իր ճամբուն վրայ շիտակ  
դիրք չունի , հապա ծուռ կեցած է . անոր համար՝ գիշերը  
ցորեկուան հաւասար չէ . դարձեալ նոյն պատճառաւ եւ  
երկրիս կլորութեանը համար մէկ կամ մէկալ բեւեռին  
կողմերը օրերով շաբաթներով ու ամիսներով լոյս չեն տես-  
ներ եւ վերջէն ամիսներով կը տեսնեն : Գարձեալ աս ծուռ-  
թեան պատճառաւ օդերուն փոփոխութիւնները կը ծա-  
գին : Արովհետեւ երկիրը իր ճամբուն վրայ յառաջ երթա-  
լու ատեն՝ արեւուն ճառագայթները իր վրայ միշտ նոյն ե-  
ղանակաւ չեն իյնար . զորօրինակ արեւը Այծեղջեր վրայ ե-  
ղած ատեն կամ երկիրը խեցգետնին վրայ եղած ատեն՝ ար-  
եւուն շիտակ ճառագայթները՝ որոնք բուն տաքցընող ճա-  
ռագայթներն են եւ պատկերին մէջ կէտկէտով նշանա-  
կուած են , երկրիս հարաւային կողման վրայ կ'իյնան , ինչ-  
պէս պատկերին մէջ ձախ կողմը կը տեսնենք (Բ՛ գիրը միշտ  
հիւսիսային բեւեռը կը ցուցընէ) . իսկ հարաւային կողմը ին-  
կող ճառագայթները միշտ ծուռերն են . ուստի աս պատ-  
ճառաւ արեւուն ազդեցութիւնը քիչ կ'ըլլայ , ցուրտը կը  
տիրէ . իսկ անոր հակառակ հարաւային կողմերը խիստ տա-  
քը կը տիրէ : Աս եղանակաւ՝ պատկերին աջ դին եղող եր-  
կրագնդին վրայ կը տեսնենք որ արեւուն ուղիղ ճառա-  
գայթները հիւսիսային մասին վրայ կ'իյնան , որով եւ հոն  
աւելի կը տաքնայ . որովհետեւ արեւը խեցգետնին վրան ե-  
ղած կամ երկիրը Այծեղջեր վրան եղած ատեն՝ արեւուն  
ճառագայթները նոյն դիրքը կ'առնուն : Աս ըսուածները բոլոր  
մէկալ մասերուն ալ կրնանք մերձեցընել : Աւրեմն ան ա-  
տեն մեզի դարուն ամառ կու գայ՝ երբոր արեւուն շիտակ  
կամ ուղիղ ճառագայթները մեզի կը մօտենան :



## Տարուոյս վարիչ աստղը

Աստարուան երկրիս օդին կառավարութիւնը Փայլածուին կամ Հերմեսին (Մէրքուր) ձեռքն է, որն որ խառն կամ միջակ օդ ու աղէկ բերք կը բաշխէ՝ ըստ հին կարծեաց: Հին ժամանակէ վեր անտեսի պէս, երկրագործի պէս մարդիկ՝ օգերուն որպիսութիւնը յառաջընէ գիտնալու համար՝ մտադրութիւն ընելով այնպէս մը գտած են որ եօթը տարուան մէջ ամէն մէկ տարին զատ զատ նկարագիր կամ բնութիւն ունի, եւ ասկէ վերջն եկող ութերորդ տարին առջի տարւոյն հետ նոյն նկարագիրը կ'ունենայ, զորօրինակ 1840, 1847, 1854, 1861 եւայլն, նոյն նկարագիրն ունենան պիտի: Հիները աս երեւոյթին պատճառ մը տալու համար՝ երկնային մարմիններուն դիմեցին եւ երկնից 7 շարժական լուսաւորներուն տուին երկրիս կառավարութեան սանձը, որոնք էին, Երեւակ (Արոնոս), Լուսնթագ (Արամազդ), Հրատ (Արէս), Արեւ, Արուսեակ (Աստղիկ), Փայլածու (Հերմէս) ու Լուսին. ուստի աս աւելորդապաշտական կարծեաց համաձայն ամէն մէկ տարի իր աստղն ունէր ու անով կը կառավարուէր: Թէ որ եօթը տարուան շրջանը հաւանականութիւն մը ունի նէ ալ՝ իր պատճառը երկրիս վրայ փրնտուելու է, երկնից վրայ փնտուելը ծաղրական է, ապա թէ ոչ՝ հիմա որ շարժական աստղներուն կամ մոլորակներուն թիւը շատցած է ու երթալով նոր նոր գտնուելու վրայ է, 7 տարուան շրջանը Քի 9ի 10ի 11ի եւայլն, պիտի փոխուէր: Արդէն մինչեւ հիմա գտնուած մոլորակներուն թիւը 51ի հասաւ:

## Խառարոտներ

Աստարի երկու Արեւու եւ երկու Լուսնոյ խառարոտմ ունինք, որոնց մէկ արեւու ու մէկ լուսնոյ խառարոտմը միայն մեր կողմերը պիտի տեսնուի:

1. Լուսնոյ խառարոտմ, Փետրուար 16. Ասիկա մասնական խառարոտմ մըն է 4 մաս մեծութեամբ. իր բոլոր ընթացքին ատենը Եւրոպայի ու Ափրիկէի մէջ պիտի տեսնուի. սկսելու ատենը Ասիայի ու Աւստրալիայի մէջ ու վերջը Ամերիկայի մէջ ալ պիտի տեսնուի:

2. Արէս խառարոտմ, Մարտ 3. Ասիկա օղակաձեւ խառարոտմ մըն է, որ բոլոր Եւրոպայի մէջ պիտի տեսնուի,



նաեւ Հիւսիսային Ամերիկայի արեւելեան կողմերը, Հարաւային Ամերիկայի հիւսիսային կողմերը, Ափրիկէի հիւսիսային արեւմտեան կողմերը ու Ասիային արեւմտեան դիերը : Պօլսոյ մէջ ժամը 20ը 24 վայրկեան անցած պիտի տեսնուի :

3. | ուսնոյ խաւարոս, Օգոստոս 12. Ասիկա մեծ մասնական խաւարում մըն է  $57/10$  մատ մեծութեամբ. մեր կողմերը չիտեսնուիր, որովհետեւ խաւարման ատեն մեզի ցորեկ է. իր բոլոր ընթացքին ատենը Աւստրալիայի ու հարաւային Ասիայի մէջ պիտի տեսնուի. սկսելու ատեն Հիւսիսային Ամերիկայի հարաւային արեւմտեան կողմերը, իսկ վերջը արեւելեան Ափրիկէի մէջ պիտի տեսնուի :

4. Արեւոս խաւարոս, Օգոստոս 26. Ասիկա ամբողջական խաւարում մըն է, որն որ մեր կողմերը պիտի չտեսնուի. միայն Միջին ու Հարաւային Ամերիկա, քիչ մը տեղաւ Հիւսիսային Ամերիկա ու Ափրիկէ պիտի տեսնուի :





## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Երրոսյայի գլխաւոր վեհապետաց ցեղաքանոնթիւնը

**ԱՆԳՂԻԱ** (Մայրաքաղաք՝ Լոնտոն, կրօն՝ անգղիական). թագուհի՝ Վիկտորիա Ա. ծնած 24 Մայ. 1819. թագաւորած 20 Յունիսի 1837. պսակուած 28 Յունիսի 1838. ամուսնացած 10 Փետ. 1840 Սաքսէն Գոպուրկ կոթայի Ալպերդ իշխանին հետ (ծն. 26 Օգ. 1819) — թագաժառանգ՝ Ալպերդ Եդուարդ Ռուելի իշխան, ծն. 9 Նոյ. 1841.

**ԱՒՍՏՐԻԱ** (Մայրաքաղ. Վիէննա, կրօն՝ Ռուղաւիառ) կայսր՝ Փրանկիսկոս Յովսէփ, ծն. 18 Օգ. 1830. թագ. 2 Դեկ. 1848. ամսն. 24 Ապր. 1854 Եղիսաբէթ Պաւիէրայի դքսուհւոյն հետ (ծն. 24. Դեկ. 2837): — թագաժառանգ՝ Եղբայրը Փերդինանդ Մաքս, ծն. 6 Յուլ. 1832.

**ԲԱՐՄԱ** (Մայրաքաղ. Բարմա, կրօն՝ ուղղաւիառ) դքսուհի՝ Մարիամ Լուիզ Պուրպոնեան՝ Խնամակալ, ծն. 21 Սեպ. 1819. այրի մնաց 26 Մարտ 1854. Դուքս անչաւիահաս Ռուպերդ, ծն. 9 Յուլ. 1848.

**ԲԵՂԴԻԱ** (Մայրաքաղ. Պրիւսսէլ, կրօն՝ վեհապետի աւետարանական, տէրութեան՝ ուղղաւիառ) թագաւոր Լէոօրդ Ա. ծն. 16 Դեկ. 1790. թագ. 21 Յուլ. 1831. ամսն. 9 Օգ. 1832 Լուիզ իշխանուհւոյն՝ Գաղղիայի Լուդովիկոս Փիլիպպոս Ա. թագաւորին դստերը հետ (ծն. 3 Ապր. 1812. † 11 Հոկ. 1850). — թագաժառանգ՝ Լէոօրդոս Լուդովիկոս, Պրուսսիոյի դուքս, ծն. 9 Ապր. 1835. ամսն. 10 Օգ. 1853 Մարիամ Հենրիկէ Աննա Աւստրիայի արքիդքսուհւոյն հետ (ծն. 23 Օգ. 1836):

**ԲՈՐԴՈՒԿԱԼ** (Մայրաքաղ. Լիսապոն, կրօն՝ Ռուղաւիառ) թագաւոր Պետրոս Ե. տէ Ալքանդարա, ծն. 16 Սեպտ. 1837, թագ. 15. Նոյ. 1853. — թագաժառանգ՝ Եղբայրը Լուդ. Փիլիպպոս, ծն. 31 Հոկտ. 1838.



**ԳԱՂՂԻԱ** (Մայրաքղ. Բարիզ. կրօն՝ Ուղղափառ) կայսր՝ Լուդովիկոս Նաբոլէոն Գ. ծն. 20 Ապր. 1808. Թագ. 2 Դեկ. 1852. ամսն. 29 Յունուարի 1853 Եզդինիա Մոնղոլիայի դքսուհւոյն հետ. — Թագաժառանգ՝ Եզդինիոս Լուդովիկոս Նաբոլէոն. ծն. 16 Մարտ 1856.

**ԴԱՆԻԱ** (Մայրաքղ. Գորենհայն. կրօն՝ աւետարանական) Թագաւոր՝ Փրեդերիկոս Է. կայսրի Երեսփան. ծն. 6 Հոկ. 1808. Թագ. 20 Յունվ. 1848. Երրորդ անգամ ամսն. 7 Օգ. 1850 Դաններ կոմսուհւոյն հետ. — Թագաժառանգ՝ Փերդինանդ (հորեղբայր) ծն. 22 Նոյ. 1792.

**ԴՈՍԿԱՆԱ** (Մայրաքղ. Ֆիորենցա. կրօն՝ Ուղղափառ) Մեծ դուքս Լէոբոլտոս Բ. ծն. 3 Հոկ. 1797. յաջորդեց 18 Յունիս 1824. — Ժառանգ Փերդինանդ (ծն. Յունիս 1835)

**ՀԱՆՆՈՎԷՐ** (Մայրաքղ. Հաննովեր. կրօն՝ աւետարանական). Թագաւոր՝ Գէորգ Փրեդերիկոս Է. ծն. 27 Մայ. 1819. Թագ. 18 Նոյ. 1851. ամսն. 18 Փետ. 1843 Մարիամ Սաքսեն Ալդենայուրկի իշխանուհւոյն հետ. — Թագաժառանգ Էրանդ Աւգոստոս ծն. 21. Սեպ. 1845.

**ՀՈԼԼԱՆՏԱ** (Մայրաքղ. Ամսդերտամ. Թագաւորանիստ քղ. Հաակ. կրօն՝ լուտերական). Թագաւոր՝ Ալեքսանդր Գուլիէլմոս Գ. ծն. 19 Փետր. 1817. Թագ. 17 Մարտ 1849. ամսն. 18 Յունիս 1839 Վիլհելմուրկի Սոփիա իշխանուհւոյն հետ (ծն. 17 Յունիս 1818). — Թագաժառանգ Գուլիէլմոս Օրանիայի իշխան ծն. 4 Սեպ. 1840.

**ՀՌՈՄԱՅԻ ՏԷՐՈՒԹԻՒՆ** (Մայրաքղ. Հռոմ. կրօն՝ Ուղղափառ) Քահանայապետ Պիոս Թ. (յառաջ Յովսէփ Մարիամ՝ Մասթայի Ֆերեդդիի կոմս). ծն. Սինիկալիա 13 Մայ. 1792. Բոլոր ուղղափառ եկեղեցւոյ գլուխ ընտրուեցաւ 16 Յունիս 1846.

**ՄՈՏԵՆԱ** (Մայրաքղ. Մոսկնա. կրօն՝ Ուղղափառ) դուքս՝ Փրանկիսկոս Է. ծն. 1 Յունիս 1819. յաջորդեց 21 Յունվ. 1846.

**ՅՈՒՆԱՍՏԱՆ** (Մայրաքղ. Աթէնք. կրօն՝ Թագաւորի Ուղղափառ, Տէրութեան՝ Յունադաւան) Թագաւոր՝ Ոթոն Ա. Պաւիէրայի իշխան, ծն. 1 Յունիս 1815 Թագ. 7 Մայ. 1832, ամսն. 22 Նոյ. 1836 Օլտենայուրկի Ամալիա իշխանուհւոյն հետ (ծն. 21 Դեկ. 1818)

**ՆԷԱՊՈԼԻՍ, ՍԻԿԻԼԻԱ** (Մայրաքղ. Նէապոլիս. կրօն՝ Ուղղափառ) Թագաւոր՝ Փերդինանդ Բ. ծն. 12 Յունվ. 1810. Թագ. 8 Նոյ. 1830. Երրորդ անգամ ամսն. 9 Յունվ.



1837 Աւստրիայի Մարիամ Թերեզիա արքիդքսուհւոյն  
հետ (ծն. 31 Յուլ. 1836). — Թագաժառանգ՝ Փրանկիս-  
կոս Մարիամ Լէոօրա. ծն. 16 Յունւլ. 1836.

ՇՈՒԵՏ ՈՒ ՆՈՐՈՒԵԳԻԱ (Մայրաքղ. Սթոքհոլմ.  
կրօն՝ լուտերական) Թագաւոր՝ Օսքար Ա. ծն. 4 Յուլ. 1799.  
Թագ. 8 Մարտ 1844. ամսն. 19 Յունիս 1823. Լայհթէն-  
պէրկի իշխանուհի Եոզէֆինային հետ (ծն. 14 Մարտ 1807).  
— Թագաժառանգ՝ Կարոլոս Լուդովիկոս, ծն. 3 Մայ. 1826.

ՊԱՏԷՆ (Մայրաքղ. Գարլարուհէ, կրօն՝ աւետարա-  
նական) մեծ դուքս՝ Փրեդերիկոս ծն. 9 Սեպտ. 1826 իշխ.  
24 Ապր. 1852. — Թագաժառանգ՝ Փրեդերիկոս Գուլիել-  
մոս ծն. 9 Յուլ. 1857.

ՊԱԻԻԷՐԱ (Մայրաքղ. Միւնչէն. կրօն՝ Ուղղափառ)  
Թագաւոր Մաքսիմիլիան Յովսէփ Բ. ծն. 28 Նոյ. 1811.  
Թագ. 21 Մարտ 1848. ամսն. 12 Հոկտ. 1842 Պրուշի-  
Մարիամ իշխանուհւոյն հետ (ծն. 15 Հոկ. 1825). —  
Թագաժառանգ՝ Լուդովիկոս Ոթոն ծն. 25 Օգ. 1845.

ՊՐՈՒՇ (Մայրաքղ. Պերլին. կրօն՝ աւետարանական)  
Թագաւոր Փրեդերիկոս Գուլիելմոս Գ. ծն. 15 Հոկ. 1795.  
Թագ. 7 Յունիս 1840. ամսն. 29 Նոյ. 1823 Պաւիերայի  
Եղիսաբէթ իշխանուհւոյն հետ (ծն. 13 Նոյ. 1801). —  
Թագաժառանգ՝ Գուլիելմոս Լուդովիկոս (Եղբայր). ծն. 22  
Մարտ 1797.

ՌՈՒՍԱՍՏԱՆ (Մայրաքղ. Բեդերսպուրկ, կրօն՝ Յու-  
նադաւան) կայսր՝ Ալեքսանդր Բ. ծն. 29 Ապր. 1818.  
Թագ. 2 Մարտ 1855. ամսն. 28. Ապ. 1841 Հեսսէն  
Տարմշդատի Մարիամ իշխանուհւոյն հետ (ծն. 2 Օգ.  
1824. — Թագաժառանգ Նիկոլայոս ծն. 20 Սեպ. 1843:

ՍԱՐԴԻՆԻԱ (Մայրաքղ. Դուրին, կրօն՝ Ուղղափառ)  
Թագաւոր՝ Վիկտոր Էմմանուէլ Բ. ծն. 14 Մարտ 1820.  
Թագ. 23 Մարտ 1849. ամսն. 13 Ապր. 1842 Աւստրիայի Ա-  
տելայիտ իշխանուհւոյն հետ (ծն. 3 Յունիս 1822. † 20 Յուն.  
1855). — Թագաժառանգ՝ Հումպերդ ծն. 14 Մարտ 1844.

ՍԱՔՍՈՆԻԱ (Մայրաքղ. Տրեզանէն. կրօն՝ Թագաւորին  
ուղղափառ, աէրութեան՝ լուտերական) Թագաւոր՝ Յով-  
հաննէս ծն. 12 Դեկ. 1801. Թագ. 9 Օգ. 1854 ամսն.  
16 Նոյ. 1822 Պաւիերայի Ամալիա իշխանուհւոյն հետ (ծն.  
13 Նոյ. 1801). — Թագաժառանգ՝ Ալպերդ, ծն. 23 Ապր.  
1828, ամսն. Կարոլինա Վազա իշխանուհւոյն հետ (ծն. 5  
Օգ. 1833).



ՍՊԱՆԻԱ (Մայրաքղ. Մադրիտ. կրօն՝ Ուղղափառ) թագուհի՝ Մարիամ Իզապելլա Բ. ծն. 10 Հոկ. 1830. թագ. 29 Սեպ. 1833. ամսն. 10 Հոկ. 1846 Փրանկիսկոս Ասիզեան իշխանին հետ (ծն. 13 Մայ. 1822). — Թագաժառանգ՝ Մարիամ, ծն. 20 Դեկտ. 1851.

ՎԻՒՐԴԵՄՊԵՐԿ (Մայրաքղ. Շտուդիարդ. կրօն՝ լուտերական) թագաւոր՝ Գուլիելմոս Ա. ծն. 27 Սեպ. 1781. թագ. 30 Հոկ. 1816. երկրորդ անգամ ամսն. 15 Ապր. 1820 վիւրդեմպերկի Պաւղինէ իշխանուհւոյն հետ (ծն. 4 Սեպ. 1800). — Թագաժառանգ՝ Կարոլոս Փրեդերիկոս Աղեքսանդր, ծն. 6 Մարտ 1823. ամսն. 13 Յուլ. 1846 Ռուսաստանի Օլկա իշխանուհւոյն հետ (ծն. 11 Սեպ. 1822).

ՏԱՃԿԱՍՏԱՆ (Մայրաքղ. Կոստանդնուպոլիս. կրօն՝ Մահմեդական), Սուլթան Ապաիւլ Մէճիտ Խան, ծն. 23 Ապր. 1823. թագ. 2 Յուլ. 1839. — Թագաժառանգ. Ապաիւլ Ազիզ (եղբայր).

ՕԼՏԵՆՊՈՒՐԿ (Մայրաքղ. Օլտեմպուրկ. կրօն՝ լուտերական) մեծ դուքս՝ Նիկ. Փրեդ. Պետրոս ծն. 8 Յուլ. 1827. յաջորդեց 27 Փետր. 1853.

### Իշխանք ո՛րչափ կ'իշխեն

Թէ իշխանք ընդ հանրապէս օրչափ ատեն կ'իշխեն կամ որոշ ատենուան մը մէջ օրչափ իշխան կ'իշխէ, յայտնի է որ զանազան ազգաց յաջորդութեան եղանակէն կախում ունի: Ընտրողական իշխանութեան եւ այնպիսի երկիրներու մէջ ուր որ վեհապետները հասարակօրէն կը սպաննուին կամ վար կ'առնուին, կառավարութեան ատեն որոշելու կանոն մը չիկրնար դրուիլ: Բայց Նեւտոն հաշուած է որ տէրութիւնը ինչ վիճակ ինչ կառավարութիւն ինչ դիպուած որ ունենայ, իշխանները վրայէ վրայ հաշուելով՝ 18ական մինչեւ 20ական տարի կը կառավարեն, ուստի կառավարութիւնները ընդհանրապէս կէս սերունդի տեւողութիւն ունին. որովհետեւ սերունդ մը (ժենէրասիոն) հասարակօրէն գրեթէ 33 տարի կը սեպուի եւ երեք սերունդ դար մը կը կազմէ: Իսկ Հայէս 10,105 տարուան մէջ 454 թագաւոր դնելով՝ վրայէ վրայ ամէն մէկուն 22<sup>1</sup>/<sub>3</sub> տարի հաշուեց: Աս հաշուին մէջն էին Եգիպտական, Աթենական թագաւորները, նոյնպէս Արգասի, Լիւդիայի եւ այլն. Յու-



դայի 18 թագաւորները, Անգղիայիները մինչեւ 1760, Սկոտլանդիայիները, Գաղղիայիները 987էն մինչեւ 1793, Սպանիայիները 1027էն մինչեւ 1788, Գերմանիայի կայսրները 800էն մինչեւ 1792, վերջապէս Հնդկաստանի 142 իշխանները:

Աւելի օգտակար կրնար ըլլալ թէ որ եւրոպական իշխանները մէկալներէն զատելով՝ իրենց տիրապետելուն միջին ժամանակը գտնայինք:

Անգլիա. Գուլիելմոս Ա.ին ակթուն ելլելէն (1066) մինչեւ Գէորգ Գ.ին մահը (1830) 764 տարի անցած է եւ 33 թագաւոր նստած է. ուստի 764ը 33ի վրայ բաժնելու ըլլանք՝ ամէն մէկ թագաւորին թագաւորութեան միջին ժամանակը կը գտնենք, որ է 23 տարի:

Գաղղիա. Հուկոյ Կապետէն (987) մինչեւ Լուդովիկոս Ժ.Չ. (1793), 806 տարի անցած է ու 32 թագաւոր իշխած է, որմէ ամէն մէկուն վրայէ վրայ հաշուելով 20 տարի կ'իյնայ:

Գերմանիա. Կարոլոս Մեծէն (800) մինչեւ Լէոփոլտոս Ա. (1792), 992 տարի անցած է ու 55 կայսր եկած է, որոնց իշխելու ատենը միջին հաշուով 18 տարի տեւած է:

Սպանիա. Փերդինանդ Մեծէն (1027) մինչեւ Կարոլոս Գ.ին հրաժարումը (1808), 781 տարի անցած է եւ 33 թագաւոր նստած է, որոնց ամէն մէկուն վրայէ վրայ 24ական տարի կ'իյնայ:

Սկոտլանդիա. Մալքոմ Ա.ին ակթուն ելլելէն (938) մինչեւ Յակոբ Զ.ին մահը (1625), 687 տարի անցած է ու 33 թագաւոր տիրապետած է, որոնց ամէնուն վրայէ վրայ 21 տարի կ'իյնայ:

Թէ որ 1066էն մինչեւ 1830 Անգղիայի, Գաղղիայի, Գերմանիայի, Սպանիայի ու Սկոտլանդիայի վեհապետները հաշուելու ըլլանք՝ 764 տարուան մէջ 172 վեհապետ կը գրտնենք, ուստի եւ իւրաքանչիւր տէրութեան վրայէ վրայ 34 իշխան կ'իյնայ ու իւրաքանչիւր իշխանաց ալ  $22\frac{1}{4}$  տարի կառավարութեան:

Յայտնի է որ հոգեւոր իշխաններուն իշխելու ժամանակը աւելի կարճ է, որովհետեւ ասոնք տարիքնին առած իշխանութեան կը հասնին. անոր համար Հռոմայի տէրութեան իշխանները կամ Քահանայապետները վրայէ վրայ հաշուելով գրեթէ 7ական տարի կ'իշխեն. ինչպէս 1000էն մինչեւ 1831 112 Քահանայապետ նստած է. ուստի 831 տարուան միջոցը 112ին վրայ բաժնելու ըլլանք՝ ըսածնիս կը ստուգուի:



# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

## ԳՆԽԱՌՈՐ ԶԱՄԻՆՆԵՐ

### Գ Ա Ղ Ղ Ի Ա

Մեդր, որն որ երկրիս միջօրէականին քառորդին 10,000,000 երորդ մասն է = 3 ոտք, 1 մատ ու 11 գիծ Վիէնն. = 1 մէյմար արշընը, 7 սաղ փարմազ ու 7 սաղըր փարմազ:

Տեւեդր (տասնամէդր) = 10 մէդր:

Էտեւեդր (հարիւրամէդր) = 100 մէդր:

Քիւեդր (հազարամէդր) = 1000 մէդր = 1303 արշըն, 19 սաղ փարմազ 16 սաղըր փարմազ:

Մերեւեդր (քիւրամէդր) = 10,000 մէդր:

Տեւեդր (տասնորդամէդր) =  $\frac{1}{10}$  կամ 0,1 մէդր = 3 մատ ու 9 գիծ Վիէնն. = 3 սաղ փարմազ ու 3 սաղըր փարմազ:

Սեւեդր (հարիւրորդամէդր) =  $\frac{1}{100}$  կամ 0,01 մէդր =  $7\frac{1}{2}$  սաղըր փարմազ:

Միւլեւեդր (հազարորդամէդր) =  $\frac{1}{1000}$  կամ 0,001 մէդր:

Թուղ = 6 ոտք = 1,94904 մէդր = 6,327 ոտք Վիէնն. Ոտք = 12 մատ: Մատ = 12 գիծ:

Մըն (Lieue) = 2282 [Թուղ]:

Ար = 100 քառակուսի մէդր:

Լիւր = 1 խորանարդ տէսիմէդր:

Սրեւ = 1 խորանարդ մէդր:

### Ա Ն Գ Ղ Ի Ա

Ոտ (Foot) = 0,3048 մէդր =  $11\frac{1}{2}$  մատ Վիէնն. = 9 սաղ փարմազ ու 18 սաղըր փարմազ:

Եւր = 3 ոտք = 2,891 ոտք Վիէնն. = 1 արշըն, 5 սաղ փարմազ ու 2 սաղըր փարմազ:

Ֆեւհլ = 6 ոտք:

Բերլ =  $5\frac{1}{2}$  էարտ:

Ֆերլըն = 220 էարտ:

Մըն = 8 Ֆերլըն = 1,609314 քիլոմէդր = 2131 արշըն:

Բոտ = 1 քառակուսի բերլ:

Բուտ = 1210 քառ. էարտ:

Էտր = 4 քառ. ըուտ:



ԿԵԼԸՆ = 4,543 լիդր:  
 ԲԻԻ = 2 կէլլըն:  
 ՊԸԸԸԸ = 8 կէլլըն:

Ա Ի Ս Տ Ի Ա

ՈԴԻ = 0,316103 մէդր = 10 սաղ փարմազ:  
 ՔԼՖԻԷՐ = 6 ոտք: Ոտք = 12 մատ: Մատ = 12 գիծ:  
 ՄՂՆ = 4000 քլաֆթէր = 7<sup>1</sup>/<sub>2</sub> քիլոմէդր:  
 Ե՞Ի = 1600 քառ. քլաֆթէր:  
 ԱՅԻ = 40 մաս = 56<sup>3</sup>/<sub>5</sub> լիդր:  
 Մաա = 4 սայթլ = 1,415 լիդր:  
 Սայթլ = 19,3536 խոր. մատ:

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն

Կանգուն կամ Մէյմար արշընը = 24 սաղ փարմազ = 0,757 մէդր  
 = 2 ոտք, 4 մատ ու 9 գիծ վիէնն. Սաղ փարմազ = 24  
 սաղըր փարմազ:  
 Արշըն = 8 բուլ = 0,685 մէդր = 2 ոտք ու 2 մատ վիէնն.  
 Էնփալէ = 8 բուլ = 0,6479 մէդր = 2 ոտք ու 8 գիծ վիէնն.  
 Բուլ = 2 կիրահ:  
 ՄՂՆ = 2192 կանգուն = 1680 մէդր = 5305 ոտք վիէնն.  
 Տիծիւմ = 1600 քառ. կանգուն:

Ռ Ո Ի Ս Ա Ս Տ Ա Ն

Սալին = 3 արշին:  
 Արշին = 0,705 մէդր = 2,252 ոտք վիէնն. = 22 սաղ փարմազ ու  
 5 սաղըր փարմազ:  
 Վիւրդ = 500 արշին = 1,0668 քիլոմէդր = 3375,5 ոտք վիէնն.

Գ յ խ ա ո ռ կ շ ի ո ճ ե ռ

Գ Ա Ղ Ղ Ի Ա

Կրամ, որն որ մէկ խորանարդ սանդիմէդր զուտ ջուրի կշիռն է =  
 13,714 գարեհատ (կրան) վիէնն. = 20 ցորեան տաճկի:  
 Տեփալրամ (տասնակրամ) = 10 կրամ:  
 Էփալրամ (հարիւրակրամ) = 100 կրամ:  
 Քիլոլրամ (հազարակրամ) = 1000 կրամ = 312 տիրէմ ու 4 ցորեան = 1 լիտր, 25 լոթ ու 34 գարեհատ վիէնն.  
 Տեփիլրամ (տասնորդակրամ) = <sup>1</sup>/<sub>10</sub> կամ 0,1 կրամ:  
 Սանդիլրամ (հարիւրորդակրամ) = <sup>1</sup>/<sub>100</sub> կամ 0,01 կրամ:  
 Միլլիլրամ (հազարորդակրամ) = <sup>1</sup>/<sub>1000</sub> կամ 0,001 կրամ:



Կենդանի = 100 լիտր: Կենդանի մեղրական = 100 քիլոկրամ:  
 Լիտր (լիվր) = 16 ունկի =  $\frac{1}{2}$  քիլոկրամ = 156 տիրեմ ու 2 ցորեան: Ունկի = 36 ցորենահատ (կրէն):  
 Տակառուց (թոնոյ) 2000 լիտր:

**Ա Ն Գ Ղ Ի Ա**

Փռնիկ թրոյ = 12 ունկի = 373,24 կրամ = 117 տիրեմ ու 40 ցորեան:  
 Փռնիկ կամ լիտր = 16 ունկի = 453,59 կրամ = 140 տիրեմ ու 28 ցորեան = 26,9168 լոթ:  
 Ունկի (Աւնս) = 20 Փէնիուայդ = 0,028346 քիլոկրամ = 8 տիրեմ ու 50 ցորեան:  
 Փէնիուայդ = 24 ցորենաչափ = 1,55 կրամ = 31 ցորեան տաճկ.

**Ա Ի Ս Տ Ը Ի Ա**

Կենդանի = 100 լիտր կամ ֆունտ:  
 Մորթ =  $\frac{1}{2}$  ֆունտ:  
 Լիտր (ֆունտ) = 16 ունկի = 32 լոթ = 560 կրամ = 175 տիրեմ:  
 Լի = 240 գարեհատ (կրան) =  $17\frac{1}{2}$  կրամ =  $5\frac{1}{2}$  տիրեմ:

**Ռ Ո Ի Ս Ա Ս Տ Ա Ն**

Փռնիկ = 36 լոթ = 96 սոլոթնիք =  $409\frac{1}{2}$  կրամ:  
 Փռնիկ = 40 ֆունտ:

**Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն**

Գռնիկ = 44 օքքա = 56 քիլոկրամ ու 408 կրամ:  
 Օտտ = 400 տիրեմ = 1282 կրամ = 2 ֆունտ 8 լոթ վիէնն.  
 Տիրեմ = 4 տէնկ = 3,005 կրամ = 0,1824 լոթ վիէնն.  
 Տիւի = 4 չէքիրաէք:  
 2էտիրտէ = 4 ցորեան:

*Handwritten signature or flourish*



# Տ Ա Ն Տ Ա Կ

## Տ Ո Կ Ո Ս Ե Ա Յ

ԴՐԱՄԱ- ԳԼՈՒԽ	Տարի		6 ամիս		3 ամիս		1 ամիս		1 շաբաթ		
	դր	փր	դր	փր	դր	փր	դր	փր	դր	փր	
<b>10</b>	—	16	—	8	—	4	—	1 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	1 <sup>1</sup> / <sub>3</sub>	0/0 4
<b>50</b>	2	—	1	—	—	20	—	6 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	1 <sup>2</sup> / <sub>3</sub>	
<b>100</b>	4	—	2	—	1	—	—	13 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	3 <sup>1</sup> / <sub>3</sub>	
<b>500</b>	20	—	10	—	5	—	1	26 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	16 <sup>2</sup> / <sub>3</sub>	
<b>1000</b>	40	—	20	—	10	—	3	13 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	
<b>10</b>	—	18	—	9	—	4 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	1 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	1 <sup>1</sup> / <sub>3</sub>	0/0 4 1/2
<b>50</b>	2	10	1	5	—	22 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	7 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	1 <sup>2</sup> / <sub>3</sub>	
<b>100</b>	4	20	2	10	1	5	—	15	—	3 <sup>3</sup> / <sub>4</sub>	
<b>500</b>	22	20	11	10	5	25	1	35	—	18 <sup>3</sup> / <sub>4</sub>	
<b>1000</b>	45	—	22	20	11	10	3	30	—	37 <sup>1</sup> / <sub>2</sub>	
<b>10</b>	—	20	—	10	—	5	—	1 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	1 <sup>1</sup> / <sub>3</sub>	0/0 5
<b>50</b>	2	20	1	10	—	25	—	8 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	2	
<b>100</b>	5	—	2	20	1	10	—	16 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	4	
<b>500</b>	25	—	12	20	6	10	2	3 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	20 <sup>2</sup> / <sub>3</sub>	
<b>1000</b>	50	—	25	—	12	20	4	6 <sup>2</sup> / <sub>3</sub>	1	1 <sup>2</sup> / <sub>3</sub>	
<b>10</b>	—	22	—	11	—	5 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	1 <sup>3</sup> / <sub>4</sub>	—	1 <sup>1</sup> / <sub>2</sub>	0/0 5 1/2
<b>50</b>	2	30	1	15	—	27	—	9	—	2 <sup>1</sup> / <sub>3</sub>	
<b>100</b>	5	20	2	30	1	15	—	18 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	4 <sup>2</sup> / <sub>3</sub>	
<b>500</b>	27	20	13	30	6	35	2	11 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	23	
<b>1000</b>	55	—	27	20	13	30	4	23 <sup>1</sup> / <sub>3</sub>	1	6	
<b>10</b>	—	24	—	12	—	6	—	2	—	1 <sup>1</sup> / <sub>2</sub>	0/0 6
<b>50</b>	3	—	1	20	—	30	—	10	—	2 <sup>1</sup> / <sub>2</sub>	
<b>100</b>	6	—	3	—	1	20	—	20	—	5	
<b>500</b>	30	—	15	—	7	20	2	20	—	25	
<b>1000</b>	60	—	30	—	15	—	5	—	1	10	



# Բ Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն


## Ելեկտրական մարդիկ

Ամէն մարդկային մարմնոց վրայ ալ ելեկտրականութիւն կը գտնուի, թէպէտ ոմանց վրայ անզգալի, ոմանց վրայ քիչ, ու ոմանց վրայ ալ շատ: Բնագնին մը 2422 փորձի մէջ 1252ը դրական, 721ը ժխտական, ու 399ը անզգալի գտաւ: Նոր փորձերը ցուցրցին որ դիւրագրգիռ արիւնոտ մարդիկ աւելի ելեկտրականութիւն կը ցուցնեն քան թէ դանդաղ թոյլ մարդիկ. մարդկային ելեկտրականութիւնը իրիկուան դէմ կը զօրանայ. ոգեւոր ըմպելիները նոյնը կը սաստկացնեն. մարմինը քանի որ ձմեռը պաղ է՝ ելեկտրականութիւն չիցուցնէր. յօդացաւութեան ատեն ելեկտրականութիւնը կը նուազնայ: Չարմանալի օրինակներ ունինք մարդկային ելեկտրականութեան նկատմամբ: Առիւմէր Գոթացոց թագաւորը ուզած ատեն իր մարմինէն ելեկտրական կայծեր կը ցատկեցընէր: Գարտան՝ Աարմելիտեան կրօնաւորի մը վրայ կը պատմէ թէ՛ մազերը ետեւ շփելուն պէս՝ կայծեր կը ցատկէին. նոյնպէս Փապէր՝ կնիկ մը կը յիշէ՛ որն որ քանի անգամ որ մազերը կը սանտրէր նէ՛ կայծեր կ'արձակէին: Աերոնայի մէջ Գասանտրա Պուրի անուամբ կնիկ մը շատ անգամ իր աղախինը կը զարհուրեցընէր ելեկտրական կայծեր ցատկեցընելով ու շառաչիւններ հանելով, որն որ կը պատասէր՝ երբոր մարմինը կը շփէր կամ նաեւ ջուխայով մը թեթեւ մը կը դպչէր: Բայց ամենէն զարմանալին 1838ին Յունուարին մէջ Ամերիկա պատասխածն է: Անիկ մը ան աստիճանի ելեկտրականութեամբ լեցուած էր՝ որ քանի անգամ որ գորգի մը կամ ուրիշ՝ ելեկտրականութիւնը չհաղորդող կամ կղզիացնող նիւթի մը վրայ կը կենար՝ իր ու իրեն մօտ եղած առարկային մէջ կայծեր կը ցատկէին. եւ ասով արտաքոյ կարգի կը նեղուէր.



երբեմն կրակարանին պղնձէ գնդակին  $1\frac{1}{2}$  մատ մտենալով՝  
 մատերէն վայրկենի մը մէջ չորս կայծ կ'ելլար: Օգը ու իր  
 ոգւոյն վիճակը շատ ազդեցութիւն ունէր իր ելեկտրակա-  
 նութեան սաստկութեանը վրայ. պաղ ատեն ու ոգւոյն  
 խռովութեանը ատեն կը նուազնար: Աս կնկան ելեկտրա-  
 կանութիւնը առջի անգամ հիւսիսայգ մը երեւցած ատեն  
 տեսնուեցաւ եւ ետքէն կամաց կամաց անհետացաւ: —  
 Մարդկային ելեկտրականութեան հետ նոյն է անանոց վրայ  
 տեսնուածն ալ. ինչպէս ամեն օր կատուներուն վրայ տե-  
 սածնիս, որն որ անմիջապէս կը ծագի թէ որ մութ տեղ  
 մտերնին ձեռքով շոշափելու շփելու ըլլանք. երբեմն կըր-  
 նանք հարուած ալ առնուլ՝ թէ որ աջ ձեռքերնիս վրան  
 քսելու ատեն՝ ձախը փորին վրայ դնենք: Ասիկա կատուն  
 ալ կը զգայ ու մէկէն կը փախչի:

Աս ալ գիտնալու է՝ որ հիմա կենդանական ելեկտրա-  
 կանութիւն կ'ըսուի նէ՝ ան ելեկտրականութիւնը կ'իմացուի՝  
 որն որ արտաքին պատճառէ, շփումէ կամ քիմիականու-  
 թենէ չի պատճառիր, հապա միայն կենդանւոյն կամքէն  
 յառաջ կու գայ. ինչպէս ելեկտրական ձուկերուն վրայ կը  
 տեսնենք:





# Բ Ն Ա Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

## Ելեկտրական ձկեր

Ելեկտրական ձուկ ըսելով այնպիսի ձուկեր կ'իմացուին՝ որոնք ըստ ամենայնի ելեկտրական մեքենայի կը նմանին, իրենց մտանալու կամ դաշելու ըլլանք քիչ կամ շատ ցնցում կամ հարուած մը կ'ընդունինք. ուստի ան զօրութիւնը՝ որն որ ապակին շփելով կը ծնանի ու զարմանալի երեւոյթներ յառաջ կը բերէ, ան զօրութիւնը՝ որով կալվանականութիւնը յառաջ կու գայ, ան զօրութիւնը՝ որով մեր հեռագիրները կը բանին, վերջապէս ան զօրութիւնը՝ որով երկինքին կայծակն ու որոտումները յառաջ կու գան, նոյնը ձկերէն ոմանք բնականապէս ունին եւ ուզած ատեննին կը գործածեն: Օգն իր ելեկտրականութիւնն ունի, երկիրն ալ նոյնպէս, ծովն ալ իրենք պիտի չունենայ: Աստեսակ ելեկտրական ձկերէն մինչեւ հիմա վեց տեսակ ճանչցուած է: Երկու տեսակը ելեկտրական Ներկէսներն են (լատ. Raja torpedo, գղ. Torpille), երրորդն է ելեկտրական Ենքեղէս կամ Ելեկ. Օձաձուկ (լատ. Gymnotus, գղ. Anguille électrique), չորրորդը Ելեկ. Սիլուրոս (լատ. Silurus electricus, գղ. Silure électrique), հինգերորդը Տրիքուրոս (լատ. Trichiurus, գղ. Trichiure) ու վեցերորդը Ելեկ. Քառաժանի (լատ. Tetradon elec. գղ. Tetradon élect.): Ասոնցմէ երկուքը, այսինքն Ենքեղէսն ու Սիլուրոսը անուշ ջրոյ մէջ կ'ապրին, իսկ մեկալնոնք ծովու մէջ: Հոս միայն ելեկտրական Ներկէսին վրայ կ'ուզենք խօսիլ:

Ելեկտրական ներկէսը թէ հին եւ թէ նոր ատենները իր զարմանալի յատկութեան համար երեւելի եղած է, որովհետեւ իրեն դաշողին վրայ ցնցում եւ նաեւ անդամաց վրայ թմրութիւն կը պատճառէ: Հիները՝ որոնք ելեկտրականութեան ինչ ըլլալը չէին գիտեր, զարմանալէն զատ



ուրիշ բան չէին ըներ եւ առ զօրութիւնը մեծցրնելով հրաշալիքներ կը բանաստեղծէին: Ասոր համար ալ Պլինիոս կը պատմէ թէ ներկէսը գաւազանով մ'ալ դպցուելու ըլլայ՝ ամենէն զօրաւոր բազուկն ալ կրնայ թմրեցրնել ու ամենէն արագ ոտքը բռնել կեցրնել:

Ելեկտրական ներկէսը ընդհանրապէս մէկալ ներկէսներուն շատ կը նմանի՝ լայն տափարակ մարմնովը եւ անոր համար ալ մինչեւ հիմա նոյն սեռին տակ կը սեպեն բնապատումները: Բայց շատ կողմանէ մէկալներէն կը տարբերի. հասարակ ներկէսները քառակուսի ձեւ մ'ունին, ուր որ ելեկտրական ներկէսը աւելի կլոր ձեւ մ'ունի ու աւելի կարծ պոչով է. գլուխ ու մարմին կամ իրան իրամէ ամենեւին չեն որոշուիր. աչուրները խիստ առջեւի դին ու իրարու մօտ են, ինչպէս առջեւի Պատկերին մէջ ալ կը տեսնենք, ուր ձուկին ձախ կողմը կտրուած բացուած նկարուած է՝ որ ելեկտրական գործարանքը տեսնուին:



Աս ելեկտրական գործարանքը ձկան երկու կողմն ալ կայ եւ կալվանեան մարտկոցի պէս բազմաթիւ սիւնակներէ կամ տարրներէ կը բաղկանայ, որոնք երբեմն մինչեւ 400 — 500ի կը հասնին, ինչպէս Պատկերին մէջ ձախ դին տեսնուած կլոր կլոր նկարուածները՝ գրեթէ մէյմէկ ելեկտրական գործիքներ են: Աս ձուկին ամենէն մեծին երկայնութիւնն է 4 ոտք, լայնութիւնը 2 1/2 ոտք, հաստութիւնը 1 1/2 ոտք ու ծանրութիւնը 20—25 օխայ, բայց երբեմն 30—40 օխայ ծանր ալ գտնուած է: Ասոր մարմինը բոլորովին տափակ է ու վրան քիչ մը ուռած է. գոց մոխրագոյն ու քիչ մը կարմիրի զարնող գոյն մ'ունի, երբեմն մեծ կլոր ու կանոնաւոր եւ թխագոյն բիծեր կ'ունենայ. տակի կողմը ձերմակի կը զարնէ կամ մարմնոյ գոյն



ունի : Շատ տեղ կը գտնուի . Միջերկրական ծովուն մէջ ու  
Գաղղիայի հարաւային ծովեզերքը շատ կը գտնուի . Բրի-  
տանական կղզւոյն հարաւային կողմերը քիչ . Բարեյուսոյ  
հրաւանդանին կողմերը , Պարսից ծոցին մէջ , Ատլանտեան  
ու Խաղաղական ծովերուն մէջ շատ յաճախ է : Ա'երեւայ  
թէ խորունկ ու ցեխոտ յատակները կը սիրէ : Բնապա-  
տումներէն մէկը կը պատմէ թէ՛ ասիկա երբոր ծովուն տե-  
ղատուութեան ատեն ըստ պատահման ցամաքի վրայ մնա-  
լու ըլլայ՝ ինք զինք աւազի մէջ կը թաղէ ու աներեւոյթ  
կ'ըլլայ . աւազը պոչովն ու թաթերովը կամ թիակներովը  
այնպէս մը կը փորէ ու վեր կը նետէ որ եւ ոչ հետքը կը մնայ :

Արդէն ըսինք որ աս կենդանւոյն ելեկտրական գոր-  
ծարանքը մարմնոյն երկու կողմը կարգ կարգ շարուած սիւ-  
նակներէ կը բաղկանայ , որոնց մէջ բազմաթիւ ջիղեր տա-  
րածուած են : Բնազնիները աս գործարանքը շատ քննած  
ու մանրամասն ստորագրած են եւ շատ սքանչելի կազմու-  
թիւն մը տեսած են : Աս գործարանքը երկու տեսակ ազ-  
դեցութիւն ունի , մէյմը ցնցում ու մէյ մ'ալ հարուած :  
Ցնցման նկատմամբ Ինկէնհաւս ասանկ կը պատմէ : « Աիվո-  
նոյ սղջ ներկէս մը ձեռք չկրնալով բերել՝ 18 թիակով  
ձկնորսի նաւ մը վարձու բռնեցի ու երկու մղոնի չափ ցա-  
մաքէն հեռացայ , ու յատակը ցեխոտ եղած տեղ մը կեցայ .  
նոյն ձկէն հինգ հատ բռնեցի , որոնցմէ չորսը մէկ ոտքի  
չափ մեծ էին . ասոնք անմիջապէս ջրով լեցուն վրան բաց  
տակառի մը մէջ դնել տուի : Առի մէկը ձեռքս՝ այնպէս որ  
բթամատս ելեկտրական գործարանքին մէկ կողմը ու ցու-  
ցամատս մէկալ կողմը թեթեւ մը կը շօշափէր . մէկ երկու  
վայրկեան վերջը մէկէն ի մէկ ցնցում մը զգացի՝ որն որ  
թեւերէս անդին չանցաւ . քանի մը մանրերկրորդ վերջընո-  
րէն նոյնը զգացի ու ետեւէ ետեւ նոյն ցնցումը կրկնուեցաւ :  
Չուկը աս ցնցումը թէ ջրոյ մէջ եւ թէ ջրէն դուր եղած  
ատեն յառաջ կը բերէր , երբեմն տկար եւ երբեմն զօ-  
րաւոր էր , » :

Օրաւոր ներկէս մը կրնայ այնպիսի ելեկտրական  
հարուած մը պատճառել որ բոլոր թեւին երկայնութեանը  
կը զգացուի ու ձեռքին եւ մատերներուն վրայ թմրութիւն  
մը կը պատճառէ եւ երբեմն մինչեւ անտանելի կ'ըլլայ : Ո-  
մանք կ'ըսեն թէ աւազի տակ պահւրտած ատեն՝ մէկը վրան  
կոխելու ըլլայ՝ կրնայ այնպիսի սաստիկ հարուած մը տալ  
որ մարդը գետին կը ձգէ :



Տէք կը պատմէ . «Աս ձուկը ճենովա ու Աենետիկ շատ կը բռնեն : Զօրաւոր մարդ մը իր ելեկտրական հարուածները քիչ կը զգայ ու կրնայ կենդանին յոգնեցրնել . բայց փափուկ կնիկները ու ջղաց հիւանդութիւն ունեցող մարդիկ զգուշութեամբ վարուելու են» :

Տէվի կ'ըսէ թէ աս ձուկը Մալթա ազնիւ սեղաններու այնչափ շիմօտենար , միայն աղքատները կ'ուտեն : Թեպէտ Հիպպոկրատ ու Աալենոս իբրեւ կերակուր կը յանձնեն , բայց Ռանտլէին պատմածին համաձայն՝ Աենետիկ հրապարակին մէջ ծախելը արդելուած է : Ուրիշ մը կ'ըսէ թէ Գաղղիայի մէջ առողջ կերակուր կը սեպուի եւ յաճախ կը ծախուի : Հին ատենները բժիշկները իբրեւ դեղ կը գործածէին : Աղէոպատրային ատենը ներկէսին հարուածը դլխի ցաւի մէկ հատիկ կը սեպուէր , աս բանս կրնանք բժշկութեան մէջ ելեկտրականութեան ամենէն առջի գործածութիւնը սեպել : Ար պատմուի որ Անտոնիոս՝ որն որ Տիբերիոսին ազատածն էր , աս հարուածով յօդացաւութեան բժշկուած ըլլայ . եւ վերջէն ալ նոյնը յօդացաւութեան դէմ կը գործածուէր . եւ հիմակ ալ Արաբացիք նոյն հարուածը կը գործածեն , մանաւանդ տենդի մէջ : Բայց մենք կրնանք հաստատել որ մեր հիմակուան բժիշկները ձկերուն ելեկտրականութիւնը բանի մը չգործածելով՝ բժշկական դարմանները պակասութիւն մը չեն կրեր :






# Բ Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## Թուխտառ կամ վիշապ

Թուխտառ կամ վիշապ (խորթում) ըսուածն ինչ  
 ըլլալը ինչէն պատճառիլը աղէկ իմանալու համար գիտնալու  
 է թէ ինչ է մըրիկ ըսուածը: Մըրիկ կամ փոթորիկ ըսած  
 նիս՝ ան ատենը կը ծնանի երբոր օդին կամ մթնոլորտին  
 մէջ հաւասարակշռութիւնը կամ օդին ամէն կողմ նոյն  
 հաւասար ըլլալը մէկէն ի մէկ կ'աւրուի: Աս հաւասարակշ-  
 ռութեան աւրուիլը յառաջ կու գայ՝ երբոր օդին մէկ մասը  
 մէկայլէն աւելի խիտ կամ բարակ կ'ըլլայ կամ մէկ մասը մէ-  
 կայլէն աւելի տաք կամ պաղ կ'ըլլայ. ինչպէս ասոր օրինակը  
 կը տեսնենք՝ երբոր դուրսը պաղ եղած ատեն՝ խուց մը  
 տաքցընենք. դուռը բացածնուս պէս՝ անմիջապէս տաք օդը  
 վերի կողմանէ դուրս կը վազէ ու պաղը վարի կողմանէ ներս  
 կը վազէ, որ է ըսել հով կը  
 փչէ. ասոր համազուելու հա-  
 մար՝ խուցը տաք եղած ա-  
 տեն՝ դուռը կէս մը բաց ու  
 ծակին առջին ճրագ մը բռնէ  
 ու վեր վար շարժելով կը  
 տեսնես որ ըսածնիս ստոյգ է,  
 բոցը վերի կողմը դուրս ու  
 վարի կողմը ներս կը ծռի.  
 ինչպէս առջեւի Պասկերին  
 մէջն ալ կը տեսնես: Ասկէ  
 անմիջապէս յառաջ կու գայ  
 որ օդին կամ մթնոլորտին  
 մէջն ալ՝ մէկ կողմը տաք  
 մէկալ կողմը պաղ ըլլալուն  
 պէս՝ ըսել է որ օդին հաւա-



կը վազէ, որ է ըսել հով կը  
 փչէ. ասոր համազուելու հա-  
 մար՝ խուցը տաք եղած ա-  
 տեն՝ դուռը կէս մը բաց ու  
 ծակին առջին ճրագ մը բռնէ  
 ու վեր վար շարժելով կը  
 տեսնես որ ըսածնիս ստոյգ է,  
 բոցը վերի կողմը դուրս ու  
 վարի կողմը ներս կը ծռի.  
 ինչպէս առջեւի Պասկերին  
 մէջն ալ կը տեսնես: Ասկէ  
 անմիջապէս յառաջ կու գայ  
 որ օդին կամ մթնոլորտին  
 մէջն ալ՝ մէկ կողմը տաք  
 մէկալ կողմը պաղ ըլլալուն  
 պէս՝ ըսել է որ օդին հաւա-




սարակչութիւնը աւրուած է, որով կ'իմանանք միանգա-  
 մայն թէ Հով ըսուածը ինչ է: Բայց ան խուցին փորձին  
 մէջ ուրիշ միտ դնելու բան մըն ալ կայ. այսինքն ինչո՞ւ հա-  
 մար դրան քովը երկու տեսակ հով կը փչէ, մէյ մը վերէն  
 դուրս՝ մէյ մը վարէն ներս: Ասոր պատճառը ան է որ՝ տաք օդը  
 պաղ օդէն աւելի թեթեւ ըլլալով՝ միշտ վեր կ'ելլայ եւ  
 անոր համար ալ խուցերուն մէջ վերի կողմը միշտ աւելի  
 տաք կ'ըլլայ. ուստի վերի կողմի օդը աւելի տաք ըլլալով՝  
 աւելի ալ զօրութիւն ունի տարածուելու. որով եւ տեղ  
 մը ծակ մը գտածին պէս հոն կը վազէ. բայց վերի կողմանէ  
 դուրս վազելուն պէս՝ յայտնի է թէ խուցին մէջ օդ կը պակ-  
 սի, ուստի եւ աս պակասածին տեղ՝ դուրսէն վարի կողմանէ  
 պաղ օդը կը կոխէ ներս կը մտնէ: Բոլոր բնութեան մէջ  
 ճիշդ աս եղանակաւ է որ հով կը ծնանի եւ արդէն դիտենք  
 թէ երկիրը ամէն կողմ նոյն տաքութիւնը չունի, արեւը  
 միշտ ու ամէն տեղ հաւասարապէս չի տաքցըներ, որով  
 հաւասարակչութիւնը կ'աւրուի, եւ դարձեալ յայտնի է  
 թէ տեղ մը անձրեւ գալուն պէս՝ հոն օդը պաղելով՝ բոլոր  
 օդին մէջ հաւասարակչութիւնը կը կորսուի, տաքը վեր  
 կ'ելլայ կը տարածուի, պաղը վարէն կը կոխէ, ուստի եւ  
 այսպէս շարժում մը յառաջ կու գայ, որուն Հով անունը կու  
 տանք: Հովէն՝ մրրկին ինչ ըլլալն ալ դիւրաւ կ'իմացուի,  
 որովհետեւ երկրորդը առջինին սաստիկն է, որն որ ան ժա-  
 մանակը կ'ըլլայ՝ երբոր օդին մէկ մասին տաքնալը կամ մէ-  
 կալ մասին պաղելը մէկէն ի մէկ կ'ըլլայ. ինչպէս ըսենք՝  
 երբոր օդին մէկ մասը մէկէն ի մէկ պաղելու ըլլայ՝ յայտնի  
 է թէ իր մէջն եղած ջրոյ շոգին մէկէն պաղելով նորէն ջուր  
 եղածին պէս՝ (որչափ որ օդ մը տաք է այնչափ մէջը շատ  
 ջրոյ շոգի կ'ըլլայ, զորն որ գետնէն, ծովէն, գետերէն իրեն  
 քաշած է,) օդին նոյն մասը մէկէն կը տկարանայ, քովի  
 տաք մասը մէկէն վրան կը յարձակի եւ այսպէս սաստիկ հով  
 կամ մրրիկ կը ծնանի, որուն զօրութիւնը դիտենք:

Հիմա որ Հովին ու Մրրիկին ինչ ըլլալն իմացանք՝  
 Թաթառին ալ ինչ ըլլալը դիւրաւ կ'իմանանք, որովհետեւ  
 նոյնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ տեսակ մը մրրիկ: Շատ ան-  
 գամ կը տեսնենք որ գետնի վրայ եղած աւազն ու փոշին  
 կըր կըր դառնալով պտոյտ մը կ'ընեն ու անիւի մը պէս կը  
 դառնան. ասիկա ուրիշ բանէ չէ՝ բայց եթէ երկու իրարու  
 հակառակ փշոյլ հովեր իրարու շփուելով կըր շարժում մը  
 կ'առնուն, եւ իրենց շարժմանը հետ թեթեւ մարմիններ



ալ մէկտեղ կը դարձրնեն : Մեծ փոթորիկներու ատեն աս  
 պտոյտածեւ շարժումը աւելի մեծ, աւելի շուտ ու աւելի  
 սաստիկ կ'ըլլայ, որով փոշի, տերեւ, յարդ եւ այլն, պտոյտ  
 ընելով դառնալով վեր կ'ելլան կը բարձրանան : Ուստի  
 թաթառ կամ վիշապ բուռածն ալ ուրիշ բան չէ՝ բայց  
 եթէ մեծ պտոյտներ, որոնք հասարակօրէն օդին վերի կող-  
 մերը՝ երկու իրարու հետ կռուող հովերէն կը պատճառին :  
 Թաթառները կրնան երկրի վրայ ու կրնան ծովու կամ գետի  
 վրայ ըլլալ . ուստի երկու տեսակ են . առջինին մէջ թաթա-  
 ռը աւազները ու փոքր մարմինները կ'առնու կը դարձրնէ .  
 իսկ երկրորդին մէջ ջուրը : Թէ ծովու եւ թէ ցամաքի թա-  
 թառները երկու կոնածեւ (.քիւլահվարի) երեւոյթներ կը  
 ձեւացրնեն . ստոնց վերի մասը՝ որուն ճոթը վար դարձած  
 է, ամպէ կը բաղկանայ . վարի կոնը, որուն ճոթը վեր դար-  
 ձած է, ջուրէ կը բաղկանայ՝ եթէ թաթառը ծովու, լիճի  
 կամ գետի վրայ է, իսկ ցամաքի վրայ եղած ատեն՝ աւազէ  
 կամ ուրիշ մարմիններէ կը բաղկանայ : Այսպիսի թաթառ-  
 ներ կրնան շատ անգամ ծառեր խլել, տուներ խախտել  
 ու գերաններ վերցրնել տանիլ եւ այլն : Զրաթաթառնե-  
 րէն ոմանք՝ ջուրը մինչեւ հարիւրաւոր օտքեր կրնան վեր  
 հանել բարձրացրնել : Առջեւի Պատկերին մէջ ծովու վրայ  
 հանդիպած թաթառ մը կը տեսնենք, որուն մէջ կոները,





անոնց իրարու հետ միանալը եւ երբեմն ամբողջ սիւն մը կազմելը որոշ կը տեսնուի :

Վկանատես մը ծովու վրայ տեսնուած թաթառ մը ասանկ կը ստորագրէ : Մըրիկն ելլելու ատեն՝ ծովը խիտ ամպի մը տակ կը սկսի շարժիլ . աս շարժող մասին դէպ ի կենդրոնը ալիքները իրարու հետ կը միանան կը փրփրին , ջրաշոգիներ կը կազմեն ու պտոյտաձեւ ոլորաձեւ դէպ ի վեր ամպերուն ելլելու կը ջանան ու ամպերէն վար ինչող իրենց նման կոնի մը հանդիպելով՝ անոր հետ կը միանան եւ երբեմն 300 մինչեւ 400 ոտք հաստ կ'ըլլան : Բոլոր սիւնը՝ մէջը պարապ ապակեայ շիշի նման կ'երեւայ . ծովուն վրայ կը քայլէ , եւ երբեմն շատը մէկանց կը պատահի : Եթէ ամպին կոնը կամ ջուրինը աւելի յառաջ շարժելու ըլլայ՝ սիւնը կը ծռի եւ երբեմն իրարմէ կը բաժնուին կամ կը պատուին շառաչմամբ մը . շատ անգամ թաթառին մէջ կայծակ ալ կը զարնէ :

Վաւաճարները թաթառներու վտանգէն ազատելու համար՝ անոնց զարհուրելի սիւներուն վրայ թնդանօթ մը պարպելով՝ կը պատուտեն ու թաթառին հետ մէկտեղ վտանգն ալ կը փարատեն :





## Բ Ժ Ը Կ Ա Կ Ա Ն

Ահուանեալոս կազմութիւնը, ախտերն ու դարմանը

Եթէ մարդն առհասարակ իր մարմնոյն ամէն մէկ մասերուն պահպանութեան հոգ կը տանի, ահուաներուն կարեւորութիւնը պէտք է զինքը յորդորել՝ որ առ գործարաններուն աւելի եւս փոյթ տանի, որովհետեւ ահուաները՝ որոնք նաեւ իրենց ամբողջութեամբն ու փայլունութեամբը մարդուն վայելչութիւն մ'ալ կու տան, չէ թէ միայն բաւերուն որոշ արտաբերութեան համար անհրաժեշտ հարկաւոր են, հապա աղէկ մարտողութիւն ու աղէկ անունդ մ'ունենալու համար պահանջուած էական բաներէն են. վասն զի կերակուրն անոնցմով կը մանրենք, եւ մարտողութեան յարմար կ'ընենք: Իրաւամբ բժիշկներն երկայն ժամանակէ վեր ահուաներուն որպիսութիւնն ապահով միջոց մը կը սեպեն՝ մարմնոյն ներքին վիճակն իմանալու. եւ ան բարբարոսական կարծիքը թէ ահուաներն աճում չունենանուն համար անկենդան կազմածներ են, ահուաներուն եւ ներքին գործարանաց մէջ եղած փոփոխութիւններուն՝ իրարու հետ ունեցած սերտ յարաբերութիւնը դիտուելով շատոնցուրնէ բոլորովին անհետացած է: Այսպէս ըլլալով անօգուտ աշխատութիւն չենք համարիր եթէ անոնց վրայ քանի մը ճիշդ դիտողութիւններ ընելու ըլլանք, մանաւանդ որ անոնց հիւանդութիւններն իմանալով աւելի դիւրաւ կարող կ'ըլլանք ամէն տեսակ վնասակար ազդեցութիւններէն զգուշանալ:

Ահուային՝ բերնին մէջ արձակ դուրս ցցուած մասը պսակ կ'ըսուի, լինդով (ահուայի մտով) շրջապատածը՝ պարանոց, իսկ ծնօտներուն խոռոչներուն մէջ մտածը՝ արմատ: Ահուային մէջ դատարկ միջոց մը կայ, որն որ մինչեւ արմատներուն ծայրը կը հասնի: Դատարկ միջոցին մէջն է ա-



կուայի սերմ ըսուածը, որն որ բարակ թելերէ շինուած  
 ծուծ մըն է եւ արմատին ծակէն անօթներ եւ ջիղեր կու  
 գան ասոր հետ կը հաղորդուին: Ընդհանրապէս ամէն մէկ  
 ակուայի վրայ երեք բաղկացուցիչ մասեր կը զանազանուին.  
 առջինն է ծեփը կամ փայլը, որն որ կեղեւի պէս ակուային  
 պսակը պատելով թէ կարծրութիւն ու թէ փայլունութիւն  
 մը կու տայ. եւ վերին երեսը՝ ծամելու տեղը շատ զօրաւոր  
 է: Աս ծեփը կամ կեղեւը վեցկողմեան խիտ թելերէ կը  
 բաղկանայ եւ արտաքուստ բարակ թաղանթէ մը կը պա-  
 տի, որն որ ակուաներուն օրպիտութեան գլխաւոր նշան  
 տուողն է: Ակուան բաղկացրնող երկրորդ մասը ոսկրն է, որն  
 որ ակուային մարմինը կը կազմէ եւ իր պարսպ միջոցին մէջ  
 ակուային ծուծը կը պարունակէ: Աս ոսկրը պզտիկ խողովա-  
 կածեւ անօթներէ շինուած է, որոնք զուգահեռական թե-  
 լերով իրարու կը հաղորդուին եւ կէս մը ակուայի հիւթ ը-  
 սուած թափանցիկ հեղուկով մը, կէս մ'ալ ոսկրի հող  
 համարուած աւազանման զանգուածով մը լեցուած են:  
 Ոսկրն ու ծեփը իրարմէ որոշ սահմանով մը չեն զատուիր,  
 հապա մէկուն ճիւղերը մէկալին մէջ կը մտնեն: Ակուան բա-  
 ղադրող երրորդ մասը ակուայի արմատը արտաքուստ չըջա-  
 պատող ոսկրի կեղեւ մըն է, որն որ թերթանման կազմած  
 մ'ունի ու ոսկրէ մարմնիկներէն կամ թէ ըսեմ մանրադէ-  
 տով տեսնուող ոսկրի տարրներէ կը բաղկանայ: Աս մասը  
 կամ կեղեւը ուռելով շատ աճելու ենթակայ է, եւ ծերու-  
 թեան ատեն այնչափ կը հաստնայ, որ ակուան խոռոչէն  
 դուրս կը նետէ ու կը թափէ: Ակուան երկայնութեան կող-  
 մանէ կտրուելու ըլլայ՝ մութկէկ գիծ մը ակուայի ոսկրին ու  
 կեղեւին միացած տեղը կը ցուցնէ:

Ակուաներուն քիմիական կազմութեան գալով՝ ծե-  
 փը կամ փայլը գլխաւորաբար անգործարանաւոր հանքային  
 մասերէ բաղկացած է, իսկ ոսկրը եւ մանաւանդ արմատին  
 կեղեւը իրենց կազմուածքին կողմանէ հասարակ ոսկրին  
 շատ նման են: Աս հասարակ ակուան իր արտաքին յատկու-  
 թեանցը նայելով՝ ոսկրին խնամի է, ուր որ իրեն սերմէ  
 կամ ծիլէ մը յառաջ գալը զինքը եղջիւրի, ըղունգի եւ  
 մազի կը հաւասարցնէ: Իր բնական յատկութիւնները,  
 ինչպէս են կարծրութիւնը եւ քիչ կենդանական նիւթ ու-  
 նենալը վախճանին համեմատ են, նոյնպէս ձեւն ալ մեքե-  
 նական գործածութեան պատշաճ է: Յառաջագոյն կը  
 կարծուէր որ ակուան չիանանիր, որովհետեւ միանգամ



կերպաւորուած ակռան ալ չ'աճիր, այլ եթէ հարկ կ'ըլլայ  
նէ՛ նոր մը տեղը կու գայ, սակայն ցուցուած է որ ակռային  
մէջ եղած դատարկ միջոցը թաղանթ մը կը պատէ, որն որ  
արեան անօթներ ունենալով արիւնը ակռայի ոսկրին ծակ-  
տիքներուն կը հաղորդէ ու անանկ սնունդ կու տայ: Ակռան  
այնչափ միայն սնունդ կ'առնու, որչափ որ ունեցածը պահ-  
պանելու համար հարկաւոր է: Իսկ ծեփին կամ փայլին մէջ  
հիւթի մը շարժում չ'իտեսնուիր:

Մեր ակռաներուն վրայ եկող եւ անոնց կորուստը  
պատճառող ախտերը հետեւեալներն են: Նախ՝ ակռայի  
կենդրոնական ապականութիւնը, որն որ արեան շատը մէկէն  
ժողովուելէն եւ ծակ ոսկրին ծակտիքներուն մէջ սեղմուելէն  
ու խողովակներուն գոցուելէն յառաջ կու գայ եւ ասկէ կը  
հետեւի բորբոքախառն ատամնացաւը: Աս ցաւին ատենը  
ակռայի ոսկրին խողովակաձեւ ծակտիքը, որոնք փտտելու  
կը սկսին՝ թուխ գոյն մը կ'առնուն, եւ ծեփին տակէն եղ-  
ջիւրանման կ'երեւան: Ծեփը հասարակօրէն բան մը չի-  
կրէր, երբեմն միայն քիչ մը կը կակղնայ ու դիւրափշուր  
կ'ըլլայ, անանկ որ արտաքուստ ալ ապականելու կը սկսի:  
Ակռայի աս տեսակ ախտը շուտով կը բժշկուի, եթէ բոր-  
բոքման առջեւն առնուի ու արիւն վազընելով ծակտիքնե-  
րուն մէջ սեղմուած արիւնը նորէն շրջանի խոթուի:

Այլորդ տեսակ ախտ մըն է ակռայի՝ բուսական ա-  
պականութիւնը, որն որ ծեփը պատող թաղանթին վրայ  
կ'ըլլայ եւ հասարակօրէն երիտասարդաց ու պատանեկաց կը  
հանդիպի: Աս թաղանթին թելերէն կըոր խղիկներ կը շի-  
նուին, որոնք ի սկզբան քովէ քով կը շարուին, ետքէն  
բազմանալով խաւ խաւ իրարու վրայ ալ կը դիզուին եւ ի-  
րենց յառաջագոյն ջրի պէս պայծառ բովանդակած հեղուկը  
թուխ գոյն մը կ'առնու: Աս խղիկներուն բազմանալը  
ըստ ամենայնի ստորին տնկերուն բազմանալուն կը նմանի,  
անոր համար իրաւամբ տեսակ մը սունկ կը համարուին, ո-  
րոնք ակռային նիւթերն իրենց աճմանը համար առնելով ա-  
նոր զանգուածը կը կակղընեն ու կ'ապականեն: Աս բուսա-  
կան ախտը ծեփէն անցնելէն ետքը ակռայի ոսկրին վրայ  
շուտով կը տարածուի եւ մինչեւ մէջի ծուծին կը հասնի,  
որմէ սոսկալի ցաւ մը կը սկսի. բայց շատ անգամ բնութիւնն  
ասոր առջեւը կ'առնու, որովհետեւ երբեմն գրգռութե-  
նէն ոսկրին ծակտիքը կը գոցուին, ու ապականութեան դէմ  
պաշտպանող բիւրեղներ կամ քրիստալներ կը կազմեն. եր-



բեմն իրենք իրենցմէ ալ եղջերանման ակռայի զանգուածներ կը գոյանան եւ ոսկրին ծակտիքը կը գոցեն ու փառութեան առջին կ'առնուն : Աս առժամանակեայ խփմանէ ու ապականութեան ներս թափանցելուն դէմ շինուած պատուարէն կը մեկնուի ան ընդհատեալ ակռայի ցաւը, զորն որ բուսական ապականութիւն ունեցող մը կը զգայ :

Արրորդ տեսակ ատամնացաւը՝ ակռայի փառութենէն կը պատճառուի, որն որ նախընթացին պէս՝ ծեփին թաղանթէն կը սկսի, անոր վրայ Ատամնաքար ըսուածը նստելով : Ինչպէս որ բերնին՝ շողիքի թաղանթ ըսուածը ծածկող հեղուկին մէջ՝ մանաւանդ հիւանդութեան ատեն՝ հազարաւոր ջրածին անասնիկ կամ ծորածճի ըսուած մանրադիտական անասնիկներ կը բնակին, նոյնպէս ալ ակռային շողիքին մէջ պզտի երկայնածեւ շնակիչներ դառնալով ճօճալով կը խլրտին : Ասոնցմէ շատերը իրարու քով գալով իրարու հետ միանալով՝ իրենց կիրէ բաղկացած կեղեւը ակռային վրայ կարգ կարգ կը նստի, որով ատամնաքարը կը կազմուի : Ասիկա ծեփին թաղանթին վրայ փառութիւն մը պատճառելու կը սկսի, որն որ վրան եկող կերակրոյ աւելցուկներով, ջերմութեամբ, խոնաւութեամբ, ու բերնին մէկալ անասնիկներէն օգնութիւն գտնելով՝ նախ եւ յառաջ իբրեւ թխագոյն բիծ մը երեւան կ'ելլայ, որն որ ախտին սկիզբն է : Աս բիծը շուտով շողիքաւոր երես մը կամ կարգ մը կը ձեւացընէ եւ ծեփը պայթեցընելով ոսկրին կ'անցնի : Հոս դարձեալ ծակտիքը գոցուելով՝ փառութեան ծուծին հասնիլը քիչ մ'ատեն կը խափանուի, սակայն լոյծ եւ փտտած նիւթերը վերջապէս ան խափանարարներուն ալ յաղթելով ծուծին կը հասնին եւ անօթներուն ու ջիղերուն վրայ գրգռութիւն մը պատճառելով ցաւ ալ կը պատճառեն : Աս ախտին անոնք աւելի ենթակայ են, որոնց ակռաներուն ոսկրն ու ծեփը բաւական հանքային մաս չեն ունենար, որով բաւական զօրութիւն ալ չեն ունենար ամէն պատահարներուն դէմ դնելու : Գարձեալ փառութեան ենթակայ են ան ակռաները՝ որոնք իրենց խոռոչներովն ու խորութիւններովը կերակրոյ մնացորդներուն տեղ կու տան ու չեն մաքրուիր, որով կերակուրներն ու աղտոտութիւնները վրան կը դիզուին կը խտանան : Այսպիսի ակռաներուն փառութեան նշանն է՝ չէ թէ միայն իրենց թուխ գոյնը՝ հապա նսեւ բերնէն ելած գէշ հոտը :

Չորրորդ տեսակ ակռայի ապականութիւն մ'ալ



կայ, որն որ ծերերուն կը հանդիպի ու առանց նոր տարրնե-  
րու միջամտութեանը կ'ըլլայ, միայն քիմիական փոութե-  
նէ կը պատճառի: Ծերերուն շողեքին մէջ եղած կաթի  
թթու ըսուած հեղուկը՝ շատ կիր հանելով ու դիզելով ա-  
նօթները կը գոցէ ու ջղաց ակռային հետ ունեցած հաղոր-  
դակցութիւնը կը կտրէ եւ սերման ջիղերը չկարենալով  
հիւթ սնունդ առնուլ՝ անզգայ կ'ըլլան, որով ակռային ա-  
պականութիւնը առանց ցաւի յառաջ կ'երթայ: Ակռայի  
առ տեսակ ապականութիւնը հասարակօրէն կողմնական  
կամ ճնօտի ակռաներուն վրայ կ'ըլլայ, որոնց ծեփին վրայ  
ի սկզբան թխագոյն բիծ մը կ'ելլէ. ասիկա ետքէն ծակի  
խոռոչի մը կը փոխուի, որն որ գարշահոտ հիւթ մը չունի:

Աստիտերուն առջեւն առնելու համար նախ պէտք  
չէ անանկ բաներ բերանն առնուլ, որոնք կանոնաւոր սնունդ  
առնուլը կրնան խափանել, ինչպէս լուծողական մետաղնե-  
րու եւ գլխաւորաբար սնդիկի գործածութեանը ատեն կը  
պատահի: Երկրորդ անանկ բաներէն զգուշանալու է, որոնք  
ակռաներուն չափէն աւելի արիւն կը բերեն: Աերջապէս ան  
ամէն ազդեցութիւններն հեռացրնելու է, որոնք շողեքը  
քիմիապէս կը փոխեն, ակռային ծեփը կը ճաթեցրնեն ու  
ոսկրին ծակախոր բաց կը թողուն: Ասոնք կ'ըլլան օդի յան-  
կարծական փոփոխութենէն, շատ պաղ ու տաք կերակուր-  
ներէն, շատ գրգռող կենդանական սնունդներէն, անմար-  
տողութենէն, շողեքի մէջ շատ թթուներ ըլլալէն, անկային  
ու հանքային թթուներ ստէպ խմելէն, անանկ ակռայի  
փոշիներ յաճախ գործածելէն, որոնք ակռային քիմիական  
կազմութեան կը վնասեն, ինչպէս են պաղլեղն (շապ) ու  
ճխախտահին մոխիրը. դարձեալ ակռաներու մէջ մնացող ու  
հոն նեխող կերակուրներէն, ակռաներուն վրայ ատամնա-  
քար թող տուող ու ճեղքերու եւ ծակերու մէջ մտնող  
աղտոտութիւններէն: Ակռաներուն վրայ կամաց կամաց  
դիզող շաքարի փոշին ալ կրնայ վնասակար ըլլալ:

Խօթացած ակռաներուն խնամք կը տարուի նախ եւ  
առաջ ախտին պատճառները վերցրնելով եւ ասով ախտին  
յառաջ երթալը խափանելով: Աւտի ակռայի բուսական  
ու փոութեան ապականութիւնն ունեցողը պէտք է միշտ  
բերանն ու ակռաները կերակրոյ մնացորդներէն ու ակռայի  
շողեքէն մաքրել պատշաճ փոշիով մ' ու անանկ բերնի ջրով,  
որն որ խիստ ու գրգռիչ չըլլայ: Փոշիներուն մէջէն ամենէն  
աւելի ազդուն ամօնիակ եւ առանձինն իմն կակղիի (օխլամուր)



ածխոյ փոշին է, որովհետեւ ասիկա չէ թէ միայն ակռաները  
 կը մաքրէ, հապա փտութեան դէմ ալ շատ կը ներգործէ :  
 Եթէ ապականութիւնը կենդրոնական չէ կամ մինչեւ ա-  
 կռային ծուծը չէ հասած, պէտք է լուծման կամ փտու-  
 թեան միջոցները հեռացնել. եւ որովհետեւ ակռա-  
 ներուն վրայ նստող սնկանման կարգերը կամ ակռաներուն  
 պատառաբոյժները բոլորովին ջնջելու միջոց մը դեռ չէ  
 գտնուած, ակռան աղէկ մը մաքրելէն ետեւ՝ ծակին մէջ  
 հաստատուն եւ աղէկ գոցող նիւթ մը զանգուած մը դնելու  
 է, ինչպէս խէժ, անագաթերթ, կութա բերքա եւ այլն,  
 որն որ կարծրանալով թէ ծուծը օդին հաղորդութենէն  
 կը կտրուի, թէ փտութեան յառաջ երթալը կը խափանուի  
 եւ թէ արդէն խարխուլ ու անգործածական ակռան լեցու-  
 ած նիւթին կարծրութեամբը խել մը տարի աւելի գոր-  
 ծածական կ'ըլլայ : Չորրորդ տեսակ ախտը, որն որ քի-  
 միապէս ապականելէն կ'ըլլայ, շատ դժուարաւ կը բժշկուի,  
 որովհետեւ ակռային աւելի աղէկ հեւթեր մատակարարելու  
 համար, բոլոր կենդանական կազմութեան գործողութիւնը  
 պէտք է փոխել ու լաւագունել :

Ատամնացաւին տնական դեղերը հետեւեալները կրնան  
 ըլլալ : Շատ անգամ պարապ ակռաներուն ցաւը՝ ծնօտին  
 կամ ակռային վրայ մատով կոխելով կ'անցնի կամ կը  
 թեթեւնայ : Աստիլ մը քրէոզոթ ըսուած եթերի նման  
 հեղուկէն բամբակի վրայ կաթեցնելով ու ակռային ծակին  
 մէջ զգուշութեամբ խոթելով՝ շատ անգամ ցաւը անմի-  
 ջապէս կը կտրի : Գարձեալ սպանիական Ճանճի փոշի  
 ըսուածը երկու մատին մէջ շփելով ու աւելցուելը թափե-  
 լով՝ ցաւած ակռան նոյն մատերուն մէջ քանի մը վայրկեան  
 սխմելու կենալու է, ասով ցաւը կը կտրի : Գիտնալու է որ  
 աս դեղերուն հետ միշտ զգուշութեամբ վարուելու է, եւ  
 ակռայէն դուրս բանի մը պէտք չէ դպցնել : Բորբոքիչ ա-  
 տամնացաւի ատեն՝ շատ անգամ ցաւող ակռան առջեւ  
 ծռած կ'ըլլայ եւ դպչելու կամ խածնելու ատեն խիստ  
 կը ցաւի. աս դէպքիս մէջ սունկի (մանթար) կտոր մը  
 առնելու եւ հիւանդ ու առողջ ակռաներուն մէջ քառորդ  
 կամ կէս ժամու չափ թեթեւ մը սխմելու է. ասով ա-  
 կռան ետ կը քաշուի ու ցաւը կ'անցնի : Այնպիսի ակռայի  
 ցաւի՝ որն որ հոսացաւէ (րիւմաթիզմ) կը պատճառի, երկու  
 մաս փշրած պաղլեղ ու եօթը մաս բորակի եթեր իրարու  
 խառնած՝ ցաւած ակռային վրայ դնելու է : Աս տեսակ ցա-



լին աղէկ դեղ է նաեւ՝ աղի ջրով ստնլուայ, կամ ական-  
 ջին ետի դին տեւողական սպեղանի (մէհլէմ) մը քսել:  
 Պաղ ջուրն ալ երբեմն խիստ ցաւերը կ'անցընէ: Քափուրի  
 (քեաֆիրի) կտոր մը պարապ ակուային մէջ դրուելու ըլլայ՝  
 շատ անգամ օգտակար կ'ըլլայ: Ծխախոտի մոխիրը, ե-  
 ղեսպակի (տիշ օթու, ատա չայը) տերեւը, փայտի ածու-  
 խը՝ իբրեւ ակուայի փոշի՝ թոյլ լինդը (տիշ էթի) հասաա-  
 տելու, ցաւին առջին առնելու ու թեթեւցընելու կ'օգնեն:  
 Նոյնպէս թմրեցուցիչ բաներ՝ ինչպէս օղի, ծուխ, երբեմն  
 օգտակար ազդեցութիւն ունին: Հացին կեղեւը պրելով  
 կամ ածուխ դարձընելով փոշի ընելու ըլլանք ու նոյն փո-  
 շով ակուաները շփելու ըլլանք՝ մեծ օգուտ կը տեսնենք.  
 աս փոշին ամէն օրուան ակուաները մաքրելու համար ալ  
 դիւրին ու օգտակար միջոց մըն է: Աս ալ գիտնալու է որ  
 երբեմն ակուայի ցաւը ստամոքսի հիւանդութենէ կամ  
 փորի պնդութենէ կը պատճառի կամ կը գրգռի, որուն  
 դէմ բժիշկները մաքրողական կամ լուծողական դեղ կը  
 գործածեն:





# Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

## Երեք առաքիւնութիւն

Փարիզի փողոցներուն մէկուն վրայ աղքատ մայր մը որդւոյն հետ մէկտեղ նստած՝ օրուան ապրուստը գրտնելու համար՝ վայրի ու ընտանի ծաղիկներէ փունջեր ու փնջիկներ շինելով որդւոյն ձեռքը կու տար՝ որ անցնող դարձողներուն երկնցրնելով՝ քսակներնէն՝ մանաւանդ աւելի սրտերնէն բան մը փրցնէ. հազարներ անցան, հազարներ դարձան, երեսնին նայող չեղաւ: Ալ տղուն ձեռքը հոգնած ու յուսահատած եկաւ մօրը քով նստեցաւ. մօրն ալ սիրտը հալած ու մաշած ձեռքէն ծաղիկները դողն ինկան ու տաքութիւն մը կուրծքէն վեր ելլելով աչքերը շոգի մը պատեց ու տաք տաք արցունքները կաթիլ կաթիլ այտերէն վար իջնալու եւ ծաղիկներուն վրայ ցօղի մը պէս ժողվուելու սկսան: Չեռքը տարածեց՝ որդւոյն գլխոյն վրայ դրաւ, աչքերն ալ երկինք վերցնելով, ա՛խ մը բրաւ ու նորէն գլուխը ծռած գետին նայելու սկսաւ: Արդին մօրը հառաչանքը լսածին պէս՝ երեսը նայեցաւ. ինքն ալ լալու սկսաւ, թէպէտ պատճառը չէր գիտեր: Աս միջոցիս՝ անգղիացի մը իր աղջկանը թեւը մտած անկէ անցնելու եղաւ: Տղան ասոնք տեսնելով նորէն ոգի առաւ ցատքեց ու փնջիկը աղջկան երկնցուց: Աղջկան մտադրութիւնը արթննալով՝ տղուն սեւ աչքները ու կլոր կարմիր այտերը աչքին զարկաւ. տղուն այտերուն վրայ մնացած քանի մը մարդարիտներն ալ տեսնելով՝ մօրը երեսը նայեցաւ ու սիրտը ելաւ. կարծես թէ մօրը սրտին պատկերը իր սրտին վրայ նկարուած տեսաւ: Ճարպկութեամբ մը առանց հօրը խնայրնելու 50 ֆրանքնոց մը տղուն նետեց ու հօրը հետ ճամբան յառաջ տարաւ: Մայրը տղուն ձեռքը 50 ֆրանքնոցը տեսնելով՝ սկսաւ անգղիացւոց ետեւէն կանչել.



Տեարք իմ, տեարք իմ, բան մը ձգեցիք: Անգղիացի աղ-  
ջիկը չլսելու կը զարնէր. բայց հայրը դարձաւ նայեցաւ եւ  
տեսաւ որ կնիկը վազելով կու գայ ու 50 ֆրանքնոց մը  
կ'ուզէ տալ՝ Ասիկա ձերն է, ձեզմէ ինկաւ ըսելով: Հայրը  
կ'ուզէր առնուլ. աղջիկը երեսին գոյնը նետած, թող տուր,  
հայր, թող, կ'ըսէր, ան մերը չէ. խեղճերուն ապրուստը մի  
յափշտակեր: Հայրը՝ չէ, աս քու քովէդ ինկած է՝ ըսելով  
նորէն առնուլ կ'ուզէր: Աղջիկը՝ Մ'ըներ, հայր, մ'ըներ,  
ողորմէ՛ կ'ըսէր շարունակ ու աչքները լեցուիլ սկսան:  
Հայրը՝ Ասիկա առտուանցւան քեզի տուած յիսուննոցնե-  
րէս չէ՞՞ ըսելով վերջապէս առաւ յիսուննոցը ու քսակը  
գրպանէն հանելով մէջը դրաւ. աղջկան սիրտը կտոր կտոր  
կ'ըլլար ու ալ չդիմանալով երեսը անդին դարձուց: Բայց  
արդէն նոյն միջոցին հայրը յիսուննոցը քսակին մէկ կողմը  
դնելու ատեն մէկալ կողմը բացած հինգ հարիւրնոց մը  
հանած էր: Եթէ, ըսաւ աղջկան, դուն մօր մը խեղճու-  
թիւնը 50 ֆրանքի արժանի սեպեցիր նէ՛ ես ալ իր ար-  
դարասիրութիւնը պէտք է որ 500 ֆրանքի արժանի սե-  
պեմ: Աս ըսելով 500 ֆրանքնոցը կնկան ձեռքը տուաւ.  
Եւ երեք մեծ սիրտ մէկտեղ ուրախացան: Հոս որուն ա-  
ռաքինութեան վրայ աւելի զարմանալու է. մէկուն գթոյն,  
մէկալին արդարասիրութեանը, չէ նէ երրորդին մեծանձ-  
նութեանը վրայ:

### Զրօներն ու մեկը

Հայր մ'իր որդիքը բոլորտիքն առած՝ մեծ կազամա-  
խիի մը զով շուքին տակը նստած՝ անոնց հետ կը խօսէր կը  
զուարճանար: Աւրիշ խօսքերու մէջ՝ մարդու բաղձանքնե-  
րուն վրայ ալ խօսք բացուեցաւ եւ կ'ըսուէր թէ որչափ մաշ  
դիկ ամենէն աղէկ բաներու բաղձալու տեղ՝ շատ անգամ  
ունայն ու յիմարական բաներու ետեւէ կ'ըլլան սէր կը  
ձգեն: Իսկ տղաք, Մենք, կ'ըսէին, բանի մը բաղձանք  
ձգելու ըլլանք նէ՛ ամենէն աղէկին կը ձգենք: Աւրեմն, ըսաւ  
հայրերնին, ըսէք նայիմ ինչ բանի կը բաղձաք: Ամենէն  
պզտի դուստրը, Հայր, ըսաւ, ես ամէն բանէն աւելի կը  
բաղձայի որ խիստ գեղեցիկ ըլլամ. վասն զի գեղեցկու-  
թիւնը ամենուն հաճելի է եւ գեղեցիկ մարդիկ ամէն տեղ  
կը սիրուին: Աղջկան եղբայրը, Աւնայն բան, ըսաւ, գե-  
ղեցկութենէն ինչ կ'ելլայ. գիտես որ մեր դրացւոյն որ-



դին ինչպէս գեղեցիկ էր երեք չորս շաբաթ յառաջ, բայց Տիմա ծաղկի հիւանդութենէն ինչ դարձաւ, ուստի ինչ օգուտ ունեցաւ իրեն իր գեղեցկութիւնը: Ասկէ զատ փորդ անօթենալու ըլլայ՝ գեղեցկութեանդ նայելով կրնանս կիշտանալ: Ասոր համար ես ամենեւին չէի բաղձար գեղեցկութեան, ամենէն աւելի՝ խիստ հարստութեան կը բաղձայի. ինչու որ աշխարհք կառավարողն ստակն է. եւ ստակով ամէն ուզածնիս կրնանք ընել: Եղբայր, ըսաւ ամենէն մեծ եղբայրնին, դուն ալ ամենէն աղէկը չ'ընարեցիր. վասն զի հարստութիւնն ալ գեղեցկութեան պէս կրնայ կորսուիլ եւ դարձեալ եթէ ստակի մէջ խղճուիս ու ապուշ բթամիտ մէկն ըլլաս՝ տեղ մ'ալ յարգ չես ունենար. անոր համար ես ամէն բանէն աւելի խելացի ըլլալ կը բաղձայի, որովհետեւ խելքը միշտ կը մնայ՝ թէպէտ գեղեցկութիւնը կամ հարստութիւնը կորսուի, եւ միանգամայն ամենուն քով պատիւ ու սէր կը գտնայ: Աս խօսքին վրայ՝ սրտէն հաճելով եւ ամենէն աղէկը գտայ կարծելով՝ սկսաւ հօրը երեսը նայիլ ու ըսել. Հայր, չէ՞, իմ բաղձանքս ամենէն աղէկը չէ:

Հայրերնին լուռ կեցած գետին կը նայէր. եւ գաւազանին ճոթովը սկսաւ հողին վրայ բաներ մը գրել. գրածը քանի մը զրօներ (000) էին: Տղաք ամէնը մէկանց հարցուցին. Ի՞նչ կը նշանակեն աս զրօները: Ասնք, ըսաւ հայրերնին, ձեր ըսածները կը նշանակեն, երեք զրօյ՝ Գեղեցկութեան, Հարստութեան ու Խելքի տեղ են. վասն զի աս ամէնը իմաստուն մարդու մը առջին դատարկ ոչինչ են: Ի՞նչ, բոլորովին ոչինչ են մեր բաղձանքները, պոռացին տղաք ամէնը մէկանց: Չէ, պատասխանեց հայրերնին, ոչինչ չեն, զրօյ են, որն որ բան մը չ'արժեր առանց մէկի: Թէ որ զրօներնուն քով մէկ թիւը դնելու ըլլանք (եւ իրօք ալ գաւազանին ծայրովը հողին վրայ զրօներուն առջին 1 թիւը կը գծէ ու 1000 [հազար] կ'ելլայ), ան աստեն յառաջագոյն բան մը չ'արժողը՝ հիմա մեծ արժէք կ'ունենայ: Բայց աս մէկն ո՞րն է ինչ է՝ առանց որոյ ամէն բարիք ոչինչ են եւ որով ամէնը իր են եւ օգտակար. Առաքինութիւնն է. աս է որ մարդը ճշմարիտ գեղեցիկ, հարուստ ու խելացի եւ միանգամայն երջանիկ կ'ընէ:



Առածներ

Մարդուս կեանքը ճարտրակի (սաթրանձ) խաղի մը կը նմանի, որուն մէջ իւրաքանչիւր քար իր տեղը, դիրքը, պատիւն ու արժէքն ունի. բայց խաղը լմնցածին պէս՝ թագաւոր, ձիաւոր, ստանաւոր՝ ամէնն ալ մի եւ նոյն տուփին կամ տոպրակին մէջ կը նետուին:

Հեզ մարդուն համար  
Հերիք է քնար.  
Խեռին չէ հերիք  
Թմբուկն ու սրինգ:

Առաքինութիւնը վշտաց ու աշխատանաց մէջ կը հաստատուի, իսկ յաջողութեան մէջ կը թոյլնայ. ինչպէս՝ յստակ է ան ջուրը՝ որն որ իր ընթացքին մէջ քարերու կը զարնուի. կը գէշնայ՝ երբոր կը կենայ կը լճանայ:

Բարեկամ հին  
Գանձ է անգին:

Ազնուական պարզութիւն մը ու հաճոյական ամօթ-խածութիւն մը ամենէն աւելի մոգիչ ու յափշտակիչ հրապոյրներն են գեղեցկութեան:

Ինչ որ չես ուզեր՝  
Ուրիշին մ'ըներ:

Արիտասարդութիւնը գինովութիւն մըն է առանց գինւոյ. իսկ ծերութիւնը գինի մըն է առանց գինովութեան:

Աչք հազար,  
Գատէ արդար:

Այ այ առաքինական եւ օգտակար ազահում թիւն մը, եւ է ազահում թիւն ժամանակի ու ազահում թիւն խօսքի:



Կաթիլ մը քիչ քիչ  
Կը դառնայ մեծ լիճ :

Շատ անգամ գիտցածնիս չգիտնալ ձեւանալու  
ենք՝ որպէս զի երբեմն ալ չգիտցածնիս գիտենք կարծեն :

Հազար խորհէ,  
Հեղ մը խօսէ :

Չենք կրնար ընել ինչ որ կ'ուզենք, կրնանք ընել  
ինչ որ պէտք ենք :

Խելացւոյն համար  
Կը բաւէ մէկ բառ .

Անմտին բառարան  
Չէ նաեւ բաւական :

Հազար չափէ,  
Հեղ մը ձեւէ :

Փախչողն անձրեւէ  
Կարկուտը կ'ուտէ :

Չուկը գլուխէն  
Կը հոտի՝ կ'ըսեն :

Համբերութիւնն՝ ազոխէ  
Հրուշակ մը կը շինէ,  
Իսկ թթենւոյն տերեւէն  
Բեհեզ ու կերպասեղէն :

Ծեծ քաշէ իշուն,  
Էշն է մի եւ նոյն :



Ոչխարն ամէն  
Իր սրունքէն  
Կը կախեն :

Ինկող մը ի ծով  
Փաթթուի օձով :

Չկարծած քարդ է  
Գլուխ կը պտուտէ :

Գարձած գինիէ  
Քացախը՝ խիստ է :

Երկու ձմերուկ՝  
Չ'առնուր մէկ բազուկ

Հաւը դրացւոյն  
Սագ մըն է լեցուն :

## Վ Բ Է Ժ



Անա՛ շեռնոռոյի՛ հարսի պէս սիրուն .  
Կրնա՛յ գտնոռիչ հոս վայրենոթիւն .  
Տես սա ոռոյեռնն՝ կոթնած ժայռի ,  
Տժգոյն , ահառոյ , սիրտը չոց արիւն ,  
Մահոռան ծարարի :

Ոտքիւ տակ անդռնդ , հեղեղ վայրենի ,  
Ճայթ մամք , շտաշմամք գահապէժ շինի .  
Տիտոյր ոռոյեռնն կը նայի ծուած  
Որ կը փնտռէ պատկերն իր դիմաց :  
Կը խօսի արտանց .



“Երջասի՛կ հեղեղ՝ զարևելոյ ժայռին՝  
 Վրեժըդ կ'ստեղծու թուարորէն հին.  
 Ո՛հ, զիս անգործներ, ժայռէն աչ խիստեր,  
 Խիստ կը շարշարէն շատ ատենէկ վեր.  
 Ա՛յ անքառ կ'հատեր :

Կրասիթ քարեր, խոռոչ ոռ մոռնչ սրատեր,  
 Ի՛նչ կը մօտեւար . կ'ոռգէք անչե՛ր դէռ :  
 Հենո՞ն, արհաւիրք, ցնորքներ, հենո՞ն,  
 Ա՛խ, թող տոռէք զիս սգաւ շնչելոռ .  
 Ո՛րք էս, վրեժ դոռ :

Հիմայ թշուարիս անջեռէս կ'անցնի .  
 Եկոր հրացաւս, օգնէ՛ արդ ինձի .  
 Հաւատարիսն էս, մէկ հատիկ գոհարդ,  
 Խրկէ՛ շոռս ծոցէդ մահացոռ կապարդ .  
 Հաւատ ատենն արդ :

Կտոքի անցն մը կայ, կոռ գայ կոր, կոռ գայ :  
 Ի՛նչ, երա՛զ արդէօք, ցնո՛րք խաբէքայ :  
 Հովէն մրրկէն ցնցաց եղեռի .  
 Արդէօք ժայռք վրա՛ս պիտի գլտորի :  
 Կը սարսի սիրտ իմ :

Դոռն փշէ՛, գոշէ՛, մրրիկ վայրաստոռն .  
 Խաղաղ անտառին սարէ՛ շոռնթ իռն :  
 Ո՛ր ամայոռնթ իռն, ինչո՛ն շնեցիր :  
 Հանգիստս գողցողն գտա՛ն հանգիստն իր :  
 Աս է իր անմիտն .

Ահա կտոքն ահա, անշոռչտ ան է ան :  
 Ա՛խ, շէ, շէ, ան շէ . անցն է որոտման,  
 Որ խտնոռելոյ հեղեղին անցնի  
 Ոռ արձագանգին ժայռին ահագին,  
 Խաբէց անանջն իմ :



Բայց մտիկ ըրե, դարբասնք մը կայ .  
 Եկան, հոս է հոս, կ'անցնի կոր հիմայ .  
 Ա՛խ շտապիմ' . չե՛, չեմ' սխաշիր,, :  
 Հրացանն առան, պագան դառնաշիր .  
 Ո՛ւսնորոք ոճիր :

Ժնրատրեց, շտկեց, բռնեց հաստատունն : . . .  
 Եանթ մըն է գարկան դիմացն աշքերունն .  
 Երացոոց աշքին շոյալ յանցաւոր .  
 Կառքն է ասեցան, անցան շենն ու ան .  
 Վրե՛ժ, ո՛րք ես որ :

Որսորդը ժայռին կոթընամ իր դէռ .  
 Խորունկ հեռաշով հագին շունչ կ'անուկր :  
 Մրրիկ, որտառմ' եղան ճնշասպառ .  
 Իրեն ի՛նչ օգոռտ, թ՛նառ որսն առար .  
 Վրե՛ժ . ո՛րք թ՛նար :

Ամպերը թ՛նան . իրիկունն հասան  
 Ո՞ր հեռագիտեալ սփռեց քող մը սեան :  
 Վերցոոց աշքերը փորձեալ ուղեւորն .  
 Աշք ըրին իրեն՝ աստեղք բիւրասոր  
 Եւ սիրայորդոր :

Ինկան հոն երկայն անշունչ անզգայ .  
 Արթնցան անրե՛ն . աչ աւ ոչ ան կայ .  
 Երկիւք մը ասիւ, շոռթ ինն խորին .  
 Խաղաղոռթ ինն մը տիրեր է շորս դին  
 Եւ իրեն սրտին :

Չերմ' Չերմ' կասթ իշնէր աշքերէն իջան,  
 Աստղներէն վեր՝ կայ, ըսան, մեկ բան  
 Որ գիւ կը սիրէ ու կը պաշտպանէ .  
 Ազատելը գիւ աւ ժանտ վրե՛ժէ  
 Մե՛ծ ճնորհք մըն է :





## ԱՌԵՐՕՏ



Տեսա՛ր արեւն առտուան ,  
 Ի՛նչ գոհարներ աննման  
 Իր ծիրանի զգեստէն  
 Կը շողացնէ օր ամէն :

Առտու՛ կոհակն ամպերուն  
 Կամարածեւ կորացած՝  
 Իբր յաղթանակ մեր լուսոյն՝  
 Կը վերանան աստեղաց :

Նոր առտու մը ի՛նչ բան է .  
 Մէկ մանկացած զիշեր չէ՛ .  
 Երկինք մըն է ան՝ մեռած՝  
 Որ կը զարթնու նոր կենաց .

Մահուան կապերը ծակտէն  
 Մէկգի առեր տարեր են ,  
 Եւ փառաց մէջ յարութեան  
 Երեսները կը լողան :


Ասանկ պայծառ , արքունի ,  
 Ասանկ նշոյլ մ՝ ոսկիէ՛  
 Չի՛մոռցրներ արդ քեզի  
 Թէ մահ գիեր կը ցանէ :

Երբ վերջալոյսն ոսկեման  
 Կը զարդարէ ծիրն երկնի ,  
 Հոն արեւը կը ծռի  
 Որ տայ համբոյր մը մահուան :

Աս յաղթանակ մ՝ է կենաց  
 Մահուան վրայ կանգնուած .  
 Երեկոյեան կարմիր լոյս  
 Կու տայ քաղցր արշալոյս :




Կ'ըսէ երկինքն ամէն օր՝  
 Որ միահուան հարկ տանք պիտ'որ,  
 Կ'աւետէ ալ յոյս փառաց  
 Անոր՝ որ է երկիւղած :



### Մանկոռթիուն

Ժայռի մը սար սրածայր  
 Մանուկ մ'առած էր կռնակն .  
 Զարհուրեցայ՝ երբ տեսայ .  
 Մանուկն անխէթ անկասկած  
 Կեցած ծռած կը նայէր,  
 Սարսափելի հայելի,  
 Ոսկրներս սարսեցան :  
 Նայածն ի՞նչ էր մանուկին .  
 Գազան մըն էր ջրեղէն .  
 Պտոյտ պտոյտ կը դառնար,  
 Կ'ուզէր աւար մ'անդադար :  
 Հեղեղին մէջ ի՞նչ խաղեր  
 Մանկան համար կը սահէր :  
 Յափշտակուած կը ծռէր,  
 Քիչ մնաց վար կը սահէր .  
 Երկինք, ըսի, մնացի .  
 Երկինք աչքերս վերցուցի .  
 Ահա անգղ մը վերէն  
 Դարանակալ էր եղեր  
 Անգղ մ'անգութ սրատես .  
 Կամ հեղեղին կամ թռչնոյն  
 Խեղճ մանուկը որս մըն էր .  
 Մէկուն չէ նէ մէկային :  
 Պաղ քրտինքներ թափեցի .  
 Ո՛հ, ըսելու չմնաց,  
 Ահա ամպ մը թուխ ու մեծ,  
 Ամպ մը եկաւ հիւսիսէն,  
 Անգղին մանկան մէջ մտաւ .  
 Մանկան վրան շուք ձգեց .  
 Մանկան միտքը արթնցաւ,  
 Վեր նայեցաւ, ամպ տեսաւ .  
 Երկու վտանգն ալ անցուց .  
 Բայց ուրիշ մը տեղն անցաւ .  
 Հով ու մըրիկ արթնցան .  
 Անձրեւ կարկուր կոյտ ու կոյտ,  
 Որտուում շանթ ու կայծակ  
 Մանուկն աղէկ կոծեցին .  
 Ո՛ւր ապաստան, ո՛ւր յարկ տան :  
 Վաղեց վաղեց գահավէժ,  
 Բայց վերջապէս շնչասպառ  
 Սպառեցաւ ու ինկաւ :  
 Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ .  
 Գացի, ահա կիսամեռ .  
 Գիրկըս առի, ողջնցաւ :  
 «Գիրկէ, ձեռքէ, ո՛վ մանկիկ,  
 Մի հեռանար, զուրցեցի :





## Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Բ

Երիտասարդ և որ թիշկի մը մեկ գիշերը

Պողլաւ անուամբ փոյթեռանդ երիտասարդ մը ինքը զինքը բժշկականութեան տուած ըլլալով՝ լմնցուց իր ուսմանց ընթացքը եւ մեծ պատուով իր խիստ քննիչներուն առջին երեսը ճերմկցընելով՝ իր անհնարին աշխատանացը վարձքը առաւ՝ բժշկութեան մէջ Աարպետ ելաւ :

Գործնական բժիշկի մը իր կենացը մէջ շատ փորձանքներու հանդիպիլը յայտնի է . բայց ան ալ յայտնի է որ Պողլաւի պէս մարդասէր փութաջան բժիշկ մը ամենուն կրնար յաղթել իր մեծ պատուովը :

Երիտասարդ նորուսում գործնական բժիշկ մը ամենաթշուառ մէկն ըլլալու է : Բարձր կոչում մը ունենալը կը զգայ . կը զգայ միանգամայն իր գիտութեանը անկատարութիւնը , բայց գիտէ նաեւ թէ իր գլուխն ալ բոլորովին պարապ չէ : Անդանի սաստիկ մղում մը զինքը կը գրդէ , կ'ուզէ գործունեայ ըլլալ ու կենակցութեան մէջ մտնալ , կ'ուզէ կը բաղձայ ամէն տեղ ամենուն օգնութեան հասնիլ , զամէնքը բժշկել . իր վրայ վստահութիւն մ'ունի , բայց կը պակսի ուրիշներուն վստահութիւնը իր վրայ :

Երկուրդը կ'ուզէ որ փորձ բժիշկներէ հոգացուի եւ աւելի կ'ուզէ ծեր ու փորձ բժիշկի ձեռքին մէջ հոգին աւանդել : Չեն մտածեր մարդիկ որ փորձառութիւն ստանալու համար առիթ ալ ունենալու է : Ստոյգ է նաեւ որ երբեմն քիչ փորձ եղող երիտասարդ բժիշկ մը հիւանդի մը անկողնին քով աւելի մտադիր , հոգատար ու շրջահայեաց է՝ քան թէ ծեր վարժ ու սովորած բժիշկ մը , որն որ իր սրամտութեանը վստահացած՝ շուտ բայց սխալ վճիռներ կու տայ :

Շատ նորավարժ բժիշկներ հին ու նոր բժշկական



գրուածոց ու օրագրաց մէջ կը մտնեն կ'ընկղմին՝ մինչեւ  
խելքերնին բթացընելու շափ . գիշեր ցորեկ ամէն մէկ ձայ-  
նին աղմուկին մտադիր կ'ըլլան՝ թէ արդեօք զիրենք կան-  
չող մը կայ . երբեմն պարապ տեղ սպասելէն ետեւ՝ յուսա-  
հատած պատուհան կ'ելլան եւ տեսնելով թէ բախտաւոր  
բժիշկներէն ոմանք ինչպէս կ'անցնին կ'երթան կամ առ մա-  
հուն ու կենաց տէրերը փառաւոր կառքերու մէջ նստած կը  
թռչին կ'անցնին, սրտերնուն եղերը կը հալին : Երբեմն շատ  
մեծ պահանջողութիւն մ'ալ չունենալով՝ չեն նախանձիր  
անոնց գէր ու պարարտ վարձքերուն կամ մեծ տէրերու ու  
խաթուններու քով վայլած պատիւներնուն, միայն թէ  
գոնէ գործաւորէ կամ բանւորէ մը կանչուին, բանի տեղ  
դրուին : — Լսենք հիմա մեր Պողլաւին

### Պատմութիւնք :

Ա երբ ըսածներնուն բոլորն ալ Պողլաւին վրայ ստու-  
գուեցաւ : Արդէն չորս շաբաթ անցած էր քանի որ վար-  
պետութեան վկայագիրը առած կատարեալ բժիշկ եղած  
էր . չորս շաբաթ է ի վեր տանը դրան վրան պղնձէ տախտակ  
մը դրած ու անունը հրատարակած էր . չորս շաբաթ է ի վեր  
դրան քով գեղեցիկ ունեւէքով մը քաղցրահնչիւն զանգա-  
կիկ մը դնել տուած էր . բայց չորս շաբաթ է ի վեր մէկու  
մ'ալ միտքէն չէր անցած՝ ոչ գիշերը եւ ոչ ցորեկը՝ որ գայ  
դրան վրայի տախտակը կարգայ կամ զանգակին ունեւէքը  
շօշափէ :

Իր բժշկութեան քանուիներորդ օրուան իրիկուան  
ժամը չորսը զարկաւ . Պողլաւ ձանձրութենէ նեղուած՝ ան-  
կողնոյն վրայ կը տապալէր ու կը տապալակէր . առջեւը սե-  
ղանին վրայ Աարվէին Համբերո-թեան անուամբ գիրքը ու  
Չիմմերմանին Փորչա-թեան անուամբ գիրքը կեցած էր .  
երբեմն մէկը երբեմն մէկայլ կ'առնուր ու ճրագին մօտեցը-  
նելով կը կարդար եւ միանգամայն կը մտածէր թէ Գեռ  
որչափ Աարվէին համբերութեան հարկաւորութիւն ունիմ  
Չիմմերմանին փորձառութեանը հասնելու համար : Ա երջա-  
պէս համբերութիւնը փորձառութեան հետ մէկտեղ մէկ-  
դի նետեց ու աչւրները գոցելով քնանալու ջանաց :

Կարգուած շարժած զգայարանքները՝ լռիկ խաղա-  
ղութեան հետ բարեկամ չեն . սակայն մեր Պողլաւը վեր-  
ջապէս կէս մը մրափելու պէս եղաւ : Բայց... ստոյգ էր ար-



դեօք, չէ նէ երազ, ցնորք մը. զանգակի ձայն մը հնչեց. Պողլաւ բացաւ աչքները եւ մէկ ցատկելով՝ անկողինէն դուրս պատուհանին առջին գտաւ ինք զինք եւ ան այլայլութեան մէջ պատուհանին փեղկը այնպիսի սաստկութեամբ բացաւ որ ապակին շառաչելով վրայէն թռաւ:

Ահա, փողոցը գրան առջին մարդ չկայ, ձայն ձուն չկայ, միայն հեռուանց ծիծաղելու ձայն մը կայ. այ չարածիծիկ սրիկաներ, զուարճութիւն չեն գտեր, ամէն բաներնին հատեր՝ դռներուն զանգակները ձեռք են առեր. աղէկ կատակ:

Պողլաւ սիրտը նեղացած կտորած պատուհանը գոցեց. բայց անկէ հեզիկ զով հով մը փչելով քիչ մը զովացուց հանդարտեցուց խեղճին խռոված տաքցած զգայարանքները, որն որ փիլիսոփայի մը պէս հանդարտ քայլերով ու մեծ մտմտութեամբ անկողնոյն մօտեցաւ ու նորէն պառկեցաւ: Խաբեբայ յոյս:

Աչքները նորէն գոցուելու սկսան եւ խորունկ քուն մը իր վերարկուն անոր վրայ ձգելու կը պատրաստուէր. մէյ մ'ալ նորէն զանգակին ձայնը լսուեցաւ: Աս անգամ Պողլաւ կամաց կամաց շարժելով ելաւ անկողինէն, ու բժիշկի մը վայել հանդարտութեամբ ու ծանրութեամբ մը ոտք ելաւ մտածելով թէ արդեօք աս անգամ ալ վրաս պիտի ծիծաղին անիծեալները:

Օ, անգակը երկրորդ անգամ հնչեց: Սպասեցէք, ալ չեմ խաբուիր՝ ըսելով՝ պատուհանին մօտեցաւ ու զգուշութեամբ մը վար նայեցաւ: Ի՞նչ տեսնայ աղէկ. յարդէ փեղոյր (չափգա) մը՝ որն որ լուսնին լուսէն լուսաւորուած՝ տան դրան առջին առդին անդին կ'երթար կու գար:

Մէկէն պատուհանը բացաւ:

Պատուական Պարոն բժիշկ, կը կանչէր վարէն աղջկան ձայն մը, թողութիւն ըրէ մի սրգողիր սր այսպիսի ուշ ատեն քեզ անհանգիստ կ'ընեմ:

Բան չկայ աղջիկս, ըսաւ Պողլաւ, զիս կանչելու եկեր ես, անանկ չէ. հիմա կու գամ, բոպէէ մը հոն եմ:

Չէ չէ Պարոն բժիշկ, ըսաւ վարէն, ես աս տան մէջ բնակող կոմսուհոյն աղախինն եմ. մէկու մը հետ ժուռ գալու ելած ըլլալով՝ քիչ մը ուշ մնացի. անոր համար, թողութիւն ըրէ, քու զանգակդ զարկի, որ տան բանալին պատուհանէն ինծի նետես. կ'ուզեմ կամացուկ մը ներս մտնել. վաղը առտու կանուխնոյնը մեծ շնորհակալութեամբ



նորէն քեզի կու տամ: Բայց կ'ազաչեմ կը պաղատիմ, մի բարկանար, շնորհք ըրէ:

Պատուական բժիշկը սրտին դառնութենէն բառ մ'ալ բերնէն չհանելով՝ առաւ բանալին, պատու հանէն վար նետեց, ու նորէն պատու հանը գոցելով պառկեցաւ:

Աս անգամ քունը բոլորովին փախած էր. անկողնին մէջ մէկ կողմէն մէկալ կողմ դառնալէն զատ բան մը չէր ըներ. միտքին մէջէն ալ հիւանդութեանց տեսակները կը յեղյեղէր, նոյն ատենը յաճախ հանդիպող հիւանդութեանց վրայ կը մտածէր ու անոնց դեղերը դարմանները կը կրկնէր ու կ'երեքնէր: Բայց ամէն բան պարապ: Թէպէտ այսպէս միտքը կը յոգնէր՝ քունը երբէք մտենալու միտք չէր ցուցնէր: Աերջապէս ելաւ ու ճրագ վառեց ու նորէն Համբերութեան ու Փորձարարութեան գիրքերուն դիմեց: Ասոնք աւելի եւս զինքը գրգռելու սկսան. ուրիշ մէկ բժշկական գրուածք մը ձեռքն առաւ. իր խռովեալ միտքը հանդարտեցրնող բան մը գտնելն անկարելի եղաւ:

ճրագը նորէն մարեց ու նոյն իրիկուան դժբախտութեան վրայ կամայ ահամայ համակամ ըլլալով՝ գլուխը նորէն բարձին տուաւ:

Ահա նորէն, ձախորդ պիտի երթայ եւս. կարծես թէ իրեն դէմ ընելու, զինքը ծաղրելու համար՝ մէկը զանգակը զարկաւ, բայց այնպէս կամայ որ կարծես թէ վախկոտ երկիւղած ձեռքէ մը կը զարնուի: Պողաւին միտքը անմիջապէս աս ինկաւ. Արդեօք աս տան մէջ առջինին նման ուրիշ աղախին մ'ալ կայ: Բայց վերջէն աս ալ միտքն եկաւ թէ գուցէ բախար կամ հիւանդ մը վերջապէս իրեն ողորմիլ կ'ուզէ: Ուրիշ բան մտածելու ատեն չթողուց, ցատքեց ելաւ ու պատու հան վազեց:

Դրան առջին նորէն կնաջ կերպարանքով մէկը տեսաւ: Հարցուց. Ի՞նչ կ'ուզես:

Պարոն բժիշկը հոս չիբնակիր:

Այո, հոս, պատրաստ է ծառայելու:

Շնորհք ըրէք, ինձի հետ եկէք. խեղճ մայրս ջղաձգութեամբ կը շարչարուի:

Ինձի հետ եկէք. սհ, երկինք. աս խօսքը մեր բժիշկին համար ամենաքաղցր հնչիւն մը ունէր: Հիմա, հիմա, պռուալով՝ շուտ մը հագուելու սկսաւ: Աճապարելը, դահալիժելը մայր է ամէն սխալմանց: Այսպէս ալ եղաւ: Ամենէն յառաջ աջ կոշիկը ձախ ոտքին անցուց, զգեստը



չըջուն (թերս) վրան առաւ ու զգեստին թելը չկրնալով  
 գտնել՝ քիչ մնաց իր թելը պիտի կտորէր . փեղոյրը առնել  
 ուզեց՝ անոր տեղ ձեռքին տակ մեռելի գլուխ մը գանգ մը  
 եկաւ, վերջապէս ամէն բան ձախող երթալով՝ արիւնը  
 գլուխը զարկաւ . գանգը սրտմտութեամբ գետին նետեց,  
 առանց գլխարկի աճապարեց վազեց խուցէն դուրս ելաւ :  
 Սանդուխին վրայ երեք աստիճան մէկտեղ առնելով՝ մար-  
 մնոյն հաւասարակշռութիւնը կորսնցուց ու թափով մը բա-  
 կին մէջէն անցնելով ինք զինք դրան առջին գտաւ, դռնա-  
 փակը (չըրթլագ) յափշտակեց . տեսաւ որ կղպուած է .  
 Այ սատանայ, կանչեց մէկէն . միտքն ինկաւ որ բանալին ա-  
 նիծեալ աղախնոյն տուած է, անոր քովն է :

Բժիշկը հոս ալ ինք իրմէն ելաւ . Ո՛ դարչելի բախտ,  
 ո՛ դժբախտ գիշեր . ասանկ աղախինները սատանան տանի,  
 կը պոռար՝ կատղութենէն գրեթէ լալու մօտ :

Ղուռը նորէն փորձեց . ուզեց մէյմը Սամսոնին պէս  
 ամբողջ դուռը տեղէն հանել, քաշեց, հրեց, սարսեց, զար-  
 կաւ, ամէն բան ըրաւ, պարապ . երկաթէ կղպակը ձայներ  
 մը հանելով կարծես թէ զինքը կը ծաղրէր :

Այկէք, եկէք, Պարոն բժիշկ, ողորմեցէք շուտ ըրէք,  
 կը պոռար դուրսէն հեծկլտացող ձայն մը : Ներսէն բժիշկին  
 սիրտը գրեթէ ձաթելու մօտ էր . բայց դուռը կը ճռնչէր  
 կը կռնչէր, բացուիլ չէր ուզեր :

Արկայն աշխատանքէն ետքը համոզուեցաւ որ դուռը  
 բացուելու միտք չունի . ուստի ընելու ուրիշ բան չմնալով՝  
 որոշեց որ ելլայ աղախնոյն պառկած խուցն երթայ ու բա-  
 նալին անկէ առնու :

Իր բնակած տունը երեք դասիկոն ունէր . ամէն մէկ  
 դասիկոնին մէջ կարգաւ բազմաթիւ դուռներ կային . ասոնց  
 մէջէն մեծ բան էր աղախնոյնը գտնելը, որն որ սլ գիտէ  
 ինչ երազներու մէջ էր :

Ո՛ Էքքիւլափ, բժշկութեան աստուածն եսնէ, ողորմէ  
 քու հաւատարիմ աշկերտիդ ու գոնէ ցուցուր իրեն փրն-  
 տուած դուռը :

Խեղճը նորէն վեր ելած, շունչը կտրած, ինքիրմէ  
 դուրս ելած, կոյրի պէս պատերը խարխափելով՝ ձեռքին  
 հանդիպած առջի դրան կամացուկ մը զարկաւ, ետքէն սկսաւ  
 հարուածը սաստկացրնել : Ականջը բանլիքին ծակին առջին  
 դրաւ, ձայն չկայ : Ա՛րջապէս դռնափակը բռնեց, դուռը



բացաւ ու ներս նայեցաւ . ահա մեռելի գանգ մը լուսնոյ լուսին մէջ իր սոսկալի ակռաները իրեն կը ցուցընէր :

Ո՛ր բախտ . ան առջի շփոթութեան մէջ զարկած դուռը՝ իր սեփական խուցինն է եղեր , որուն առջին այնչափ երկայն վայրկեաններ կորսնցուց :

Բարկացած՝ դուռը կռնակի վրայ բաց թողուց , դուրս ելաւ եւ ուրիշ դուռ մը փնտռելու սկսաւ . գտաւ հատ մը , ուսկից հազարու ձայն մ'ալ լսեց : Հիւանդութեանց նշանները բժիշկներուն հետ խնամութիւն մ'ունին , իրարմէ կը քաշուին : Ուստի Պողլաւ թեթեւ մը զարկաւ :

Ե ուն մը ներսէն հաջել սկսաւ . կատուները քունէն արթնցած մլաւելու սկսան ու սաստիկ հազի ձայն մը կ'ընդհատէր ասոնց դաշնակը :

Դուռը ո՛վ է , պոռաց կնոջ ձայն մը :

Սոմսուհայն աղախինը աս խուցիս մէջ չի պառկիր , հարցուց բժիշկը մեծ անձկութեան ու շփոթութեան մէջ :

Սոսկալի հազ մը նորէն թնդացուց բոլոր խուցը , եւ աս խօսքերս ներսէն լսուեցան . Ո՛ր անամօթն է որ գիշեր ատեն աղախնոյս խուցը կ'ուզէ մտնել . ասկէ զատ՝ ինչ յանդգնութիւն՝ որ զիս քունէս կ'արթնցընէ . գուցէ իզմէ ճրագ ալ կ'ուզէ որ իրեն առաջնորդեմ , աներես մարդ . կեցիր հիմա կառապանը արթնցընեմ որ գայ քեզի հասկցընէ , անիծեալ զքեզ :

Բժիշկը դուրսէն ասոնք լսելով՝ հազար ու մէկ եղանակաւ ինք զինքը ջատագովելու կը ջանար , բայց պարապ , կնոջ սպառնալից խօսքերուն հեղեղին չէր կրնար դէմ դնել :

Մէկէն քովը զոյգ մը հողաթափի ձայն լսեց . աղախինը կոմսին պոռալը լսելով՝ կարծելով թէ զինքը կը կանչէ՝ վերէն վար էր ինջած :

Գո՛ղ կայ , գո՛ղ , սկսաւ պոռալ աղախինը՝ իր տիրուհայն դրանը առջին մարդ մը տեսնելով . ու լեղին փրթած՝ հողաթափները ձգելով փախչելու սկսաւ :

Բժիշկը անոր ետեւէն աճապարեց՝ որ բանը հասկցընէ . բայց աղախինը սկսաւ աւելի շուտ վազել ու փախչել եւ որչափ որ ձայն ունէր նէ կը պոռար . Գող եկեր է , գող , օգնութեան հասէք :

Ի՞նչ կայ , ի՞նչ կայ վերը , ի՞նչ եղաւ՝ պոռալով հաստը թմբուկի ձայնով մէկը վարէն վեր գալու սկսաւ :

Ե՛րհան , շուտ վեր եկուր , կը պոռար կոմսուհին իր խուցէն :



Ահա բռնեց, բռնեց զիս, կը խղզէ կոր զիս, հեծե-  
լով կը պոռար աղախինը:

Բժիշկը անձկութեան ու կատաղութեան հետ կը  
կռուէր: Մտիկ ըրէ, իս մտիկ ըրէ մէյ մը, կը պոռար շարու-  
նակ, ոչ գող եմ, ոչ ալ ճիւաղ: Բայց գրեթէ կիսամահ  
եղած ու խելքը դուլխէն թռուցած աղախինը չէր ուզեր  
մտիկ ընել ու աւելի երկայն եւ սաստիկ կը պոռար:

Բժիշկը տեսնելով որ ալ ըլլալու բան չէ, որպէս զի  
չըլլայ թէ ուժեղ ու վայրենի կառապանին ձեռքն իյնայ՝  
աղախինը թող տուաւ ու իր խուցն ապաւինեցաւ, որն որ  
ետեւէն աղէկ մը կղպեց ու նիզերը դրաւ:

Կառապանը վեր եկաւ. ինչ, սատանան ինչ գործք  
ունի հոս, ինքն ու իր մեծ մայրը հարսնիք ընելու ելեր են,  
ըսաւ՝ այնպիսի խորունկ ձայնով մը որ բոլոր սրահը հնչեց:

Ա՛խ, պոռաց աղախինը, հոս, հոս բռնեց զիս:

Ա՛յ, անամօթ մարդ, անշուշտ քեզ բռնադատել  
ուզեց, ըսաւ դռնէն խաթունը:

Բայց ո՞վ է, ո՞ւր է, հարցուց կառապանը, հոս մարդ  
չկայ:

Ի՞նչ, գացեր է, հոս չէ՞, ըսաւ աղախինը՝ խորուն-  
կանց շունչ առնելով. ստուգիւ մեռած զանկապանագոր-  
ծին ոգին եղած պիտի ըլլայ, որն որ սրտին ցաւէն մե-  
ռաւ, որովհետեւ զինքը արհամարհեցի. անտարակոյս հի-  
մա զիս հալածելու ելեր է:

Բժիշկը անմեղ կերպարանքով մը՝ ձեռքը ճրագ մը  
խուցէն դուրս ելաւ: Բայց այսպիսի մէկ շփոթութեան մը  
ատեն՝ լաւագոյն սեպեց անգէտ ձեւանալ, ու սկսաւ ինքն  
ալ մէկալնոնց պէս զարմանալ ու հարցումներ ընել. եղած-  
ները մէյմը աղախնոյն երեւակայութեանը, մէյմը կոմսու-  
հւոյն երազներուն տալ: Տարակոյս տարակուսի վրայ դի-  
զուեցաւ, վերջապէս բան մը չկրցան որոշել եւ մինակ ան  
կրցան որոշել որ ամէնքն ալ երթան պառկին:

Բժիշկը՝ Արգէն ելած գտնուեցանք, ըսաւ աղախնոյն  
անտարբերութեամբ մը, աս առթով չմոռնամ բանլէքն ալ  
տուր՝ որ գուցէ գիշերը հարկաւոր կ'ըլլայ:

Բանլէքը կ'ուզես, ըսաւ աղախինը, մեծապէս շնոր-  
հակալ եմ քու բարութեանդ. արգէն տուն մտածիս  
պէս՝ նոյնը դրանդ սեամին (էշէք) մէկ ձօթը դրի, որ  
հարկաւոր ըլլայ նէ նաեւ գիշերը կարենաս գտնալ:

Ա՛յ թշուառութեանս, ըսաւ բժիշկը միտքէն ու



անմիջապէս իր դրան առջեւէն բանլիքն առնելը ու վար իջնալով տան դուռը կռնրկի վրայ բանալը մէկ բրաւ :

Ահա, դրան առջին մարդ չկայ. մէյմ'ալ գլուխը դուրս հանած ասդին անդին նայելու ատեն տեսաւ որ աղջիկը մօտերն եղող ուրիշ բժիշկ մը առեր կ'երթայ կոր պատմելով նոյն բժշկին թէ ինչպէս երկայն ատեն Պոզլաւին դրան առջին հեծելէն ետեւ յուսահատած իրեն դիմած է. ո՛հ, ի՛նչ անգութ ու քարէ սիրտ ունի եղեր, կ'ըսէր, գուցէ մինչեւ հիմա մայրս ցաւերէն մեռած է :

Մեր դժբախտ բժիշկը դուռը գոցեց ու գլուխը կասած կամաց կամաց վեր ելլելով՝ միտքին մէջէն հազարաւոր խորհուրդներու խորթութիւններով անիւ մը դարձրնելով խուցը մտաւ ու բացաւ բերանը. ալ որչափ որ կրնար որչափ որ զօրութիւն ունէր նէ՛ երկայն երկայն ու սոսկալի անէծքներ թափեց դառնացած սրտին բաժակէն՝ ամէն աղախիններու վրայ՝ թէ մեղաւորի թէ անմեղի: Բայց ինքն ալ բոլորովին հոգնած պարտասած էր, բոլոր անգամները կը դողդողար. ոտքի վրայ ալ չէր կրնար կենալ :

Նորէն ելաւ պառկեցաւ. նոյն գիշերը ալ ուրիշ մէկ վրդովում մը չունեցաւ. ամէնքը զինքը հանգիստ հանդարտ թող տուին. բայց իր քունը ի՛նչպէս կրնար տանիլ :

### Մանրամիտք

Ֆորթիւնէ՛ որն որ Նաբոլէօն կայսեր ամուսնոյն ժողէֆինին սիրական շունն էր, իր տիրուհիէն ան աստիճանի կը սիրուէր՝ որ Նաբոլէօնն ալ շատ անգամ տեսակ մը նախանձ կ'ունենար անոր վրան: Բայց Ֆորթիւնէ աս սիրոյն արժանի էր: Տեսնենք թէ ինչէն: Ժողէֆին իր առջի երկանը Պոհարնէ զօրապետին հետ մի եւ նոյն ատեն բանա դրուեցաւ եւ հոն արտաքոյ կարգի կը նեղուէր եւ դուրսն եղած բաներէն բանի մ'ալ ծանօթութիւն չէր կրնար առնուլ: Բայց վերջապէս կրցան հրաման առնուլ իր տղաքը որ իրենց դայեակին հետ մօրերնուն այցելութիւն ընեն բանտին մէջ: Հոս բանտին մէջ քանի անգամ որ այցելութիւն կ'ըլլար՝ անողորբելի բանտապանը ներկայ կը դանուէր եւ անկարելի կ'ըլլար գաղտնի խօսք մը խօսիլը: Աարօտութիւնը հնարագիւտ է կ'ըսեն: Ֆորթիւնէն միշտ աս այցելութեանց հետ մէկտեղ կու գար. օր մը մէկէն դայեակին միտքն ինկաւ որ շան նոր ու աղւոր վզնոց մը անցունէ



եւ անոր տակը նամակիկ մը խոթէ ծածկէ, որուն մէջը ան ամէն բան նշանակէ՝ որն որ բանտապանին ներկայութեան ատեն ըսելը անկարելի էր: Ժողէֆին շան նոր վզնոցը տեսածին պէս՝ անմիջապէս գուշակեց որ անոր տակը բան մը պիտ'որ ըլլայ եւ շան հետ խաղալ ձեւացընելով կամացուկ մը նամակը առաւ ու երկրորդ անգամ այցելութեան գալերնուն՝ անոր պատասխանը ճարակութեամբ մը առջինին տեղը դրաւ. ուստի այսպէսով իր ու բարեկամաց մէջ թղթակցութիւն մը սկսաւ, որով Ժողէֆին ան ամէն բանը կ'իմանար՝ որն որ իր ազատութեանը համար կ'ըլլար: Թէ աս եղանակաւ մեծապէս կը մխիթարուէր ու կը քաջալերուէր՝ արդէն յայտնի ու բնական բան մըն է: Աս ժամանակէս ի վեր այսպիսի մեծ պաշտօն մը կատարող շունը մեծ սէր վաստակեցաւ եւ մինչեւ ցմահ վայելեց եւ չէ թէ միայն Ժողէֆինին սիրելին էր՝ հապաբոլոր ընտանեաց:

Պաշտօնեայ մը՝ որ իր հարստահարութեամբը նշանաւոր էր, մեռնելու ատեն կտակին մէջ յանձնեց որ իր ծախքովը աղքատանոց մը շինուի: Օր մը մէկը աս գործքը Լուդովիկոս Ժ.ին առջին արտաքոյ կարգի գովելու ատեն՝ թագաւորը ըսաւ. Անիկա իր պարտքը կատարեց. երբ որ իր կենացը մէջ այնչափ մարդ աղքատացուց նէ՝ արդար չէ որ մեռնելու ատեն անոնց ապաստանարան մը տայ:

Հռոմայեցի կնիկ մը որ 50 տարւրնէ աւելի էր, բաղձալով որ աւելի երիտասարդ սեպուի, մեծ ու փառաւոր ընկերութեան մը մէջ հարցուց Աիկերոնին թէ՝ Ստուգիւ երեսուն տարուան չեմ: Հապա, ըսաւ Աիկերոն, անշուշտ այնպէս պիտ'որ ըլլայ, որովհետեւ քսան տարիէ ի վեր նոյնը հաստատելու ու քարոզելու վրայ ես:

Սաուլ Լանուա մեծ քաջութիւններ ըրաւ քաղքի մը վրայ յարձակելու ատեն, զորն որ Լուդովիկոս Ժ. անձամբ պաշարած էր: Յարձակումը լմրննալէն ետեւ թագաւորը զինքը կանչեց ու ըսաւ. Պատերազմի ատեն արտաքոյ կարգի կատարութիւն մը կը ցուցընես. պէտք է որ քեզ շղթայի զարնեմ ու քովս պահեմ. աս ըսելով ոսկեղէն ծանրագին շղթայ մը հանեց անոր վիզը անցուց:



Նեւտոն հռչակաւոր աստղաբաշխն ու մաթեմատի-  
քոսը ատեն մը նաեւ Անգղիայի խորհրդանոցին ստորին  
սենեկին մէջ անդամ եղած էր, բայց մէկ անգամ մը մի-  
նակ նստի մը մէջ ձայն հանած էր: Անշուշտ այնպէս կը  
կարծուի որ աս հանձարաւոր անձը աս անգամ իր հայրե-  
նեացը օգտին նկատմամբ առաջարկութիւն մը ըրած պիտի  
ըլլայ: Բայց այնպէս չէր: Կոտրած պատուհանէ մը խիստ  
հով մը փչելով մեր փիլիսոփային նեղութիւն կու տար,  
ոտք ելաւ ասիկա ու բարձր ձայնիւ ըսաւ. Սա կոտրած պա-  
տուհանը շինել տալու էր: Նեւտոն խորհրդանոցին մէջ  
աս խօսքը միայն խօսած էր:

Ազահ մը աղքատի մը աւելցած կերակրոյ կտոր մը  
տուաւ. աղքատը նոյնը առաւ ու հոն սեղանին վրայ եղած  
լրագիր մը քաշեց հետը առաւ՝ որպէս զի առածը մէջը  
գնէ փաթթէ: Ի՞նչ կ'ընես կոր, պոռաց ազահը, դեռ չեմ  
կարդացած: Բան չկայ, ըսաւ աղքատը, երբոր դուն մէկու  
մը բան կու տաս նէ՛ լրագրի մէջ գնելու բան է:

Օւարձալի ընկերութեան մը մէջ խնդիր մը ծագե-  
ցաւ թէ ինչու համար կանայք մօրուք չունին: Ասոր մեկ-  
նութիւնը դիւրին է, ըսաւ մէկը. Ո՞վ պիտի զերենք ամի-  
լէր, որովհետեւ բերաննին ըսպէ մ'ալ հանդարտ չեն կրը-  
նար բռնել:

Արժապետին մէկը աշկերտին կ'ըսէր, Սորդիս,  
միտ դիր, թէ որ հարցաքննութեան ատեն վերատեսուչը  
քեզի հարցընելու ըլլայ թէ Ձքեզ ո՞վ ստեղծեց, պա-  
տասխան պիտի տաս թէ՛ Աստուած: Բայց հարցաքննու-  
թեան ատեն վերատեսուչը սխալմամբ ուրիշ աշկերտի մը  
ըրաւ նոյն հարցումը ու ըսաւ. Ձքեզ ո՞վ ստեղծեց. Իմ  
մայրս, պատասխանեց պզտիկը: Ի՞նչ, ըսաւ վերատեսուչը,  
Աստուած չստեղծեց զքեզ: Ձիս չէ, հապա անիկա ստեղ-  
ծեց, ըսաւ պզտիկը՝ Սարգիսը ցուցընելով:

Անգղիայի մէջ պատգամաւորաց ընտրութեան ատեն՝  
ընտրողները կաշառ չառնելու երդում կ'ընեն, բայց գրաւ  
չբռնելու (պէս թութմագ) երդում չեն ըներ: Մարդուն



մէկը ընտրողի մը գալով ըսաւ իրեն . Գրաւ կը բռնեմ որ դուն քու ձայնդ կամ քուէդ ինձի պիտի չտաս : Ընտրողը գրաւը յանձն առաւ ու իր քուէն անոր տուաւ ու ասանկով գրաւը վաստկեցաւ , իսկ մէկալը ընտրութիւնը վաստկեցաւ :

Գաղղեայի մէջ հարուստ երկրատէր մը ընկերութիւն մը հրաւիրեց մէկտեղ ուսարէ (սարխա) ուտելու ու ծառան քանի մը ժամ հեռու եղած տեղ մը խրկեց՝ որ անկէ քանի մը հարիւր թարմ ուսարէ գնէ բերէ : Ծառան գնած ետ դառնալու ատեն ճամբան քանի մը ճանչւորներու հանդիպեցաւ , որոնք հարցուցին իրեն թէ՛ Աողովին մէջ տարածն ի՞նչ է : Ուսարէ է , պատասխանեց ծառան : Ի՞նչ ուսարէ , ըսաւ անոնցմէ չարածձիկին մէկը , պայպիսի աստաքի ատեն . մինչեւ որ տուն հասնիս նէ՛ անոնք կը հոտին կ'երթան . անշուշտ քու տէրդ անոնց կեղեւները ուզած ու անոնց հարկաւորութիւն ունեցած պիտ'որ ըլլայ , չէ թէ հոտած ուսարէներու . ուստի եկուր , նստէ սա տեղը , բաց կողովդ , մենք քեզի կ'օգնենք բանալու եւ քանի որ ուտուելու վիճակի մէջ են նէ՛ փոխանակ թող տալու որ հոտին՝ աղէկ մը կ'ուտենք եւ քեզի ալ թեթեւութիւն կ'ըլլայ՝ մինակ կեղեւները տուն տանելու , եւ ասով կրնաս աւելի շուտ քալել ու կանուխ ալ տուն հասնիլ եւ ասոր համար տիրոջմէդ ալ կը գովուիս : Գիւրահաւան ծառան լիովին համոզուեցաւ եւ կարծելով որ խօսածնին անկեղծ է՝ խորհուրդնին ընդունեցաւ . ուսարէները բացուեցան , ու ան տաքին մէջ ատենին հասան եւ մեծ ախորժակով լափեցան լմնցան : Ծառան կեղեւները խնամքով ժողովուելով ու կողովին մէջ գնելով՝ ընտիր ընկերութեան Մնաք բարով ըսելով ճամբայ ելաւ ու տուն հասաւ , ուր որ հրաւիրուած հիւրերը տաքութենէ նեղուած մեծ ախորժակով ուսարէի կը սպասէին : Երբոր պարապ կեղեւները կողովէն դուրս հանելու սկսաւ ու թոթովելով ըրածը ջատագովելու ետեւէ էր՝ ամէնը մէկանց բարձրաձայն ծիծաղ մը փրցուցին՝ բաց ի տիրոջմէն՝ որն որ արտաքոյ կարգի բարկացած կրակ կտրած՝ ուսարէ , սկաւառակ , դանակ , պատառաքաղ՝ ձեռքին եկածը զարհուրած ծառային գլուխը սկսաւ նետել , որն որ անուշ անուշ յոյսերով կ'երազէր թէ տիրոջմէն մեծ գովութիւն պիտի ընդունի իր աչալըջութեան համար :



Արիտասարդ մը դատաստանի կանչուեցաւ, որովհետեւ վրան ամբաստանութիւն եղած էր որ զոյգ մը զանկապան, ներքին զգեստ մը, մետաքսէ շրջազգեստ մը (Ֆիսթան), ուսադիր մը ու փեղոյր մը գողցած է: Քննութիւն ըլլալով իմացուեցաւ որ գողը աղջիկ մըն է եղեր յափրշտակած ու այնպիսի քաղաք մը ապաստաներ է՝ որն որ գաղտնի ամուսնութեանց բոյն է եղեր: Աս աղջկան մայրը գիտնալով որ աղջկան յափրշտակութիւնը ամբաստանելու ըլլայ օգուտ մը պիտի չընէ, աւելի աղէկ էր սեպած՝ աղջկան յափրշտակութեան ատեն ունեցած զգեստներուն գողութիւնը ամբաստանել:

Աղքատ ուսանողին մէկը, որն որ շատ բաղձանք ունէր որինգ (Ֆլաութոյ) սորվելու, վարպետի մը երթալով հարցուց թէ ամէն մէկ այսպիսի դատաւութեան համար ինչ գին կը պահանջէ: Առջի ամուսն համար, ըսաւ վարպետը, 50 Ֆրանք, իսկ երկրորդ ամուսն համար 25 Ֆրանք: Լաւ է, լաւ է, ըսաւ ուսանողը, թէ որ կը հաճիս նէ՝ անմիջապէս երկրորդ ամուսն սկիզբը դասի կը սկսինք:

Անգղիացի սեղանաւոր մը ծանր հիւանդանալով իր ամենէն մեծ որդին կանչեց ու ըսաւ. Իմ սեղանիս վարչութիւնը եւ իմ անունս քեզի կը ձգեմ: Շիտակը զուրցելով՝ նոյն սեղանով միայն պարտք կը ժառանգես, որովհետեւ ստացուածքս քիչ ոչինչ բան մըն է. բայց թէ որ դուն ալ ինձի պէս տանս վարկը (քրէտի) աղէկ գործածելու ըլլաս ու անկէ օգուտ հանել կարենաս նէ՝ կրնաս շատ աղէկ ապրիլ ու տունդ պահել, ինչպէս որ մինչեւ հիմա ես ըրի: Ի՞նչ, ըսաւ այլայլած որդին, քու գործելու խուցիդ մէջ ոսկիով լեցուն երկաթէ սնտուկ մը չիկայ: Պատասխանեց հայրը. Ան սնտուկին մէջ քարի կտորներէն եւ արժէք չունեցող թուղթերէն զատ ուրիշ բան չկայ: Ուրեմն ինչո՞ւ, ըսաւ որդին, իմ պզտի եղբորս այնչափ մեծ հարստութիւն ձգեցիք: Ասիկա պէտք էր որ ընէի, պատասխանեց հայրը, ապա թէ ոչ բոլոր աշխարհք կ'իմանար որ աղքատ եմ մեռած. որով ամէն բան կը կորսուէր: Որդին բանը իր վրան առաւ ու յառաջուան պէս յաջող գործք ունեցաւ:



Վարպետին մէկը իր սիրելի աշկերտներէն մէկը ուզեց ճաշի հրաւիրել. բայց աշկերտը տունը չգտնելով՝ դրան վրայ ասանկ գրեց. Այսօր իմ քովս ճաշի հրաւիրուած ես : Աշկերտը տուն գալով ու դրան վրայ գրուածը կարդալով գնաց վարպետին քով ու մէկտեղ ճաշեցին : Երկրորդ օրը աշկերտը դարձեալ ճաշի եկաւ. վարպետը զարմանալով հարցուց. Ո՞վ զքեզ այսօր ճաշի հրամցուց : Գուն, ըսաւ աշկերտը, որովհետեւ այսօր ալ տուն դարձած ատենս դրան վրայ քու հրաւերքդ կարդացի : Վարպետը ծիծաղեցաւ ու անմիջապէս անոր դրան վրայի գրուածը աւրել տուաւ :


Կոմս մը իր անուան տօնախմբութիւնը կատարել ուզելով՝ իր ընտանեացը ու քանի մը բարեկամներուն կոչուեց մը տուաւ : Կոմսին կալուածներուն վերատեսուչը տիրոջը պատիւ մ'ընելու համար՝ իր տակը եղող գեղացիներուն հրամայեց որ կէսօրը գան ու պալատին բակին մէջ ժողվուին եւ վերը սեղան ըլլալու ատեն՝ երբոր նուագաբանները կը սկսին ու շնորհաւորելու կ'ըլլան նէ՛ գաւաթները իրարու զարնելուն ձայնը լսածնուդ պէս, ըսաւ, դուք ալ վարէն Աեցցէ պողացէք ու ձեր տիրոջը շնորհաւորութիւններ ըրէք : Սեղանը լմրննալու մօտ ծառան շամբանիային շիշը բերաւ եւ ուրիշ ծառայ մըն ալ ամսէի մը մէջ գաւաթները բերելու ատեն՝ ինչպէս եղաւ՝ ոտքը սահեցաւ ու շամբանիայի գաւաթները իրարու զարնուելով ինկան ու ջախջախեցան : Վարը գեղացիք գաւաթի ձայն լսելուն պէս՝ կարծելով որ շնորհաւորութեանց շառաչիւնն է՝ ամէնը մէկանց սկսան պողալ. Աեցցէ մեր ազնիւ կոմսը : Կոմսը բարկացած՝ գաւաթները ձգող ծառային, Այ անիծեալ զքեզ՝ կը պողար. Նաեւ ազնիւ խաթունը ու պատուական վերատեսուչը. կը պողային վարէն գեղացիք : Կոմսը վերէն գեղացուց Աեցցէ՛ի ձայնը լսելով՝ աւելի կատաղած կը պողար անոնց. Գուք ալ անիծեալ ըլլաք. Ամէնքը, Ամէնքը, Ամէնքը, կը պողային գեղացիք լեցուն կոկորդով բանին էութիւնը չգիտնալով ու իրենց շնորհաւորութիւնը յառաջ տանելով : Այսպէս տեսարանը շարունակուելու ատեն՝ հիւրերը ամէնը մէկանց բարձրաձայն ծիծաղ մը փրցուցին եւ ասով տեսարանը լմրնցաւ :



Հարուստ չինիմաչինցի մը լսելով որ Եւրոպացիք՝  
բժիշկներուն հիւանդանալու ատեննին ստակ կու տան,  
բաւ . Անշուշտ ձեր մէջը շատ հիւանդ պիտի գտնուի եւ  
երկայն ատեն հիւանդացողներ շատ պիտի ըլլան . ես չորս  
բժիշկ ունիմ, որոնց շարաթական կապած եմ, բայց հիւան-  
դացած օրէս՝ ստակնին կը կտրեմ՝ մինչեւ որ նորէն առող-  
ջանամ . կարծեմ ասիկա աւելի խելացի ընթացք մըն է :

Միմոսին մէկը պանդոկ մ'իջաւ ու ճաշելու ատեն  
պանդոկապետը մօտենալով ընկերութիւն ընել ուզեց եւ  
ուրիշ խօսակցութեանց մէջ սկսաւ նսեւ իր տանը մկե-  
րուն շատութեանն ու աներեսութեանը վրայ տրանջալ :  
Հատ գէշ, շատ գէշ, բաւ միմոսը, դժբախտութիւն,  
ինչ պիտ'որ ընես . բայց ես դեղ մը ճար մը գիտեմ զիրենք  
հալածելու, վերջէն կ'ըսեմ քեզի, միտքս ձգելու չմոռնաս :  
Միմոսը պանդոկէն երթալու որ եղաւ՝ պանդոկապետը եր-  
կայն բարակ ու սոսկալի հաշիւ մը դրաւ առջեւը . միմոսը  
զարհուրիլ մը ցուցուց, բայց հանեց ստակը տուաւ ու եր-  
թալու վրայ էր՝ մէյ մ'ալ պանդոկապետին միտքն ինկաւ  
անոր խոստացած մկերու դեղը ու խնդրեց որ նոյնը զուրցէ :  
Աս ինձի բերած հաշիւդ ցուցուր իրենց, բաւ միմոսը, եւ  
քեզի կը խոստանամ որ ամէնքն ալ ամիջապէս կը փախ-  
չին կ'երթան :

Տէր մը ծառան կանչելով բաւ իրեն . Աս ինչ է  
բերած ձեռքնոցիդ երկուքն ալ աջ ձեռքի են . աս չիհա-  
մաձայնիր : Ծառան գնաց եկաւ ու բաւ . Տէր, մէկալ  
երկուքն ալ չեն համաձայնիր, վասն զի անոնց երկուքն ալ  
ձախ ձեռքի են :







## Ք Ա Բ Ո Ւ Ե

Հեռու հեռու

Չմեռ դու .

Հով մը փչեց՝ տարաւ ձիւնն .

Գարուն սիրուն ամենուն ,

Տուր համբոյր մը մեր երկրին ,

Արեւուդ բիւրջ կը մեռնին :

Բարեւ բարեւ

Ո արեւ ,

Դարձուր աչքերդ դետին .

Մանուկ մըն ես նորածին .

Ան ինչ առոյդ աչքեր են ,

Ան ինչ կարմրուկ այտեր են .

Վարդ ես՝ թէ նուր ,

Չէ նէ հուր :

Ա՛լ մ'ամչնար , մի ժողվեր

Ցրուէ մազերդ ոսկեյեռ .

Վառէ ծոցրս՝ հուր ես նէ ,

Թէ վարդ ես նէ՝ պսակէ :

Ծերն ա՛լ հոս չէ .

Դաշտ , աղէ .

Վազենք մանկունք իմ կայտառ .

Տարերք կ'երգեն՝ բռնենք պար :

Տես տես՝ ծերուն մազերէն

Կ'իջնան ջրեր սառնեղէն



Խողխոջելով

Կարկաջով .

Չիւնէ աւազն ու զանգուած

Հայլիի պէս է եղած .

Հոս լճակ մը, լիճ մ'անդին ,

Հոն գետակ մը, գետ մ'ասդին :

Ի՛նչ թարմութիւն ,

Ի՛նչ զեղում :

Ձեփիւռ մ'անուշ ու տաքուկ՝

Ընդարմացած ու փափուկ

Ծիւք ու ծաւքեր կը բանայ .

Կանանչ գորգ մը քեզ ահա :

Եկուր երթանք

Անտառակ .

Ո մանուշակ , արթնցիր ,

Տուր նայուածք մը սիրալիր :

Ահա , ահա բոյրն արդէն

Կը խրկէ կոր հեռուէն :

Արեւն առոյգ՝

Մեր խարոյկ ,

Դեռ կը վառի , չէ յոգնած .

Երթանք յառաջ անկասկած :

Կեցէք կեցէք , բարեկամք .

Սա ձայներուն ականջ տանք :

Փափուկ պզտիկ

Տերեւիկք

Կը դողդղան , կ'երերան ,

Անտարակոյս նոր դարնան

Բարեմաղթանք կը կարդան :

Երգենք մենք ալ միաբան :

Կեցէք սակայն .

Նոր մէկ ձայն .

Ո՛հ , ո՛հ , զմեզ յառաջեց

Չնչին թռչնիկ մ'ոստոց մէջ .

Չէ , չնչին չէ , կը շնչէ

Ճիչ մ'ու ճոխնչ՝ որ հնչէ .

Ի՛նչ , ոչի՛նչ է ,

Մինչ մնչէ .

Սիրտեր , շունչեր կը ճօճին

Ճռուողելէն թռչնեկին :



Ճառ մըն է ճառ մեծածիղ,  
 Ուսկից շատ շահ կը շահինք:  
 Ինքն է սոխակ.  
 Երդն ալ ասանկ.  
 Գարնան հասանք,  
 Ալ մէկ հիմակ,  
 Ելլենք երթանք:





**ԾՈՎՆ ՈՒ ՄԻՐՏ**

Կը սիրեմք քեզ, ծով սևջառակ  
Դռան թե՛ եռաս կոռակ կոռակ,  
Թե՛ հանդարտիս, շատ կը անսնիս  
Մարդուն արտիս ու իմ արտիս :

Երբեմն հանգիստ ու խաղաղիկ  
Վե՛հ կեցո՞ւսքով յատակ շո՛իկ .  
Երբեմն խորշ խորշ՝ վե՛տ վե՛տ աշիք ,  
Զեփիռներո՞ւ հեջտ խաղաշիք :

Ասոր անուն է սիրտ մարդուն  
Երբոր հանդարտ կոռ տայ թե՛նիսն .  
Երբեմն հեզիկ մը կը շարժի  
Երբ ծառք մ'յոռայ կոռ գայ աշիք :

Ինչպէս մորիկն աշիք կոհակ  
Կ'աշտարակ էրկնից անհակ,  
Այսպէս սիրտ մը վշտե ընկձամ՝  
Կը դիմե միջտ վե՛ր առ Աստուած :



Ինչպէս որորն աշեաց վերայ  
 Մառառնէշով դիտ կը կեցայ՝  
 Որ ծիծաղող առար մ'իբեկ  
 Չփախցրնէ անյագ բերնէն ,

Այսպէս կ'ոռտէ սիրտը մարդոն  
 Ապագայիև գորշահոռթիւն :  
 Որորի պէս՝ ցառը արտիւն  
 Մառառնէշով կ'առնոռ շորս դիւն :

Ո՛ր անդռնէյ մոռթ՝ խորհրդակասն ,  
 Խորոռթեանէյ մեջ կը քնանասն՝  
 Անյայտ փառքով , պատռով մթիւն ,  
 Բոռատ , մարգարիտ , գոհար անգիւն :

Այսպէս մարդոռս արտիւն մեջն աշ  
 կը քնանասն շատ բան ծածկեաշ .  
 Հագար տեւելակք ոռ հագար սէր ,  
 Վեհ զգածմոռնէք , մեծ մեծ յոյսէր :

Ծովն արդարէն ձիշտ սիրտ մըն է ,  
 Ինչպէս սիրտն աշ ձիշտ ծով մըն է .  
 Մէյ մը շարժած , մէյ մը կեցած ,  
 Է երկոռքն աշ միշտ ատեղծոռած :





## Մ Ա Հ Ո Ւ Ն Ո Ր Ս Ը

Հովը տերեւ մը ձգեց,  
Լեռնէն իջաւ ձորի մէջ,  
Հոս հոն խաղաց խաղ մ'անբաւ.  
Հով մ'ալ փչեց հետն առաւ,  
Ո՛ւր տարաւ.

Ոչ հովը կայ, ոչ տերեւ,  
Լուսթիւն մը մշտատեւ:  
Ո՛հ զիս պատեց թուխն ու սեւ,  
Սիրտս աւելի սեւ կեղեւ.  
Ի՞նչ եղեւ.

Պղուտոնին գողէն էր՝  
Սեւ ճիւղի մը պատկեր  
Արդ սահեցաւ առջեւէս.  
Բայց սառեցայ գացի ես:  
Ո՛վ, գիտե՛ս.

Գիտե՛մ, Մահն է անիկա.  
Հովի մը պէս անխնայ  
Զարկաւ անցաւ ու լռեց,  
Անապատ մը ձգեց մեծ.  
Որո՞ւն մէջ.

Ա՛խ, սրտիս մէջ փշալից.  
Ըրաւ սիրտս բոյն փուշից.  
Ինքը ցանեց, ինք մեծցուց,  
Իր շուքն ալ վրան նստեցուց:  
Ի վաղո՞ւց.

Տեսա՞ր ծառը դիմացի՝  
Տուողն համբոյր մը դետնի.  
Ծեր որդ մըն էր զինքն ուտող.  
Անկէ եղաւ սրտիս օղ:  
Ո՛ւր տեսնող:

Զուարթ թռչնիկ մը տեսայ  
Գարնան ծաղկի մը վերայ.



Ծաղկին, թուփին ու ծառին  
 Համբոյր կու տար ջերմագին .  
 Անրջ նոյնին .

Մեղք, որորդի մը մատեր  
 Ըրին զինքը մահուան կեր .  
 Ինքն որորդն իր չէր տեսեր,  
 Դահիճս երբեք տեսայ ես :

Ա՛խ, ի՞նչպէս,  
 Յանցանք մ՝ ունէ՞ր ծաղիկն այն՝  
 Որ Մայիսին գորգին վրան  
 Հարսնիք կ'ընէր կը խայտար,  
 Կ'առնուր աչքեր սիրահար .  
 Այրապար .

Այո՛ այո, կոյր մանգաղն  
 Անգութ բերնին ըրաւ խաղ .  
 Անոր ընկերն ալ նոյնպէս  
 Ինկաւ մեռաւ ցրտակէզ .

Ի՞նչ կ'ըսես :

Լեռներ ինկան, մաշեցան,  
 Ժայռեր եղան ցիր ու ցան .  
 Հովը զարկաւ, հուրն այրեց,  
 Զուրը տարաւ, հողն հաշեց,

Ի՞նչ կայ զերձ .

Լեռ բարձրաբերձ, վե՛հ ծաղիկ,  
 Ծառ լեռնաձեւ, պերձ թռչնիկ  
 Եղան մահուան որս աւար .  
 Մահուան յաղթել չենք կրնար,  
 Չիկայ՛ ճար .

Չորս կողմերնիս մահն առած,  
 Ո՛վ է անմահ արարած  
 Ո՛վ մարդ, ո՛վ մարդ, պարապ է .  
 Փախչող մահուան ժանիքէ

Ո՞ր մարդն է :

Ոչ ողբ, ոչ լացք, ոչ կաշառ  
 Ախպան ընկձել չեն կրնար .  
 Լափողն այնչափ հեշտ օրեր՝  
 Որով կեանքդ կ'որորէր,

Ինքը չէր :

Ո՛հ, աւելի խեղճը կայ .  
 Քեզմէ մատաղ մը ահա,



Քեզմէ իզմէ երջանիկ,  
Եղաւ որդի մը խորտիկ.

Չէ՛ հերիք:

Սիրելեացրդ խընայեց:

Սիրարդ թաթխեց արեան մէջ:

Հոս է շիրիմդ, հոս ստուեր

Նոճիներուդ սգաբեր.


Վ'ապրիս դեռ:

Ո՛վ է անվախ, ո՛վ վատահ.

Նեա մը ահա թեւաբախ

Գլխուդ վըրայ.

Անգո՛ւթ մահ:








Բանաստեղծին  
 Երգն առաջին՝  
 Ո՛վ վարդ քեզի  
 Տրուէր պիտի :  
 Առ ընդունէ  
 Վերջի երգս է  
     Դուն գոնէ :  
 Երկնային կոյս ,  
 Քեզ արշալոյսն  
 Հաս կը սիրէ .  
     Մատերն է  
     Քեզմէ  
 Կը զարդարէ :  
 Արեւն իր այտ ,  
 Լուսինն՝ ճակատ ,  
 Արուսեակն ալ  
 Հրթուկքը տալ  
 Անուշ վարդին  
 Կը խոնարհին :  
 Բայց կու տաս դուն ,  
 Ո՛վ վարդ սիրուն ,  
     Ամենուն  
     Գեղոյն  
     Գոյն :  
 Օրհորդին  
 Դուն ես ոգին :  
 Ճակատ վարդէ  
 Սիրտեր կ'առնէ .  
 Այտ մը վարդէ

Հուր կը վառէ :  
 Վարդէ շթուկք ,  
 Դափնիով քունք ,  
 Մեկը տունէն  
 Միւսը մարտէն  
 Երբ իրարու  
 Հանդիպելու  
     Որ ըլլան ,  
     Տեսարան  
     Մը կու տան  
     Հքեղ  
     Վե՛հ :  
 Ես ալ քեզի  
 Բարեւ տուի  
     Թագուհի  
     Ծաղկի :  
     Ծաղկեղու  
     Առտու :  
 Բոյրդ անուշեկ  
     Չեփուռիկք  
     Մանկիկ՝  
     Ժիրաժ իր  
     Բերկրալեր  
     Կը տանին  
     Չորս դին :  
 Ո՛հ , թեւերնին  
 Ինձ հասցուցին  
 Քո ծննդեան  
 Անուշ նշան .




Դուն ամարուան,  
 Սիրոյ դարնան,  
 Գեղեցկութեան  
 Ես թարգման :  
 Ինչ նորանոր  
 Ունիս շնորհ :  
 Բաժակ կլոր,  
 Թերթ թերթ բոլոր,  
 Պսակաւոր :  
 Սիրտս՝ մէջն առ  
 Ծաւքիդ հազար :  
 Երբ ցող մը զով  
 Մարգարիտով  
 Կը լեցընէ  
 Ծոցդ ոսկիէ՛  
 Վառեալ  
 Սիրտս ալ  
 Անով զոջնալ  
 Կարենար :  
 Ո՛ հրախառ

Պայծառ  
 Վարդ,  
 Ան վառւրուուն  
 Բաւիղներուն  
 Ծաւքերուն  
 Հրոյն  
 Գոյն  
 Իբրեւ մագնիս  
 Չգեց զիս :  
 Ո՛հ, կը ջանան  
 Վարդին դարան,  
 Բաւիղն անեւ  
 Մոլորցընեւ  
 Պուետն  
 Յաւէտ  
 Մէտ  
 Զմայլման  
 Փայլման  
 Վրան :







## ԲԱՆԻ ՄԸ ՇՈԳԵՆԱԻԲ

Ըստ կարգաւորոթեան Մեայտեւթեր ամսոյ 1857

Պալիտին Ազգասանդրիտ, Գաղղիական շոգենաւը կ'ելլէ երկու ուրբաթ մէյմը՝ կէսօրէն ետքը. 16 օր ճամբայ կ'ընէ. իսկ մինչեւ Պէյրուսթ 12 օր. Ա կարգ՝ 294 ֆրանգ. Բ. 206. Գ. 150. Դ. 75. Իսկ մինչեւ Պէյրուսթ՝ Ա. 250 ֆր. Բ. 175. Գ. 125. Դ. 75:

Պալիտին Չիւրիտ. 1—1½ օր. Գաղղիական շոգ. երկու ուրբաթ մէյմը. Ա. 90 ֆրանգ. Բ. 54. Գ. 36. Դ. 22. Աւստրիական շոգ. ամէն շորեքշաբթի ու շաբաթ կէսօրէն ետքը. Ա. 29 ֆիորին. Բ. 20. Անգղիական շոգ. ամէն ամսոյն 17ին. Ա. 30 ֆ. Բ. 20. Գ. 10.

Պալիտին Թրիտ. Աւստրիական շոգ. Շիրայի ու Գորֆուի վրայէն, շաբաթ օր կէսօրէն ետքը կ'ելլայ, հինգշաբթի կը հասնի. Ա. 118 ֆիորին. Բ. 78. Գ. 58.

Պալիտին Մարտիլ, Գաղղ. շոգ. Բիրէոսի ու Մէսինայի վրայէն. երկուշաբթի կէսօրէն ետքը կ'ելլայ, երկրորդ երեքշաբթի կը հասնի. Իզմիրի, Մալթայի վրայէն՝ հինգշաբթի կ'ելլայ ու երկրորդ շաբաթ օրը կը հասնի. Ա. 420 ֆրանգ. Բ. 279. Գ. 186. Դ. 116. Մարտիլէն ալ Փարիշ շոգեկառքով 20 ժամու մէջ կ'երթցուի. Ա. 96 ֆրանգ. Բ. 72. Գ. 52. Փարիլէն ալ Լոնտոն 16 ժամու մէջ. Ա. 76 ֆրանգ. Բ. 55.

Պալիտին Վարնա. Գաղղ. շոգ. շաբաթ կ'ելլայ կէսօրէն ետքը ու կիրակի առտու կը հասնի: Վարնայէն կ'ելլէ չորեքշաբթի կէսօրէն ետքը ու հինգշաբթի կէսօրէն յառաջ Պալիտ

Մայիս 12 օր ճամբայ կ'ընէ.  
 Իսկ մինչեւ Պէյրուսթ ու շորեքշաբթի



Հորհրդ

կը հասնի: Աւստրիական շոգ. երկրաբաշխի ու շաքաթ կէսօրէն ետեւ կ'ելլէ. Ա. 22 ֆիորին. Բ. 17. Գ. 7 1/2

Պուլիսի Աիեննա՝ Թրիեսոսի վրայէն 7 օրուան մէջ կրնայ հասնուիլ Թրիեսոսէն շոգեկառք հեծնելով, որն որ օրը 3 անգամ կ'ելլայ եւ շուտ գացողը 10 ժամու մէջ Աիեննա կը հասնի. Ա. 34 ֆիորին. Բ. 23 1/2. կամաց քալողը 24 ժամու մէջ. Ա. 26 ֆիոր. Բ. 19 1/2. Գ. 13. Աս գիներուն վրայ Պոլսէն մինչեւ Թրիեսոս եղած գիները աւելցրնելու է՝ ամբողջը գտնելու համար: Պուլիսի Աիեննա Գանուբի կողմանէ գալով՝ շուտ քալողը կ'ելլայ չորեքշաբթի ու 9 օրուան մէջ կը հասնի. Ա. 130 ֆիոր. Բ. 90 1/2. իսկ կամաց քալողը 14 օրուան մէջ. Ա. 99 1/2. Բ. 71 1/2. Գ. 40 1/2. Աիեննայէն ալ Փարիզ շոգեկառքով 56 ժամու մէջ կ'երթցուի, Ա. 83 ֆիորին. Բ. 63.

Պուլիսի Տրուիզոն, Աւստրիական շոգ. երկուշաբթի կէսօրը կ'ելլայ ու կը հասնի հինգշաբթի առտու: Տրուիզոնէն կ'ելլայ կիրակի կէսօր. Ա. 51 ֆիորին. Բ. 35. Գ. 15 1/2

Իւշիւրէն Աղէսանգրի, Գաղղ. շոգ. երկու կիրակի մէյ մը կէսօրէն ետեւ. Ա. 250 Ֆրանգ. Բ. 187. Գ. 132. Գ. 72. Աւստրիական շոգ. ուղղակի երկու ուրբաթ մէյ մը. 68 ժամու մէջ. Ա. 68 ֆիորին. Բ. 46. իսկ Հռոմոսի վրայէն երկու երկուշաբթի մէյ մը կ'ելլէ:

Իւշիւրէն Թրիեսոս Շիրայի ու Գորֆուի վրայէն, Աւստ. շոգ. ուրբաթ կէսօրէն ետեւ կ'ելլայ ու հինգշաբթի կէսօրէն ետեւ կը հասնի. Ա. 100 ֆիորին. Բ. 76. Գ. 52. Գ. 27 1/2

Իւշիւրէն Պուլիս, Գաղղիական շոգ. հինգշաբթի կէսօրէն ետեւ կ'ելլայ. Ա. 90 Ֆրանգ. Բ. 54. Գ. 36. Գ. 22. Աւստրիական շոգ. երեքշաբթի եւ ուրբաթ կէսօրէն յառաջ կ'ելլայ ու հինգշաբթի եւ կիրակի առտու կը հասնի. Ա. 29 ֆիորին. Բ. 20. Գ. 9.

Գորիսուշաբթի

Գորիսուշաբթի օր

67. 20.



145

24

7

հիշում  
Երեւոյն



















